

4579

11 month

491.99-8  
S-46  
1894

1894

11/8/2002

491.99-8  
S - 46

Ն. ՏԵՐ-ՂԵՂՈՆԴԵԱՆ

# ՄԱՅՐԵՒԻ ԼԵԶՈՒ

ԵՐԿՐՈՐԴ ՏԱՐԻ

ԵՐԿՐՈՐԴ ԳԻՐՔ

ԸՆԹԵՐՑԱՆՈՒԹԵԱՆ

ՄԱՆՈՒԿՆԵՐԻ ՀԱՄԱՐ

Տասնեւերկուերրորդ տիպ

ԲԱԶՄԱԹԻԻ ՊԱՏԿԵՐՆԵՐՈՎ ԶԱՐԴԱՐԱԾ


(268)

Թ-ԻՖԼԻՍ

Տպարան Մովսէս Վարդանեանի

Տիգրաֆիա Մ. Բ: թանանց, Գանովսկալ յլ. ձ. № 3.

1894



БИБЛИОТЕКА  
ИНСТИТУТА  
ВОСТОКОВЕДЕНИЯ  
Академии Наук  
СССР

СУДР СЛАВР-958

# What Is a Good Book?

## ମୁଦ୍ରା ପରିବହନ

1000 1000 1000 1000 1000 1000 1000 1000 1000 1000

३८५४४६३८३१३७३९

Дозволено Цензурою, Тифлисъ, 15 Января 1894 г.



Յիսուսն օրչնումէ մանուկներին:

# ՄԱՅՐԵՆԻ ԼԵԶՈՒ

ԵՐԿՐՈՐԴ ՏԱՐԻ

## ՆԱԽԱԿՐԹԱԿԱՆ ՎԱՐԺՈՒԹԻՒՆԵՐ

### 1. ՀԱՅԵՐԵՆ ԱՅԱՀՈՒԹԵՆԸ

ա	Ա	Այր.
բ	Բ	Բեն.
գ	Գ	Գիմ.
դ	Դ	Դաշ.
ե	Ե	Եչ.
զ	Զ	Զաշ.
է	Է	Էւ.
ը	Ը	Ըլթ.
թ	Թ	Թո.
ժ	Ժ	Ժա.
խ	Խ	Խին.
ի	Ի	Ինչ.
լ	Լ	Լին.
իւ	ԻՒ	Ինչ.
ծ	Ծ	Ծաշ.
կ	Կ	Կեն.
հ	Հ	Հո.
ձ	Ձ	Ձաշ.
ղ	Ղ	Ղետ.
դ	Դ	Դաշ.
դղ	ԴՂ	Դղաշ.
դզ	ԴԶ	Դզաշ.
դղզ	ԴՂԶ	Դղզաշ.

մ	Մ	Մեն.
յ	Յ	Յի.
ն	Ն	Նու.
շ	Շ	Շա.
ռ	Ռ	Ռո.
չ	Չ	Չա.
պ	Պ	Պէտ.
օ	Օ	Օւ.
ս	Ս	Սէտ.
թ	Թ	Թին.
ը	Ը	Ըւէ.
ըւ	ԸՒ	Ըւնչ.
թի	ԹԻ	Թինչ.
զ	Զ	Զո.
օ	Օ	Օ.
ֆ	Ֆ	Ֆէտ.

թ. թան, թանիր, թաղ, թաղ, թարակ, թահ.  
պ. պան, պանիր, պատ, պաղ, պարապ, պահ.

պ. պայտ, պող, պետ, պար, պարտք, պօղ, պաս.  
փ. փայտ, փոս, փէտ, փառ, փառք, փող, փաս.

գ. գար, գարի, գող, գութ, գոյժ, գէս, գետ, գեր.  
կ. կար, կարի, կող, կուտ, կուժ, կէտ, կեր.

կ. կող, կար, կաշի, կամ, կաղ, կոնք, կոր, կոյր.  
ք. քող, քար, քաշի, քամ, քաղ, քունք, քոր, քոյր.

զ. զարդ, զուտ, զառ, զուր, զրահ.  
ս. սարդ, սուտ, սառ, սուր, սրահ.

դ. դուր, դար, դեղ; դաս, դա, դեղին, դև.  
տ. տուր, տար, տեղ, տաս, տայ, տեղին, տև.

տ. տուր, տաս, տաղ, տող, տեղ, տէր, տաք.  
թ. թուր, թաս, թաղ, թող, թեղ, թէր, թագ.

իւ. ոխ, օխ, մեխ, ախտ, կախ, ուխտ, սոխ, կախան.  
դ. ող, օղ, մեղ, աղտ, կաղ, ուղտ, սող, կաղին.


ծ. օձ, ձիր, ձաղ, ձոր, ձաւար, ձողակ, ցանձ, քուրձ.  
ծ. օծ, ծիր, ծակ, ծոր, ծարաւ, ծաղիկ, կայծ, կուրծ.

ծ. ծեծ, ծիծ, ծուծ, ծածուկ, աղած, ասած, այծ, կայծ.  
ց. ցեց, ցից, ցոյց, ցուցակ, աղաց, ասաց, այց, կաց.



36378-56





## ԿԱՐԴԱԼՈՒ ՅՈՒԹՈՒԱԾՆԵՐ

### ՇՐՋԱՆ ԱՌԱՋԻՆ

1. ՈՒՍՈՒՄՆԱՐԱՄՈՒՄ



Եղբայրն ուսումնարանից տուն եկաւ:

Փոքրիկ քոյրը հարցրեց նրան, թէ դուք ուսումնարանի մէջ ի՞նչ էք անում:

Եղբայրն էլ պատմեց, ինչոր ուսումնարանումը պատահում է:

Մեր դասատունը մի մեծ սենեակ է: Սենեակի մի կողմում դրած է սեղան և մի աթոռ, վարժապետի համար: Աշակերտների համար շարած են երկար նստարաններ: Վարժապետի մօտ, աշակերտների դիմացը, դրած է մի մեծ գրատախտակ: Գրատախտակի վրայ գրում են կաւիճով: Աշակերտներն իրանց առաջը դրած ունին քարետախտակներ: Քարետախտակների վրայ գրում են քարեգրչով: Վարժապետը սովորեցնում է: Աշակերտները սովորում են: Վարժապետը դաս է հարցնում: Աշակերտները պատասխանում են: Աշակերտներից ոմանք գրում են, միւները կարդում են, իսկ միքանիսը նկարում են:

Ձեր դասատանն էլ միեւնոյն քա՞նն է պատահում, պատմեցէք:

### 2. ԱՅԲԱԲԵՆԱՐԱՆ



» Փոքրիկ մանուկ էի, տեսնում էի, որ հայրս, գիր կարդալին, ակնոց էր դնում աչքերին: Մի օր ես խնդրեցի, որ ինձ համար էլ ակնոց առնի: «Ես էլ քեզ պէս ուզում եմ կարդալ», ասացի: Միւս օրը հայրս բերեց ինձ համար մի պատկերազարդ գիրք: Սա հայերէն այբբենարան էր: «Ահա սա է քո ակնոցը, որդի», ասաց հայրս: Այնուչետև մայրս ինձ կարդալգրել սովորեցրեց:

3. ԿԱՐԴԱԼ-ԳՐԵԼ  
Երբ որ լեզուս բացուեցաւ,  
Ազատ խօսիլ սովորեցայ,  
Բարի մօրս ձեռքի տակ  
Գրել-կարդալն սկսայ:

Շատ ժամանակ շանկացած  
Այխա գիր կարդալը  
Անպէս դժուար չէր թըւում,  
Ինչպէս կասեն ծոյլերը:

Այնուհետեւ ինձ համար  
Հոլ—վէզի, գնդակի շափ  
Սիրելի են թուղթ, գրեւ,  
Գիռք, քանոն, մատիտ, տետրակ:



4. ՄՐՁԻՒՆԸ ԵՒ ԱՂԱԽԻՆԻՆ

րջիւնը մօտ գնաց առուակին, որ ջուր  
խմէ: Զրի ալիքը ներս քաշեց նրան  
եզերքից: Մրջիւնը խեղդումէր: Աղաւ-  
նին օգնութեան հասաւ. նա մի չոր տերև առաւ՝  
գցեց մրջիւնի առաջ: Մրջիւնը վեր բարձրացաւ  
տերևի վրայ և խեղդուելուց ազատուեցաւ:

Զանցաւ երկար ժամանակ: Որսորդը՝ հրա-  
ցանը ձեռին, մօտեցաւ առուակին: Աղաւնին  
անհոգ նստած էր ծառի վրայ: Որսորդը հրա-  
ցանի բերանն ուղեց դէպի նա: Մրջիւնը մօտ  
վազեց և կծեց որսորդի ձեռքը: Որսորդը ցըն-  
ցուեցաւ. հրացանը տրաքեց, բայց չդիպաւ ա-  
զաւնուն: Աղաւնին թռաւ, ազատուեցաւ:

5. ՃՆՃՂՈՒԿՆԵՐ

Կտուրը ցորեն ցանեցի՝ չորցնելու համար.  
Ճընճղուկներ թռան եկան՝ ուտելու համար.  
Քար վեր կալայ խփեցի՝ սպանելու համար.

Այ ճընճղուկիկ,  
Կարմիր տոտիկ,  
Սպիտակ փորիկ,  
Ուտեն կուտիկ,

Խմնն ջըրիկ,  
Առուի եզրիկ,  
Պըստիկ-մըստիկ,  
Փախչեն-երթան՝ ման գալու համար:



6. ՊԱՐԱԽԻՆ ՈՒ ՀԱԽԸ

աւը օրական մի ձու էր ածում պա-  
ռաւափ համար: Բայց պառաւն ազահ էր. նա  
մտածեց, որ եթէ շատ կուտ տայ, հաւը մի  
ձուի փոխանակ երկուար կամ երեքը կ'ածի  
օրական: Մտածեց ու կատարեց: Հաւը սաս-  
տիկ պարարտացաւ և էլ ձու չածեց:



7. ԱՔԱՂԱՂՆ ՈՒ ՀԱԽԸ

ուրուղո՞ւ, սա՞նամէր,  
Էն մէկ հաւ կար, ո՞ւր զնաց:  
— ծարաւ-աղքիւր կուլ զնաց:  
«Ի՞նչ կար կըսուց:»  
— Զիր ու չամիչ:  
«Ո՞ւր էր տանում:»  
— Հարս ու փեսին:  
«Հարսն ո՞ւր էր նստել:»  
— Ուկէ թախտին:  
«Ի՞նչ էր եփում:»  
— Կորկոտ:

«Ո՞վ է բերել»:

—Քաշալ Ակոր:

«Ո՞վ է հարել»:

—Աղա Սուլթան:

«Ո՞ր է դրել»:

—Բաց պատուհան:

«Ո՞վ է կերել»:

—Կարայ \*) փիշիկ:

«Վայ կարայ փիշիկ, վայ կարայ փիշիկ,  
քո մէջն ուտի չո թօշիկ»:

8. ԱԳԻՒԱԽՆ ՈՒ ԱՇԱԽՆԽՆ



գուաւը տեսաւ, որ աղաւնիներին  
լաւ են կերակրում, ուզեց ինքն էլ  
աղաւնի ձեւանալ. սպիտակ փոշի  
ցանեց վրան և մտաւ աղաւնետուն:  
Աղաւնիները կարծեցին, թէ սա էլ իրանցից է,  
ներս ընդունեցին: Բայց ագուաւը մոռացմամբ  
կուաւեց իւր ձեռվ: Աղաւնիները կտցահարեցին և դուրս խոկեցին: Ագուաւը վերադարձաւ  
իւր ընկերների մօտ, բայց սրանք էլ չընդունեցին նրան, որովհետև գունափոխուել էր:

\*) Կարայ—սև, փիշիկ—կատու.

ԿՐՈՒԽԿՆԵՐ

Կրու-կրու-կրուկոան  
Կրուուկները հաւ թրոան.  
Կրուուկների թեւի տակ  
Եկաւ ամառ մեր դրոան.

Ժողովրդական



9. ԻՄ ՈՒՍՈՒՄՆԱՐԱՆ ԳՆԱԼԸ

Եպտեմբեր ամիսն էր: Հայրս ասաց, որ ինձ  
պէտք է ուսումնարան տանեն: Ես շատ ուրա-  
խացայ. վաղուց ուզում էի ուսումնարան գնալ:  
Հայրս: Ինձ համար մի պայուսակ գնեց: Ես  
նրա մէջ դասաւորեցի հարկաւոր առարկաները: Մենք ուզու-  
րուեցանք: Ես ուսումնարան չէի տեսած: Սիրոս թնդում էր:  
Ութը ժամին մենք հասանք մի մեծ շինութեան և բագի գըռ-  
նից ներս մտանք: Բագում շատ մանուկներ կային. ոմանք  
խաղում էին արձակ-համարձակ, ոմանք էլ գլխակոր կանգնած  
էին իրանց ծնողաց հետ: Մենք ներս մտանք ուսուցիչների  
սենեակը: Ես երկիւղի մէջ էի. բոլորը նոր մարդիկ էին, ոչ  
մէկին չէի ճանաչում: Ուսուցիչների գլխաւորը—տեսուչը նկա-  
տեց իմ շփոթմունքը, մօտ եկաւ, փայփայեց ինձ: Ես սրտա-  
պնդուեցայ: Յետոյ ինձ քննեցին և ընդունեցին աւագ նախա-  
կրթարանը:

10. ՏԵՂՈՒԻՐ ԵՐԵՆԱՅՑ

Երբոր ծագեցաւ պայծառ արեղակ,  
Աքլար, աղաւնի, հաւ ու ծիծեռնակ,  
Չի, ոչսար, գառնուկ, այծ, ուլ, հորթ ու կուկ  
Գընացին իրանց գործին շտապով:  
Միայն ծոյլ տպան չըգնաց դպրոց,  
Գիրքը շըպրտեց ու փախաւ փողոց.  
Իրիկուն ամենք յետ գարձան ուրախ,  
Միայն տըղան էր տրտում, գլխակախ:

11. ԱՇՈԹՔ ԵՒ ԱՇԽԱՑԱՆՔ

 ոյլ աշակերտը հարցրեց զանասէրին. «Թու ինչ եւր  
անում, որ միշտ դասերդ լաւ ես իմանում»:  
—Ազօթում եմ, պատասխանեց զանասէրը:  
«Ես էլ կաղօթեմ», մտածեց ծոյլը և այն գիշեր, քնելուց  
առաջ, ազօթք կարդաց, բայց միս օրը գարձեալ գասը չգիտէր:  
«Ես գարձեալ դասո չգիտեմ», ասաց նա ընկերին. «Քայլ  
դու ասում էիր, որ եթէ ազօթք անեմ, կ'իմանամ»:  
—Արդեօք դու ազօթելուց առաջ սովորնմ ես դասերդ,  
հարցրեց զանասէրը:


«Ո՞չ, պատասխանեց ծոյլը:

—Եթէ այդպէս է, դու երբէք դաս չես իմանալ. Նախ  
պէտք է սովորել, ապա ազօթել. դու ինքդ <sup>առօգնիր</sup> քեզ, որ  
Ասաւած էլ օգնէ:

12. ՀԶՕՐ ԾԱՐ

Երբ իս ծընողքս կամ ես եմ տըկար,  
Եւ կամ հանդիսի մի այլ պատահար,

Երբոր աշխարհի մէջ կայ ցաւ կամ սով,  
Երբոր մարդիկ են իրար հետ խըռով,—  
Այս ամեն շարին ունիմ ես մի ծար,  
Այդ իմ աղօթքն է ամենի համար:



13. ԱՌԱՀՈՑԵԱՆ ՃԱՌԱԹԱՅԹՆԵՐԸ

այծառ արեկը բարձրացաւ երկները և տարա-  
ծեց դէպի ամենայն կողմեր իր ռսկեփայլ ճա-  
ռագայթները, որ արթեացնէ քնած երկիրը:  
Առաջին ճառագայթը թռաւ, արտուտի վրայ ընկաւ: Ար-  
տոյտը թըրալը թափ տուեց թեկերը, գուրս թռաւ ընից,  
շատ ու շատ բարձրացաւ և երգեց իր գեղեցիկ երգը: Ա՛խ,  
ինչքան լաւ է առաւտեան պարզ և թարմ օդի մէջ թռչիլը,  
ինչքան լաւ է, որքան գուրեկան:

Երկրորդ ճառագայթը նապաստակի վրայ ընկաւ: Նա-  
պաստակը ականջները շարժեց և ուրախ-ուրախ թռչկոտաց  
դէպի ցօլապատ մարդագետինները. Վաղեց գնաց նախաճաշիկ  
անելու հիւթալի խոտերով:

Երրորդ ճառագայթը հաւաբունը մտաւ: Աքազազը թա-  
փահարեց թեկերը և երգեց՝ ծուլ-լըրն-ոմւ: Հաւերը ցած եկան  
թառերից, կրկուացին, սկսեցին քջջել աղբը և ճիճուներ  
որոնել:

Չորրորդ ճառագայթը փեթակի վրայ ընկաւ: Մեղուն  
գուրս սաղաց իր մոմեղին խցից, կանգնեց փեթակի գուան  
առաջ, ուղղեց իւր թեկերը և բզզալով թռաւ գնաց մեղը հա-  
ւաբելու հոտաւէտ ծաղիներից:

Հինգերորդ ճառագայթը մտաւ մանկանոց և ընկաւ փոք-  
րիկ ծոյլ մանուկի անկողնու վրայ ու սկսեց սովորակի նրա աշ-  
քերը ծակծել. բայց նա շուռ եկաւ միս կողքի վրայ և նո-  
րից քնեց:



14. ՀՐԱՀԵՐ

աւը խօսեցաւ, օրը բացուեցաւ,

Արևն էլ վաղուց ելաւ, բարձրացաւ.

Խելօք մանուկներ, շնտ հագնուեցէք,

Շուտով դասատուն դուք հաւաքուեցէք:

Մարդ և անասուն, գաղան և թռչուն,

Ամենքն էլ իրանց գործին են գնում.

Մրջինը բերնով կերակուր տանում,

Մեղուն ծաղկիցը հիւթեր է ծծում:

Դաշտը գոյնզգոյն ծաղկով զարդարուած,

Մարգագետինը կանաչ հագնուած.

Անտառն ձմեռուայ քնից արթնացած,

Դուր տերենները շարժում է կամաց:

Զկնողմներն իրանց ուռկանն են քաշում,

Հնձողմներն իրանց մանգաղը շարժում. . .


Դուք էլ, մանուկներ, ձեր գրքերն առէք.

Աստուծ ծուլութիւն չէ սիրում երբէք:

15. ԱՄԵՆ ԲԱՆ ԻՐԱՆ ՏԵՂԸ

**Հ**այկը ծոյլ տղայ չէր, բայց կարգ ու կանոն չէր սիրում: Երեկոյեան, դասերը սովորելուց յետոյ, նա իր գրքերն ու տետրակները թողում էր թափթափած ու ցրիւ տուած.

առաւօտներն էլ, երբոր վեր էր կենում, Ժամերով որոնում էր իւր շորերը կամ ոտնամանները: Ամենայն առաւօտ Հայկն այս ու այն կողմն էր ընկնում և միշտ դասից ուշանումէր:



16. ՕՉԻ ԳԼՈՒԽՆ ՈՒ ՊՈՉԸ

Ի անգամ օձի պոչը վիճեց գլխի չետ, թէ իրանցից որը պէտք է առաջից գնայ: Գլուխն ասաց. «Ականջներ ու աչքեր չ'ունիմ, բայց ոյժ ունիմ, և ես եմ քեզ շարժողն ու ման ածողը: Եթէ կամենամ, կը փաթաթուիմ ծառի շուրջը և դու մի քայլ անել չես կարող»: Գլուխն ասաց. «Ուրեմն բաժանուինք»: Եւ բաժանուեցան:

Պոչը պոկ եկաւ գլխից և սկսեց առաջ սողալ. բայց չենց մի փոքր չեռացաւ թէ չէ ընկաւ մի ձեղքի մէջ և էլ չկարողացաւ դուրս գալ ու սատկեցաւ:

Ով որ փքանայ, շուտով չքանայ:



36378-66

17. ՀԱՆԵԼՈՒԿԱԲՐ



չքեր ունի, ոտքեր չունի,  
Մարդ կըսպանէ, ձեռքեր չունի,  
Չու է ածում, փետուր չունի,  
Շապիկ ունի, որ կար չունի:

—

Չորս ոտք ունիմ՝ կարծ ու կոկիկ,  
Գլուխ ունիմ՝ ինչպէս գորտիկ.  
Մարդ տեսնելիս սիրու է դողում,  
Ոտք ու գլուխս չի երեւում:

18. ՎԱՐԴԵՆԻՆ ՈՒ ՓՈՒՇԸ

Վարդենին ու փուշը բուսել էին միատեղ:  
Մի օր փուշն ասաց իր գեղեցիկ հարևանին.  
«Բարեկամ, ես զարմանում եմ քո համբերութեանդ։ չգիտեմ ինչո՞ւ չես պատժում քո փշերով այն մեղուներին, որոնք այնպէս տղտղալով չոտդ ու հիւթդ ծծում են»։

— Ինչո՞ւ պատժեմ, համեստութիւնով պատասխանեց վարդենին. չէ՞ որ իմ հիւթից նըրանք մեղք են պատրաստում։

19. ՀԱՆԵԼՈՒԿԱԲՐ

Նեղ ու մութ տուն,  
Սատանէն մէջը քուն:

Թուշուն մի կար սեւ ու սպիտակ,  
Կ'ելնէր ի ծառ, կ'իջնէր ի տակ։

20. ՄԵՂՈՒԻ



Հեսց որ գեղեցիկ գարնան հետ երևեցան  
առաջին ծաղիկները, իսկոյն մեղուն էլ դուրս  
եկաւ իւր հոտաւէտ խրճիթից։ Նա գնաց, նստեց  
անուշաչոտ ծաղիկների վերայ և սկսեց հարց  
ու փորձ անել, թէ արդեօք շուտով կըկանա-  
չեն մարգագետինները, ե՞րբ կըբացուին ծառերի  
կոկոնները և շուտ կըծաղկէ արդեօք հոտա-  
ռատ յասմիկը։

21. ՀԱՆԵԼՈՒԿ



Հ ցորեն եմ, ոչ զարի,  
Որ հողագործն ինձ ցանի.  
Առանց ջրի հունցած եմ,  
Առանց ձեռքի կոլորած,  
Ես անկրակ թըխած եմ,  
Թոնիր, ջաղաց տեսած չեմ,  
Զեր ամննիդ սիրածն եմ։

22. ԼԱԻ ԸՆԿԵՐ



արդիկ վեր առան և կակաչի հասարակ  
ծաղիկը շահոքրամի հետ մի ծաղկամանում  
տնկեցին։ Մի քանի ժամանակից յետոյ կակա-  
չիցն էլ շահոքրամի հոտ էր գալիս։

Լաւ ընկերի հետ որ ապրենք, մենք էլ շատ  
բան կը վաստակենք։



### 23. ՄԱՍՆԻՇԱԿ

նո՞ւր է ծիծեռ, ղեռ ո՞ւր է սոխակ,  
Գարնան կարապետ եկաւ մանուշակ.  
Երկնային խոննկը չորս կողմին պուրեց,  
Նորածին աշխարհ նախ նա համբուրեց:

Երկինքն է անամզ, շողովուն արեւ,  
Տանք մասուցակին, ե՛րեխայք, բարեւ,  
Որ մեր դաշտերին պերեց նոր գարուն,  
Նախշուն հաւերով, ծաղկով գարդարուն:

## 24. Ո՞Վ Է ՔԻԹԸ ՑԻՑ ՊԱՀՈՒՄ

Որպին ասաց հօրը. «Հայրիկ, ինչի՞ մի քանի հասկեր կըռացել են մինչև գետին, իսկ միւսները դէպի վեր են ցըցուել:

—Ի՞նչ հասկ որ լիքն է, կուանում է դէպի գետին. իսկ  
որն որ դատարկ է, զլուխը վեր է պահում:

25. *Urho*



ախշո՞ւն արել,  
չազայի՞ն բարել.

Այս ո՞ւր էիր շա՞տ-շա՞տ օրեր  
Ամպերի տակ մնել, կորել.  
Մի՞թէ դու էլ, յամա՞ն մանուկ,  
Գիտես պահուիլ այդպէս զաղոսով  
Հերիք, ա՛րեւ, մեզ խոռվես,  
Էլ ըսփախչիս, նոզիդ սիրես:

26. *USUHOU*

 ոքրիկ հովիւը ոշխարներ էր պահում։ Մի անգամ  
նա մտքումը՝ դրեց խարել իւր ընկերներին և սկսեց  
բարձր ձայնով կանչել. «Քայլը, գայլը, օդնեցիք»։ Մարդիկ  
մօտ վազեցին և տեսան, որ խարուել են։ Սյսպէս արեց նա մի  
քանի անգամ։ Բայց մի անգամ էլ գայլն իսկապէս ընկաւ հօտի  
մէջ։ Փոքրիկ հովիւը սրտապատառ սկսեց օդնութեան կանչել։  
Մարդիկ լսեցին նրա ձայնը, բայց տեղիներիցը չարժուեցան.  
Նրանք կարծեցին, թէ այս անգամ էլ սուտ է ասում նա։  
Գայլն էլ, տեսնելով՝ որ տէր ու տիրական չկայ, սկսեց լսել  
դուժել ոչխարներին։

Սուստ ասողի տունը կը բակ ընկաւ, ոչ ոք չնաւատաց:

## 27. ՀՈՒՄՈՒԼ ԵՒ ԱՐԵՒԼ

Ա րի՛, իմ՝ քոյթիկ, լոյս տուր գիշերը,  
Թէ ամաչումն ողուրս զալ պարզ օրը»:  
— Ո՞չ, վախենումն ես, լուսին եղբայր,  
Գիշերը շրջել մարդկանցը լոյս տալ:  
«Ճերեկը շրջե՛ռ, կըտամ՝ ասեղ քեզ,  
Որ մարդ կընայի, աչքերը կ'ածն»:  
Ան օրից արդէն աննման քոյթը  
Տալիս է երկրին տաք, փայլուն օրեր.  
Իսկ գիշելները աստղեր անհամար  
Լուսին եղբօր հետ փայլումն պայծառ:

28. ՀԱՆԵԼՈՒԿՆԵՐ

ա. Քոյր ու եղբայր մէկ տեղում իրար յետեւից վազում են, բայց միմեանց չեն հասնում:

բ. Խալիչայ ունիմ, թափ տալ չի լինիւ. Ոսկի ունիմ, համրել չի լինիւ:

29. ՆԱՊԱՍՏԱԿԼ ԵՒ ՈՉՆԻՆ

 պիտակ ու քերոյշ նապաստակը ողնուն ասաց. «Եղբայր, ի՞նչ ծակծըլկող ու տգեղ պկեստ ունիս»:

—ծմարիտ է, պատասխանեց ողնին, բայց իմ ծակծըլկող փշերն ինձ աղատում են շան և գայլի ատամներից. նոյն ծառայութիւնն անում է քեղ քո գեղեցիկ մուշտակը:

30. ՀԱՆԵԼՈՒԿ

Չուտ քելից չէ՝ հիւտում է,  
Մ'էջը նստած՝ սպասում է.  
Թշնամի չէ՝ որտում է,  
Լաւ ծրծում է, մարտում է:

31. Փ Ի Ղ

 Ի հոգացի մէկ փիղ ունէր. Տէրը նրան վատ էր կերակրում և ստիպում էր, որ շարունակ բան անի. Մի անգամ փիղը բարկացաւ և իւր տիրոջը ոտնատակ տուեց՝ սպանեց. Հոգկացու կինը, արտասուքն աշքերին, բերեց իւր որբ մնացած զաւակները և դցեց փղի ոտների տակ. «Փիղ,




դու սպանեցիր հօրը, սրանց էլ սպանիր», ասաց: Փիղը նայեց մանսուկներին, յետոյ կնճիթով վերցրեց ամենից մեծին, զգուշութեամբ նստացրեց պարանոցի վրայ և այնուհետև սկսեց հնազանդիլ նրան և գործել նրա համար:

32. ՀԱՆԵԼՈՒԿ

Ես շարժում եմ անդադար,  
Ոչ անիւ եմ, ոչ էլ լար,  
Սարեր, լեռներ դղրդում,  
Համ շինում եմ, համ քանդում.  
Ամենքիցը ես գորեղ,  
Բայց փակուած եմ վանդակում:

### 33. ԱՌԻՒԽԾՈՒՅԹ, ԱՐՔԸ ԵՒ ԱՀԱԽԵՎՈՒՅԹ

**Ա**ռիւծն ու արջը մի կտոր միս գտան և սկսեցին կռիւ  
տալ, թէ որին պիտի հասնի նա: Ոչ մէկը չէր ուզում  
բաժին տալ միւսին: Կռուեցին-կռուեցին և երկուն էլ յովնած  
պառկեցան մոի այս ու այն կողմք: Ազուէսը նկատեց այդ, մօս  
վաղեց կամացուկ, ոխեց ու փախզրեց:



### 34. ՀՐԱՀԵՐ ԳԱՐԵՎԱՆ

Արի՛, զարուն,  
Արի՛, սիրուն,  
Բե՛ր պարզ արեւ,  
Առայտ անձրեւ,  
Խնդրէ՛ Տերէն  
Հաճար, ցորեն.

Դաստիք, պարա.  
Դմեռն էր մեծ,  
Ողջ սպահեց.  
Ամբար, մասուն  
Դատարկ դառան:

### 35. ԱՐԻՒԹԸՆ ԵՒ ԳՈՐԾՈՒ



 ոխւծը լսեց գորտի կրկռոցը և վախեցաւ: «Երեկ  
այս գոռացողը մեծ զազան պէտք է լինի հա», մտա-  
ծեց առիւծը և պատրաստուեցաւ կոխ մղելու: Այդ միջոցին  
ճահճի միջից գուրս ցատկեց գորտը: Առիւծը զարդեց նրան  
իւր ուժեղ թաթով: «Այսուհետեւ բանը չտեսած՝ չպէտք է վա-  
խենամ», մտածեց նա:

36. ԳԱՐՈՒԹՅՈՒՆ և միա քառականգական պահանջություն



արուն սիրուն ու նախշուն  
թերեց մեր տուն թիւր ողջոյն.  
Սոխակն ունէր իւր գրկին,  
Վարդն ունէր իւր սըրտին,  
  
Արօս դալար՝ ուաերին,  
Սարեակ, ծիծառ՝ զղներին,  
Յստակ աղքիւր, պարզ առուակ,  
Հազար ու թիւր սար, ձորակ,  
Հովիտ, անտառ, դաշտ եւ մարզ  
Ճուր ցանէին սառնորսակ:

### 37. ՈՅԺՆԻ ԻՐԱՀՈՒՅՔ ԶԼ

**Փ**ոքրիկ Սաթինիկը զնաց այսին, նստեց ծառի տակը  
և սկսեց տիկինի խաղալ. Նրա եղբայր Մկրտիչը  
ներս վագեց այսին, Սաթինիկի ձեռքից տիկինը խլեց, հեծաւ.

իւր փայտէ ձին և սկսեց չափ դցել այգու մէջ։ Սաթինիկը  
կանգնած լաց էր լինում։

Մկրտչի մեծ եղբայր Վահանը կամեցաւ ինքը խաղալ. նա  
խլեց Մկրտչի ձեռքից տիկինն էլ, ձին էլ։ Մկրտիչը գնաց,  
գանգատուեցաւ հօրը. իսկ հայրը, լուսամուտի առաջ նստած,  
բոլորը տեսել էր։

Ի՞նչ կ'ասէր հայրը Մկրտչին։

### 38. ՍՈՒՐԲ ԿԱՐԱՊԵՏ

**Ո**ւրբ Կարապետ բարձր է բոլոր,  
Ճամպէք ունի ոլոր-մոլոր,  
Կերթայ կըդայ շատ ուխտաւոր՝  
Թէ ձիաւոր, թէ ոտաւոր,  
Մուրազ կըտայ ոտաւորին,  
Զուղաբ կըտայ ձիաւորին։

### 39. ՄԱՆԿԱԿԱՆ ԽԱՂ

#### Պ Ա. Ռ Ա. Ի Ը

**Ո**ւրծու, ջու-ջու, իմ վառիկներ,  
Սիրուն ճուտեր, հաւ մարիկներ,  
Ոսկեփետուր աքլարիկներ,  
Եկէք կերէք ձեր հատիկներ։

#### Մ Ա. Ն Ո Ւ Կ Ն Ե Ր

Արամ, Աշխէն, Վարդան, Խորէն,  
Սանդուխտ, Շուշան, Հայկակ, Սուրէն,  
Գնանք տեսնենք հաւերն ուր են։

Տեսէք, տեսէք, չալ-չալ հաւեր  
Հեռու քաշուել, կուտեն որդեր.  
Այնտեղ փոքրիկ, փամփիկ, թմբիկ,  
Պղտիկ ճուտիկ կուտէ կուտիկ։

Զար փիշիկը մօտ է գալիս,  
Սեւ ձագին է մտիկ տալիս.  
Թաթը մեկնեց,  
Վզից բռնեց։

Աքաղաղներ, հաւ-մարիկներ,  
Պահպանեցէք ձեր ճուտիկներ։

#### Ա. Ք Ա. Ղ Ա. Ղ Ն Ե Ր

Հասէք, հասէք, օրհեցէք,  
Զար փիշիկն պատժեցէք։

#### Հ Ա. Ի Ե Ր


Ժողովուինք, միանանք,  
Զար կատուին վրայ տանք։

#### Բ Ո Լ Ո Ր Ը


Տեսաք, տեսաք, ի՞նչ եղաւ.  
Գող կատուն որ մեզ տեսաւ,  
Խիստ վախեցաւ ու վախաւ.  
Ուրեմն ապրենք միասին,  
Որ մօտ չգայ թշնամին։



«Եկէք, եղբարք, շուրջ պատենք,  
Մեր մօր վիշտը փարատենք»:



## ՇՐՋԱՆ ԵՐԿՐՈՐԴ

40. Պ Ա Պ Հ  
  
 սպլ սաստիկ ծերացել էր: Նրա աչքերը լաւ  
 չէին տեսնում, ականջները ծանրացել էին.  
 Նրա ձեռներն ու ոտները ծերութիւնից դող-  
 լողում էին, այնպէս որ գգալը բերանը տանելիս, կերակուրը  
 կաթկաթացնում էր:  
 Սյս բանը դուք չէր զալիս նրա որդուն ու հարսին:  
 Նրանիք ծերին իրանց հետ միևնույն սեղանի վրայ չէին նստա-  
 ցնում, այլ մի անկիւնում առանձին տեղ էին տալիս հաց ու-  
 տելու: Մի անգամ, հաց ուտելիս, ծերի ձեռները դողովա-  
 ցին, ամանը վայր ընկաւ, կոտրուեցաւ: Շատ սաստիկ բար-  
 կացան հարան ու որդին խեղճ ծերի վրայ և այնուհետև փայտէ  
 ամանով էին կերակուր տալիս նրան:

Ծեր մարդը մի թոռն ունէր: Մի անգամ մանուկը նըս-  
 տած էր յատակի վրայ և տաշեղներից մի բան էր շնում:  
 Մայրը հարցրեց նրան: «Ի՞նչ ես շնում, որդի»:  
 —Ես փայտէ աման եմ շնում, որ երբ գու և հայրիկս  
 ծերանաք, նրանով կերակուր ուտացնեմ ձեզ:  
 Հայրն ու մայրը նայեցան միմեանց երեսի և ամօթից

կարմրեցան։ Նրանք այսուհետև սկսեցին ծերին շատ պատուով պահել։

Պատուիր ծերին, որ ծերանաս։ ծերանաս՝ ծերի պատիւն կ'իմանաս։



#### 41. ՄԵՐ ՀՆՑԱՆԻՔԸ

Եր ընտանիքը մեծ չէ։ Ես ունիմ հայր և մայր, երկու եղբայր և երկու քոյր։ Ես ամենից մեծն եմ։ Մենք ունինք էլի մի պառաւ տատ։ Նա շատ սակաւ է տանից դուրս գալիս, այն էլ ժամ է գնում։ Նա մեզ շատ է սիրում և փայփայում է։

Իմ հայրը շատ է աշխատում։ Նրա աշխատանքն ենք կերակրուում և հագնուում ամենք։  
— «Մենք առանց նրան ինչպէս կարող ենք ապրել», ասում է շատ անգամ մայր։

Մայրս տնտեսութիւնն է անում։ Նա հրամայում է ճաշ և ընթրիք պատրաստել։ Նա գնում է ներքնատունը և մասնը։ Բայց որ իմանաս, թէ ես ինչպէս սիրում եմ նրա հետ մասան գնալ։ Սմբոզ օրը մայրս մեզ համար հոգում և շորեր է կարում։ Նա սովորեցնում է մեզ խաչակիքել և աղօթել։ Մենք երեկոները, քնիլուց առաջ, միշտ աղօթում ենք։

Ես մէկ փոքրիկ քոյր էլ ունեի, բայց նրան տարան գերեզմանատուն և դրեցին կանաչ բլրակի տակ։ Մայրս մինչեւ այսօր էլ լաց է լինում փոքրիկ Մանուշակի վրայ։

42. ԶԱՒԱԿՆԵՐԻ ՄԻԼԻԹԱՐԱՆՔԸ

«Եկէք, եղբարք, շուրջ պատենք,  
Մեր մօր վիշտը փարատենք»։

Մատղաշ տղայք ցատկելով

Մօր չորս կողմը կտրեցին,

կէս վշտագին, կէս ուրախ

Աղաղեցին, խընդրեցին։

— Մայրիկ — մայրիկ, քանի՛ լսա,

Մինչ երբ տանջուիս, հառաչես։

Մանուշակը վատ տեղ չէ,

Հերիք սիրտը մորմնեես։

Երբ մեր քոյրը մեզ թողեց,

Մենք ճիչ բարձինք լալագին։

Մայրիկ, դու այս խօսքերով

Վախճան գրիր մեր լացին։

«Երկնքումը մեզնից լաւ

Հրեշտակները ձեր քրոջ

Փայլայանքով մէր կըտան,

Սէր, օրհնութիւն մեր Տիրոջ»։

«Ինչպէս անմեղ թիթեռնիկն

Ծաղկանց մէջ է սստաստում,

Որպէս աստղիկն երկնքի

Պարող գիշերին է փայլում,

Այնպէս հոգին ձեր քրոջ

Աստուածաբնակ դրախտի մէջ

Հրեշտակներին հաւասար

Պիտի գըտնէ ել եւ էջ»։

Մայրիկ — մայրիկ, նոյն խօսքերն  
Լսիր մեզնից սրտաբաց.  
Երջանիկ է Մանուշակն,  
Սըրբիր աչերդ, ուրախ կաց:

43. ՈՐԲԻ ՕՐԸ ՍԵԽՆՀ

 Խլողայոսը գնաց իրանց հարևանի տուն և տեսաւ, որ  
այստեղ սաստիկ անկարգութիւն է տիրուած. երեխայքը  
կեղտոտ, շորերը սկատառոտած, մազերը պղղուած և չսահրած:  
Փոքրերը վեր էին թափած կերպոտ յատակի վրայ, ուրիշ եր-  
կուսն էլ կուռում էին, իսկ ամենից մեծը հիւանդ պառկած էր  
և ոչ ոք չկար, որ նրան նայէր, խնամք տանէր: Այս ամենը  
տեսնելով, Նիկողայոսը միտքը բերեց, որ իւր հարևանի կինը  
մօտ օրերում վախճանուել է և, մտածելով թէ ինչ դրութեան  
մէջ կըլինի ինքը, եթէ իւր մայրը չլինի, վագեց իրանց տուն  
և փաթաթուեցաւ իւր ծնողի պարանոցով:

44. ՕՐՕՐՈՅԻ ԵՐԳ

Արի, իմ սոխակ, թող պարտէղ, մէրին,  
Տաղերով քուն բեր տըղիս աչերին.  
Բայց նա լալիս է. դու, սոխակ, մի գալ,  
Իմ որդին չուզէ տիրացու դառնալ:  
  
Ե՛կ, աբեղաձագ, թող արտ ու արօտ,  
Օրօրէ տըղիս, քընի է կարօտ.  
Բայց նա լալիս է. դու, ձագուկ, մի գալ,  
Իմ որդին չուզէ աբեղայ դառնալ:  
  
Թող դու, տատրակիկ, քո ձագն ու բունը,  
Վուզույով... տըղիս բեր անուշ քունը.  
Բայց նա լալիս է. տատրակիկ, մի գալ,  
Իմ որդին չուզէ սըգաւոր դառնալ:

Կաչաղակ ճարպիկ, գող, արծաթասէր,  
Շահի զրուցով որդուս քունը բեր,  
Բայց նա լալիս է, կաչաղակ մի գալ,  
Իմ որդին չուզէ սովորագար դառնալ:

Թող որսըդ, արի, քաջասիրտ բազէ,  
Քո երգը գուցէ իմ որդին կ'ուզէ:  
Բազէն որ եկաւ, որդիս լոռեցաւ,  
Ուազմի երգերի ձայնով քընեցաւ:

45. ՀԻՆԴԵՐՈՐԴԻ ՊԱՑՈՒԻՌԱՆՔ

Պատուիր քո հօրը և մօրը, որ քեզ բարի լինի և որ  
երկայնակեաց լինիս երկրի վրայ:

46. ՀՐԱՇԱԼԻ ԽՈՑ

 Երկու աղախին, Աննան և Կատարինէն, քաղաք էին  
գնում: Նրանցից ամեն մինը մի կողով խնձոր էր տա-  
նում: Աննան շարունակ տրտնջում էր ու հառաչում. իսկ Կա-  
տարինէն ծիծաղում ու կատակներ էր անում:

— Ի՞նչ է պատճառը, որ դու այդպէս ուրախ-ուրախ ծի-  
ծաղում ես, հարցրեց վերջապէս Աննան. չէ որ քո կողովդ էլ  
իմիս պէս ծանը է և դու էլ ինձանից ուժեղ չես:

«Ճշմարիտ ես ասում, պատասխանեց Կատարինէն. բայց  
ես իմ կողովումս մի այնպիսի խոտ եմ դրել. որից ամենայն  
բեռն էլ թեթեւանում է»:

Միթէ: Այդ ինչպիսի խոտ է և ուժեղից ես ճարել,  
հարցրեց Աննան զարմացած:

«Որտեղից ճարելլ ես էլ չգիտեմ, պատասխանեց Կատա-  
րինէն. միայն անունը կարող եմ ասել. սա կոչւում է համ-  
բերութիւն, որից դու զուրկ ես, սիրելի Աննա»:



47. ԳԱՐՆԱՆ ԿԱՐԱՊԵՏ

Մարտըն անցաւ, հասաւ ապօթիւ գեղեցիկ,  
Հեռու աշխարհից եկաւ ծիծեռնիկ.  
Բարո՞վ դու եկար, զարնա՞ն կարապետ,  
Բուն շինողներից ամենից վարպետ:

Կոռունկը թռաւ, գնաց վերերէն,  
Սոխակն էլ փախաւ մեր պարտէզներէն.  
Մէկ դու մասցիր մնջուկների հետ,  
Սիրո՞ւն ծիծեռնակ, զարնան կարապետ:

Պատուհանիս մծոտ շինի՞ր քո քունը,  
Անուշ ծոստղով երգէ զարունը,  
Ածա՞ ձու, հանէ՞ գեղեցիկ ծագեր.  
Մնա՞ մեր մծոտը մինչի սեպտեմբեր:



49. ԾԻԾԵՇԽԱԿ

**Ծ**իծեռնակը, տես, ամեննին չէ հան-  
գստանում. ամբողջ օրը թռչում է,  
ծղօտներ է հաւաքում, կտուցովը կաւ է  
կրում, իւր համար բուն է շինում. Բունը  
շինեց, վերջացրեց, մէջը երեք ձու ածեց,

Նրանց վրայ շարունակ երեք շաբաթ պինդ նստեց, փոքրիկ  
ձագեր գոյացրեց. Զագերը որ գուրս եկան, բերանները բաց  
արին և կերակուր խնդրեցին. Ծիծեռնակը թռաւ, դաշտը  
դուրս եկաւ, մժեղներ բռնեց, նրանց կերակրեց:

Ֆամանակը հասաւ. ձագերի փետուրները դուրս եկան.  
Նրանք թեաւորուեցան, իրանց բնից դուրս թռան, հեռու ճա-  
նապարհ ընկան. կապոյտ ծովերի, մութ անտառների, բարձր  
սարերի վրայից անցան:



49. ՄԵՐ ՏՈՒԽԸ

Եր տունը մեծ չէ. Նա մի յարկից է և  
ունի ութը սենեակ՝ դահլիճ, ընդունա-  
քան, սեղանատուն, նեջարան, մանկանոց,  
առանձնասենեակ, նախասենեակ և խոհանոց։  
Դահլիճն ամենամեծ սենեակն է, իսկ նախա-  
սենեակը ամենից փոքրը։ Մանկանոցն ա-  
ռանձնապէս մեզ համար է. այստեղ մենք պատ-  
րաստում ենք մեր դասերը։ Նա ունի չորս լուսա-  
մուտ և երկու դուռը։ Մեր սենեակը շատ լոյս է,  
որովհետեւ պատուհանները մեծ-մեծ են։ Սենեակի մէկ անկիւնում  
վառարանն է շինած, իսկ միւս անկիւնում դրած է մեր գրքերի  
ու թղթերի պահարանը։ Սենեակում կայ մէկ սեղան և մի  
քանի աթոռներ։ Պատերի վրայ կախուտած են շատ կինդանի-  
ների և բոյսերի նկարներ. Նրանք մեզ հարկաւորւում են դաս-  
ներս պատրաստելու ժամանակ։



50. ԻՆՉՊԵՍ ԵՆ ՇԻՆՈՒԻՄ ՏՆԵՐԸ

Բայց ինչպէս են շինում տունը և ով է շինում նրան:

Փայտէ տները շինում են հիւմները գերաններից: Քարէ տները շինում են որմնագիրները աղիւսից կամ տաշած քարից: Ամենից առաջ հիմքն են դնում: Հիմքի վրայ բարձրացնում են պատերը: Պատերի մէջ թողաւմնեն բացուածներ՝ դռների և լուսամուտների համար: Երբոր պատերը բարձրացնում պղծնում են, ապա զցում են նրանց վրայ գերաններ, իսկ գերանների վրայ կոճեր: Յետոյ նրա վրայ շինում են կտուրը: Կտուրը թերուած է լինում, որ անձրկի զուրը վրան չկանգնի: Կտուրները ծածկում են հողով, երկաթով կամ եղէդով:

Տունը դրսից պատրաստ է, բայց նրա ներսից դեռ էլլա շատ գործ կայ. պէտք է յատակի ու առաստաղը տախտակել, վառարանները պատրաստել, դռները կախել, լուսամուտների փեղկերը հագցնել. պէտք է պատերը կամ ներկել կամ թուղթ կպցնել: Երբոր տունը պատրաստւամ է, նրա մէջ բերում դարսում են զանազան կարասիներ և ամանեղիններ. յետոյ կանչում են քահանային: Քահանան օրհնում է տունը և այնուհետև սկսում են նրա մէջ բնակուիլ:

51. Խ Ր Ճ Ի Թ



Էս զիշերին պայծառ լուսինն  
Երկնքումը բարձրացաւ,  
Աղօտ ծածանչները սփոեց  
Եւ իրծիթը լոյս առաւ:

Փոքրիկ խուղ էր, դատարկ ցեխից  
Անշքապէս նա շինած.  
Մի դուռն ունէր ցած եւ նեղիկ  
Եւ մի երդիկ էլ բացած:

Խրծթի մէջը, երդկի տակը  
Կոլոր հնոց կար շինած.  
Նրա շուրջը երեք հոգի  
Գործը ծեռքին նստուած:

Պառաւ կինը ճախարակը  
Վարպետութեամք պտտում էր,  
Բրդի փափուկ քուլաները  
Ուշի ուշով մանում էր:

Համեստաղէմ կոյս առջիկը  
Սանդերքն առաջը դրած,  
Հանդարտութեամք բուրդ էր զգում,  
Խլը մայրիկի մօտ նստած:

Երիտասարդ տղամարդը  
Արագ-արագ տաշում էր,  
Եւ մի ժամից ողջ գութանը  
Վաղուան համար պատրաստ էր:

Հաւը խօսեց: Պառաւն մեղմով  
Զեռքի քուլան վերջացրեց,  
— «Կէս զիշերը վաղուց անցաւ,  
Պէտք է քննենք», նա ասեց:

Անցան ժամեր: Եւ իրմիթում  
Խոր լոռվթիւն էր տիրել,  
Մինչ աղջիկը արիաջան  
Անկողնից վեր էր կացել.

Հուսամուտից նա դուրս նայեց  
Եւ շրմունքը մեղմ խաղաց.  
Արշալոյսը նոր էր քացում,  
Կուժն ուսեց, ջուրը գնաց:

52. Պ Ա Ր Տ Է Զ

**Պ**արտէզները տների մօտ են լինում և չորս կողմից  
ցանկ կամ պատ են ունենում: Պարտէզը շատ անդամ  
մշակում է պարտիզի տէրը, երբեմն նաև պարտիզպանը: Պար-  
տիզի մէջ շինում են մարգեր (ածուներ) և ցանում են տեսակ-  
տեսակ ծաղիկներ ու բանջարներ: Պարտիզում տնկում են և  
պատղատու ծառեր: Շատ ծառեր էլ կան, որոնք պտուղ չեն  
տալիս, բայց սիրոն անուշահոտ ծաղիկ ունին: Պարտիզին  
վնաս են տալիս թռչունները, ընտանի կենդանիները և որդերը:  
Տաք եղանակին մարգերը ջրում են: Պարտիզի բանջարեղինները  
մարդիկ գործ են ածում իբրև կերակուր, իսկ անսկտք մաս-  
ները անասուններին են տալիս: Եթէ պարտիզում միայն բան-  
ջարեղին է ցանած, բանջարանոց կամ բնէզ է կոչում:

53. Ա Ց Գ Ի

 յգիները երկու տեսակ են՝ պտղաբեր և հասարակ:  
Հասարակ այգիները սովորաբար տների առաջ-  
կամ քաղաքի գանազան թաղերումն են լինում՝ գրօսանք անե-  
լու համար: Պաղաքեր այգիները մեծ մասով քաղաքից դուրս  
են լինում: Այգիները շրջապատում են ցանկով, պատով կամ  
ճաղերով (վանդակներով): Այգու մէջ տնկում են պտղատու ծա-  
ռեր, թփեր և պարտիզի ծաղիկներ: Գեղեցիկ հասարակ ծաղիկ-  
ներ էլ են բունում այնտեղ:

54. ԵՐԿՐԱԳՈՐԾՎ ԵՒ ԾԱՀԻԿԸ



ամեստ ծաղիկ դաշտային, վատ ժամի հանդիպե-  
ցար. երբ արօրը քշեցի, նրա առաջն ըն-  
կար: Գեղեցկութիւն դաշտերի, քեզ վրկել  
շկարացի. սրտի ցաւով, ակամայ քաղցր  
կեանքդ կտրեցի:

Խոնարհաբար փայլելով, իբրև գոհար,  
խոտերում, միամիտ կ'սպասէիր արեգակի  
ծագելուն: Յանկարծ արօրս սրածայր անգթաբար քեզ կտրեց  
և այդպիսով քաղցր կեանքիդ դժբախտաբար վերջ տուեց:

55. Վ Ա Ր Դ

**Վ**եր գեղեցիկ տեսքի և անուշ հոտի համար վարդը ծաղիկ-  
ների թագուհի է կոչում: Վարդը բացւում է թփերի  
վրայ: Վարդենու արմատները երկար են և պինդ, բունը շագանա-  
կապոյն է. նորաբոյս ոստերն ու շառաւիղները կանաչ են և մանր  
վշերով շրջապատուած: Վարդենու տերեր կոլորաւուն է, շուրջ

ատամնաւոր: Վարդը զանագան գոյնի է լինում՝ կարմիր, սպիտակ, դեղին, բայց նրա սովորական գոյնը բաց կարմիրն է, որ կոչում է վարդագոյն: Մէկ թփի վրայ բոլոր ծաղիկները մէկ գոյնի են լինում:

**Ա**շկաշը պարտիղի ամենագեղեցիկ ծաղիկներից մինն է, բայց հոտ չունի: Նա բուանում է սոխարմատից: Սոխարմատը (կոճղէզը) տնկում են հողի մէջ. այստեղ նա թելի նման մանր ծիկր է արձակում և ցողուն է տալիս: Ցողունի վրայ բացում է զանգակի պէս մի ծաղիկ: Կակաչները լինում են դեղին, կարմիր և գոյնզգոյն:

57. ՄՈՐԻ ԵՒ ԿԱԿԱՉ

**Մ**որիի հասարակ սպիտակ ծաղիկը համեստաբար վայլում էր խոտերի մէջ, իսկ փառահեղ կակաչը գոռողաբար շարժում էր նրա վրայ իւր փայլուն զագաթը: Տան օր անցաւ. սպիտակ ծաղիկի տեղը տեսնում էր մորիի (ելակի) կարմրագոյն և ախորժահամ պտուղը, իսկ գոռող կակաչի տեղը տատանում էր նրա թառամած ցողունը:

58. ԺԱՂԻԿՆԵՐԻ ԵՐՔԸ

Վ ա ր դ

**Ի**նձ ամենքը կոչում են ժաղիկների թագուհի, Որովհետեւ ծաղիկս Սիրուն գոյն ու հոտ ունի:

Թէեւ իմ կանաչ թուփը Շատ մարդու ծեռք կըծակէ, Բայց այս անմեղ յանցանքը ինձ ամեն մարդ կըներէ:

Շ ո ւ շ ա ն

Իմ սպիտակ կոկոնում Անուշ բուրմունքներ կան շատ, Եւ ուկէնման փոշի Մեղուներին բազմաշխատ:

Իմ ցողունս է նազուք Եւ գագաթս գեղեցիկ, Տերեւներս ընդարձակ Եւ ինքս եւ խիստ հեղիկ:

Իմ հիւրասէր թերթերում Մեղու, մըջին, թէ թիթեռ Կարող են հանգիստ գտնել Իբրեւ ազնիւ գեռուններ:

Յ ա փ ր ո ւ կ

Իմ թուփերս փարթամ չեն, Ոչ ծաղիկս փառաւոր, Բայց բուրմունքս կըլսեն Ամեն մարդիկ հեռաւոր:

Այս պատճառով կարող էք Յափրուկ գտնել ամեն տեղ, Թէ փոքրիկ պարզ փընջերում, Թէ պարտէզներում շքեղ:



59. ԲՈՅՍԵՐԻ ՏԵՍԱԿՆԵՐԸ

Ենք գիտենք բոյսերի մի քանի դասակարգ՝ ծառեր, թփեր, հացաբոյսեր, բանջարեղիններ, սունկեր և խոտեր։

Ծառն ունի մէկ հաստ բուն, շատ ճղներ և սոտեր։ Ոստերի վրայ կան կամ տերևներ կամ ասեղներ—փշեր։

Թուփը մէկ բնի փոխանակ մի քանի բարակ բներ ունի։ Հացաբոյսերը բնի փոխանակ դատարկ ծղօտներ ունին։

Խոտը բարակ ցօղուն ունի։ Սունկը չունի ոչ տերեւ և ոչ սոտեր, միայն ունի մի կոթ և նրա գլխին իւր թասակը։

Մենք մի քանի բանջարեղինների պատեանները և նրանց միջի սերմերն ենք ուտում, միւսների արմատը, իսկ մի քանիսների՝ տերևները։

60. ԳԱՐՆԱՆԱՅԻՆ ԱՌԱԻՕՏ

**Գ**արնան արեւը հպարտ բարձրացաւ,  
երկրագործն իրան մաժը ճեղք առաւ。  
Արօրի ետքից հանդարտ գնում է  
եւ ուրախ-զուարթ բարձր եղանմ է։  
«Ո՞վ է կեանք վարում երկրագործի պէս՝  
Գարնան սկզբից միշտ ուրախ երես։»

61. ԵՐԱԾ

**Վ**առը չորային էր։ Արեգակը օրէցօր բարձրանում էր պարզ երկնքի վրայ։ Փոշին ամպի նման տարածում էր ճանապարհին։ Երկիրը քարի պէս պնդացել ու ճաքճըստել էր։

Առուները ցամաքել էին։ Ծաղիկները տիրութեամբ կախել էին իրանց գլուխները։ Խոտերը դեղնել էին։ Նորահաս արտերը թառամել էին։ Երկրագործը տիրութեամբ նայում էր արտերին և ասում. «Աստուած իմ, ինչ-որ ինձանից կախուած էր՝ արեցի, հողը՝ որքան կարելի էր, խոր ցելեցի, ընտիր սերմով սերմեցի և ուշադրութեամբ ցաքեցի. այժմ թող մինի Քո սուզը կամքը։»

62. ԲՈՅՍԵՐԻ ԿԵՐԱԿՈՒՀԸ

**Պ**այծառ երկնակամարի վրայ ամպեր երևեցան. Գոքը առաջորդ նրանք թանձրացան և սև կեղևով ծածկեցին կապոյտ երկինքը, իսկ երեկոյին կենսատու անձրեւ ջրեց արօտամարգերն ու արտերը։ Դաշտային թառամած բոյսերը զուարթացան. Նրանք անստեսանելի կերպով ծծեցին իրանց բարակ արմատներով թաց հողի մննդարար հիւթը։ Խոտը կանաչեց. ծառերի փայլուն տերմները ագահաբար ներս ծծեցին խոնաւ օդը։ Ուրախ զուարթ տատանուիլ սկսեցին ցորենի, գարու և վարսակի արտերը և արագ-արագ լցրին իրանց քստալի հասկերի նիհար հատիկները։



63. ՀՆԿՈՅՑ ԵՒ ԴՀՈՒԽՄ

մառուայ շոգ եղանակին՝ գիւղացին, ընկուզենու տակ ձգուած, զովանում էր։ Վերև նայելով նատեսաւ ծառի վրայ շատ ընկոյզներ։ «Զարմանալի բան է, մտածում էր գիւղացին, այս ծառի մեծութեանը մտիկ տուր ու իրան պտուղներին։ Բունը ահազին, ճղները բազմաթիւ և լայնատերեւ, կ'ասես մի կատարեալ ըլուր լինի. բայց պտուղներն այնքան մանր են, որ համեալ ըլուր լինի.»

գիւ են տեսնուում. մինչդեռ գդումը, որ աւելի մեծ է, քան թէ մարդու գլուխը, աճում է այնպիսի բարակ և քնքոյշ ցօղունների վրայ: Չէ, եթէ ես Աստուած լինէի, բանն ուրիշ տեսակ կըստեղծէի»: Այս խօսքերն ասած-չասած, յանկարծ մի ընկոյզ ցած ընկաւ և այնպէս հաստիկ դիպաւ քթին, որ արինն աղբիրի պէս դուրս բղիսեց:

«Մեղայ Աստուծոյ, բացականչեց գիւղացին. լաւ օրի կը համնէի, եթէ այդ բարձրութիւնից դդում վայր ընկնէր իմ գլխին: Չէ, Աստուած ամեն բան իմաստութեամբ է ստեղծել և ես, մեղաւորս, չփոտի համարձակուիմ նրա ստեղծածի մէջ սխալներ գտներ:

#### 64. ԺԱՌԵՐԻ ՎՃՇԸ

**Պ**առերը վիճեցին միմեանց հետ, թէ նրանցից որն է լաւը: Կաղնին ասաց. «Ես բոլոր ծառերի թագաւորն եմ. իմ արմատս գետնի մէջ խորն է մտած, բունս հաստ է, գագաթս երկնքին է նայում. իմ տերեններս կտրատուած, իսկ ճղներս կարծես երկաթից ձուլած լինին: Ես փոթորիկների առաջ չեմ խոնարհում, կայծակների առաջ չեմ ընկճուում»:

Խօսին ժապաց այս խօսքերի վրայ. «Նատ ես պարծենում, ասաց նա. դու մոռանում ես, որ ինձ նման ծառ ողջ Հայաստանում չկայ: Արմատներս անդունդն են հասնում. գագաթս ամպերի մէջ է խաղում. ես հարիւրաւոր ճղներ ունիմ, ամեն մի ճիւզս քո ընիցը հաստ: Իսկ իմ բունս... օ, նրա փշակում կարող է մարդս կարիք օրը տեղ գտնել: Համեստութիւն արեցիր, պտուղներդ չյիշեցիր. բայց նրանք էլ խոզերին են քեզ մօտ հրաւիրում. իսկ իմ կոծոծները թէն սնուցիչ չեն, բայց տերեններիս հետ ձեռք ձեռքի տուած սօսելով, յոդնած և արեցից տոշորուած անցորականին իրանց ստուերի տակն են առնում, արեկից, անձրեկից պաշտպանում»:

Խնձորենին լաեց այս երկուսի խօսակցութիւնը և ասաց. «Դուք երկուադ էլ շատ էք հպարտանում, բայց ասացք, դուք տալիս էք մարդկանց այն, ինչոր նրանք ինձանից են ստանում»: Լսում է մայրին, շարժում է իւր փշոտ գլուխը և ասում է. «Սպասեցք, շուտով կրգայ ձմեռը և դուք ամենքդ էլ կըմերկանաք, իսկ ինձ վրայ միշտ կ'մնան իմ կանաչ փշերը: Առանց ինձ ցուրտ երկիրներում ապրիլ չի կարելի. ես նրանց վատարանները տաքացնում եմ և մարդիկ իմ փայտից իրանց համար խրճիթներ են շինում»:

#### 65. ՈՒՐԻՇԻՆ ՀՈՐ ՓՈՐՈՂԸ ԻՆՔԸ ՄԷՋԸ ԿՂՆԿՆԻ



#### I.

Ի ծեր մարդ ապրում էր իւր պառաւ կնոջ հետ: Պառաւը շատ չար կին էր և ունէր մի աղջիկ՝ անուշը նը Շողակաթ: Շողակաթը չարութեան կողմից իւր մօրիցը պակաս չէր:

Ծերը հանդարտ և բարի մարդ էր և ունէր մի աղջիկ, անունը Մարիամ: Մարիամն էլ շատ հանդարտ, աշխատասէր և գեղեցիկ աղջիկ էր:

Խորի մայրն ամեննեին չէր սիրում Մարիամին: Նա միշտ ասում էր իւր մարդուն. «Չեմ ուզում Մարիամի հետ կենալ: Տար նրան անտառը, այնտեղ մի գետնափոր գտիր, թող նա այնտեղ մանի, գործի, ինչ ուզում է անի»:

Պառաւն այնքան ասաց, որ խեղճ մարդու գլուխը տարաւ: Էլ ուրիշ ճար չկար. ծերը լծեց սայլակը, վեր առաւ Մարիամին և ճանապարհ ընկաւ: Գնացին անտառը և այնտեղ գտան մի այր: Շատ ցաւում էր ծերը իւր աղջկայ վրայ, բայց ինչ անէր: Նա տուեց Մարիամին հրահան, կայծաքար, արէթ

և մի տոպրակ բրինձ ու ասաց նրան. «Մարիամ, կրակ վառիր, նրդի, բրընձից քեզ համար կերակուր եփիր, խրճիթդ լաւ սրբիր—աւելիր և դու էլ նստիր ու մանիր. մի վախենար, վաղը ես կըգամ քեզ տեսութեան»։ Ծերը մնաս բարով ասաց աղջկան և յետ դարձաւ տուն։

Մարիամը մնաց մենակ, ամբողջ օրը մանեց, իսկ երբոր մթնեց, վառարանը վառեց և իրան համար կերակուր եփեց։ Հէնց որ կերակուրն սկսեց եփ գալ, մին էլ տեսնես, յատակի տակից մէկ մուկը դուրս վաղեց և նրան ասաց. «Սիրնւն աղջկ, մի գդալ սպաս տաս ինձ՝ ուտեմ»։ Մարիամը լաւ կերակրեց մկանը. նա էլ չնորհակալութիւն արեց ու գնաց։

Ինքը Մարիամն էլ հաց կերաւ և էլի սկսեց մանել. Յանկարծ, կէս գիշերին, մէկ արջ ներս է մտնում խրճիթը և ասում է նրան. «Ապա, աղջկ, կրակը հանգցրնւ, արի, աշքակապուկի խաղանք. վեր առ այս արծաթէ զանգակն ու զընգընդացրու. իսկ ևս կ'աշխատեմ քեզ բռնել»։

Մարիամը շատ վախեցաւ և չէր իմանում, թէ ինչ անի։ Բայց այն րոպէին մուկը դուրս վագեց յատակի տակից, բարձրացաւ Մարիամի ուսերը և նրա ականջումն ասաց. «Մի վախենար, Մարիամ, կրակը հանգցրնւ, դու էլ դռան յետեր թագկաց, իսկ զանգակն ինձ տուր»։ Մարիամն այնպէս էլ արեց։

Արջն սկսեց խաղը, բայց ամեննեին չկարողացաւ մկանը բռնել. մուկը վազում էր և զընգընդացնում. իսկ արջը նրա յետեւ պտոյտ-պտոյտ էր անում. նա շատ այս ու այն կողմն ընկաւ, բարկացաւ, կատաղեցաւ, գոռաց բարձր ձայնով, սկսեց դագանակով բոլոր անկիւններին ու պատերին խփել, կոտրեց բոլոր ամանները. բայց մկանն ինչ պիտի անէր։ Վերջապէս արջը հանդարտուեցաւ և ասաց. «Դու շատ լաւ աշքակապուկի ես խաղում, աղջկ, այդ պատճառով ես առաւօտեան կ'ուղարկեմ քեզ համար մի ջոկ ձի և մի սայլ հարստութիւն»։ Ասաց ու գնաց։

### III.

**Մ**իւս օրը, առաւօտեան, պառաւն ինքն ուղարկեց ծերին անտառ. «Գնա, ասաց, տես, շատ է մանել քո Մարիամը»։ Ծերը գնաց. իսկ պառաւը նստեց լուսամուտի առաջ և ինքն իրան ասում էր. «Ահա ծերուկս կըգայ և Մարիամի ոսկորներն էլ հետը կըբերէ»։

Պառաւը նստած էր ամբողջ երեք ժամ և սպասում էր. մէկ էլ լսեց որ անտառի կողմից մի շրխշրխկոցի ձայն էր գալիս. շունն էլ տախտի տակից սկսեց հաջել և ասել. «Տես, տես, ծերունու աղջիկը գալիս է, հետն էլ մի խումբ ձի է քշում, մի սայլ էլ հարստութիւն է բերում»։ Պառաւը բարձրացաւ շան վրայ. «Սուտ ես ասում, անպիտան, այդ Մարիամի ոսկորներն են շրխշրխկում»։ Այս խօսքերն ասած-շասած, բագի ուները բացուեցան, ձիանքը ներս թափուեցան. իսկ Մարիամը, իւր հօր հետ սայլի վրայ նստած, անթիւ բարիք էր բերում. Պառաւը բարկացաւ, կատաղեցաւ, նրա շրթունքները սկացան և զարմացած ասաց. Այ քեզ հրաշք. Վաղն էլ իմ աղջկա տանես անպատճառ. իմ Շողակաթը քո Մարիամի հատը չէ. նա երկու ջոկ ձի կըբերէ և երկու սայլ ոսկի։

### III.

**Մ**իւս օրը ծերը պառաւի աղջկան տարաւ անտառի այրը և տուեց նրան բոլոր բաները, ինչ-որ իւր աղջկան էր տուել։ Շողակաթը կրակը վառեց և ճաշ եփեց. Մուկը յատակի տակից դուրս նայեց և ասաց. «Սիրուն աղջկ, խնդրեմ մի գդալ կերակուր տաս»։ Շողակաթը գոռաց նրա վրայ. «Կորիր, կեղտուտ անպիտան, դեռ կերակուր էլ է ուզում», ասաց ու ճիպոտով խփեց խեղճ մէջքին։ Մուկը վախաւ, մտաւ իւր

բունը. իսկ Շողակաթը նստեց, միայնակ բոլոր կերակուրը կերաւ ու պառկեց քնելու:

Կէս գիշերին արջը ներս մտաւ այրը և ասաց աղջկան. «Այ աղջիկ, արի աշքակապուկի խաղանը. առ այս փոքրիկ զանգակը, վազիր և զընդզընդացրն, իսկ ես կ'աշխատեմ քեզ բռնելու: Աղջիկը վեր առաւ զանգակը և սկսեց վազել. բայց ուր պիտի փախչէր արջի ձեռքից: Նրա ծնկները ծալում էին, ձեռները դողդողում և զանգակն ինքն իրան զընդզընդում էր: Իսկ մուկը յատակի տակից ասում էր. «Զար Շողակաթը թող ոչնչանայ, արժանի՞ է»:


Միւս առաւոտ պառաւը մարդուն ուղարկեց իւր աղջկայ յետեից. «Քնա, ասաց նա, ձիանքը և ոսկին բեր»:

Ծերը գնաց. իսկ պառաւը նստեց դռանը և սպասում էր. փոքր ժամանակից յետոյ նա լսեց, որ անտառի ճանապարհից թրխկթրխկոցի ձայն է գալիս. շունն էլ սկսեց դռան յետեից հաջել. «Ահա գալիս է պառաւի աղջիկը, ախ է քաշում, հառաչում, իսկ դատարկ սայլը թրխթրխկում է»: Պառաւը բարկացած խփեց շանը և ասաց. «Սնկու ես ասում, անպիտան, այդ արծաթի ձայնն է, որ արկղների մէջ զընդզընդում է»:

Վերջապէս ծերունին մօտեցաւ. սայլը դռանը կանգնեց: Պառաւի աղջիկն այնպէս ջարդուել ու կոտրատուել էր, որ հազիւ կարողացան սայլակից ցած բերել նրան: Կատաղեց չար պառաւը, բայց ինչ կարող էր անել:

Մի քանի ժամանակից յետոյ Մարիամը մի լաւ երիտասարդի հետ ամուսնացաւ:

—



## ՇՐՋԱՆ ԵՐՐՈՐԴ



66. Շ Ն Ի Կ

«Ապա, սիրուն չնիկ, կարդա, թէ ինչ է զրած իմ գըրքումը», ասաց Հայկը իւր փոքրիկ շանը:

«Ի՞նչ իմ բանն է գիր կարդալը, ասաց նա. ես տունը կըպահպանեմ, գիշերները չեմ քնիլ ու միշտ կըհաջեմ, զայլերն կըփախեցնեմ, որսի կըգնամ, նապաստակ կըբռնեմ, բաղեր կըգտնեմ. իմ կողմից սա էլ բաւական է»:

67. Ո Ր Ս

 օրեղբայրս որսորդ է. նա ունի հրացան, որսի պարկ և շատ չներ: Մի օր հօրեղբայրս ասաց ինձ. «Խորամանկ աղուէսը գիշերս եկել է և մեր հաւանոցից մի հաւ է գողացել. ես պէտք է գնամ, նրան սպանեմ. ուզում եռ՝ դռ էլ արի հետս»: Ես շատ ուրախացայ և թռչկոտալով առաջ ընկայ դէպի անտառը: Ինձանից առաջ՝ պոչը մէջըին դրած, գնում էին Պիտանը, մեր գայլ խեղդող չունը, և նրա երկու ընկերները՝ բարակ Զգաստն ու քերծէ Թռչկանը: Երբոր գիւղից մի փոքր հեռացանք, բարակն ու քերծէն բռնեցին աղուէսի հետքը և զետինը հոտուելով առաջ անցան: Պիտանը անպատութիւն համարեց յետ մնալ նրանցից:

Մի քանի ըոպէից յետոյ չներն աշքիցս կորան: Ես կարծում էի, թէ նրանք էլ յետ չեն դառնալ, բայց հօրեղբայրս՝ որ փորձուած որսորդ էր, անտառի բերանում մի նեղ ճանապարհ առաջը կտրեց և ինձ էլ պատուիրեց, որ թփի յետեր նստեմ: «Իմ խելօք չները հէնց այս ըոպէիս կըդժնեն աղուէսը և դուրս կըխուկեն դէպի մեղ», ասաց նա:

Մենք նստեցանք և սպասեցինք: Ոչինչ չէր երեսում. միայն հեռուից երբեմն լսում էին չների հաջոցն ու կանչոցը. հաջոցը առաջ անտառի խորբիցն էր լսում. յետոյ նա սկսեց քիչքիչ մօտենալ... Հօրեղբայրս ականջները սրած լսում էր... մէկ էլ ինչ տեսնեմ՝ չները յետածած խոկում են դէպի մեղ մի շիկաներ աղուէս և մի նապաստակ. նապաստակն առաջից թռչում էր գլուխը կորցրած. նրա յետեից վազում էր աղուէսը, իսկ աղուէսի յետեից հասուէհաս գալիս էին բարակն ու քերծէն. Պիտանը յետ էր մնացել: Նոյն ըոպէին հօրեղբայրս հրացանն երեսն առաւ և աշքեց աղուէսի կուրծքին: Հրացանի տրաքին ու աղուէսի զլսագլոր լինելը մին եղաւ: Շները, ական թօթափիել, վրայ տուին և ուզում էին ծուփկ-ծուփկ անել

գաղանին. բայց հօրեղբայրս մօտ վագեց և չթողեց, որ աղուէսի մորթը գըպպըզեն:

Ես այդ միջոցին աւրիշ բանով էի զբաղուած. երբոր հրացանի ձայնը որոտաց, խղճուկ նապաստակը, հէնց իմանաս, սրտամաք եղաւ, տեղն ու տեղը ատափիցը կպաւ: Շներն իրանց որսն ունէին, թէ չէ նրան հանգիստ չէին թողիլ:

Երկիւլի առաջին ըոպէին՝ ես մօտ վագեցի և բռնեցի նապաստակը: Նրա սիրտը սաստիկ բարախում էր և իւր տուոզ աչքերը, կ'ասես, չէր ուզում հեռացնել բարկացած չներից: Ես վեշիս տակն առայ նրան, տուն տարայ և երկար ժամանակ կերակրում ու պահում էի: Բայց մի գիշեր նա միտն էր բերել իւր վայրենի կացարանը և, չգիտեմ ինչպէս, դուրս էր փախել դաշտը:

68. Կ Ա Տ Ո Ւ

Փիսիկ, փիսիկ, գու չար փոքրիկ, շատ սիրուն ես, խորամանկ ես, մետաքսապատ թաթեր ունիս, սուր եղունգով մատներ ունիս: Ականջներդ շուտ են լսում, մեծ աչքերդ մթնում փայլում, երկար բեխերդ ոլորած, խեղճ միներին մահ ես նիւթում:


Քո ընկերիդ երբ տեսնում ես, պոչդ այս – այն կողմն ես շարժում, մէջըդ ծալում, կրացնում, աչքերդ փակ մըռռացնում, բայց թէ յանկարծ մի խեղճ մուկիկ մի անկիւնից դուրս է ընկնում, քո պողպատէ թաթիկներով զլսին խփում ես, սպանում:



69. ՄԿԱՆ ՀԱՄԱՐ ԿԱՑՈՒԾ ԷԼ ԳԱԶԱՅ Հ

 կնիկը վաղեց մկան մօտ և ասաց նրան. — Բարեկամ, բարի համբաւ կայ, լո՞լ եռ. ասում են, որ կատուն առիւծի ճանկն է ընկել. Փառք Սատուծոյ, այսուհետեւ հանգիստ կ'ապրենիք:

Մեծ մովլը պատասխանեց. «Սյոշափ մի ուրախանար, աչքի լրյա, և իդուր յոյսեր մի կապիր. թէ որ գործը կուռեի համնի, հաւատաք որ առիւծը ողջ չմնայ. կատուփց զօրեղ գաղան չկայ»:



70. Ի՞նչ ԿԸԲՐԴԵՍ, ԱՅԵ ԿՌԻՑԵՍ

 բորդները, գայլի յետեփց ընկած, հալածում էին: Ճարը կտրած, նա վախաւ՝ գիւղը մտաւ և ուզում էր մի տեղ գտնել թագչելու: Բայց նրա չար բախտից բոլոր գոները վակ էին:

Գայլը տեսաւ կատուին և աղաչեց. «Փիշիկ, իմ բարեկամ, ասա շուտով, այս գիւղացիներից ո՞րն այնքան բարի կը լինի, որ ինձ հիւր ընդունի և չար ոստիներիցս աղատի: Պուլսում ես չների հաջոցը և փողերի ձայնը, այդ ամենը իմ յետեփց են ընկած»:

— Նուտով խնդրիր Ստեփանին, նա շատ բարի մարդ է, ասաց կատուն:

«Սյողէս է, բայց ես նրա ոշխարը յափշտակել եմ»:

— Ուրեմն փորձիր կարապետի մօտ օգնութիւն գտնել:

«Վախենում եմ. նա էլ ինձ վրայ բարկացած կը լինի, որովհետեւ նրա էլ այծն եմ գողացել»:

— Վաղիր ուրեմն Մարկոսի մօտ:

«Ոչ, չեմ կարող. նա գարունքուանից գայրացած է իմ դէմ. ես նրա հորթը լափել եմ»:

— Սյոդ վատ բան է, բայց հաւատացած եմ, որ քեզ Կիրակոսը կըպաշտպանէ:

«Ա՞յս, կատու եղբայր, նրա էլ գառն եմ կերել»:

— Ինչպէս տեսնում եմ, գայլէ, դու այս գիւղում ամենքին էլ վնաս ես հասցրել, ասաց կատուն. ուրեմն էլ ի՞նչ պաշտպանութիւն ես որոնում: Զէ, այս լաւ իմանաս, որ մեր գիւղացիք այնքան յիմար չեն, որ իրանց վնասակար թշնամուն պահեն, պաշտպանեն: Եւ իրաւունք ունին. դու ես մեղաւոր՝ ի՞նչ որ բը թել ես, նոյնը և խրթիր:



71. ԹՈՂՆԱԿ

 Երէկ բացի ես ղոնակը այն բանտի,  
Որի մէջը ինեղծ թռչնակն էր բանտարկուած,  
Նրան տուի ազատութիւն ցանկալի,  
Եւ ղաշտերին՝ իրանց երգիշը կորած:

Թռաւ-անցաւ նա նուրբ ողը ծեղքելով,  
Պայծառ օրուայ թարմութիւնը զգալով.

Թռաւ-անցաւ ազատութիւն շնչելով,  
Եւ ինձ համար մեղմ, մնջիկ աղօթելով:



72. Զ Ի

**Ի**ն գեղեցիկ կենդանի է: Նա, երբոր ուրախ է, խըր-լսնջում է եռանդով, ականչները վեր ցցում, աշքերն այս ու այն կողմը ողորում, վիզը սիրուն կուացնում և իւր ամուր սմբակներով գետինը թակում: Գին պարանոցի վրայ երկար բաշ ունի, որի մի փունջը, երկու մանրիկ ականջների միջով, ծածկում է նրա ճակատը. յետեկի կողմը ձին ունի հեր-արձակ ագի, որ տէրերը, թամբերուց յետոյ, կշկում, կար-ճացնում են, կամ սանրում ու երկար ձգուած թողում:

Չիու բերանը սանձ են գցում, մէջքին սիրուն թամբ են դնում, փորքաշը կապում, կրծկալը պնդում, երկու կողմից ասպանդակներ կախում, յիտոյ հեծնում ու քշում, ուր որ սըր-տերն է ուզում:

Չիու սմբակները պայտում են, որ ոտները չվնասուին: Գին արագ և գեղեցիկ գնացք ունի. նա ուժեղ կենդանիներից մինն է: Երբ աշխոյժ եւիվարը չափ է ընկնում, գետինը ոտ-ների տակը, կ'ասես թէ, տատանում է:

73. Տ Ի Ո Ւ Ի Ր Զ Ի

**Դ**'նչ ես խըխնջում, իմ ծի եռանդուն, ինչ՝ ես այդպէս գլուխդ կախել: Ինչ՝, ինձ ասա՛, քաշը չես շարժում, Զես կոծում բերնիդ ոսկեփայլ սանձեր:

Մի թէ ես քեզ չեմ պատում ու քորում  
Եւ կամ քեզ զարի առաս չեմ տալի.

Մի թէ սարքը չէ սիրուն, շողողուն,  
Կապդ ու փոքաշդ չե՞ն աբբեշումի.

Երկզոյգ պայտերը չե՞ն արծաթաջրած,  
Ասպանդակները ոսկով չե՞ն պատած:

Տխուր ծին ինծի այս պատասխանեց.

«Ես նրա համար եմ այսչափ տրտում,

Որ որոտմինքի ձայներ եմ լսում,

Ահա փողերի թինդ ու դղրդին,

Սըրերի ճայթիւնն աշխարհք է լցնում:

«Ես խըխնջում եմ մորմիքից ձայնով,

Պատճառ՝ զգում եմ, որ հովիտներով

Երկար չեմ վազի, պատուով չեմ ապրիլ.

Իմ փայլուն սարքով էլ չեմ պճնուիլ:

«Թշնամին անգութ—ես այդ զգում եմ—

Իմ ողջ սարքերս պիտի կողոպտէ,

Եւ այս արծաթեայ երկզոյգ պայտերս

Թեթեւ ոտներիցս նա պիտի պոկէ»:

74. Պ Ա Յ Ց

**Մ**ի հարուստ գիւղացի իւր որդու հետ քաղաք էր գնում:  
«Մտիկ տուր, Կարապետ, ասաց հայրը, ահա ճանա-  
պարհի մօտ ընկած է մի պայտ, վերցրու նրան»:

— «Ե՞ն, հայրիկ, արժէ կուանալ այդ չնչին բանի համար,  
պատասխանեց Կարապետը:

Հայրը ոչինչ չասաց. ինքը վերցրեց պայտը և գցեց պար-

կի մէջ: Նանապարհին նա պայտը մի քանի կոպէկով ծախեց և այդ փողով բալ գնեց: Նրանք առաջ գնացին: Օրը շատ տաք էր. արեգակը սաստիկ այրում էր, և շրջակայրում ոչ աղբիւր կար և ոչ ծառեր: Կարապետը տանջւում էր ծարաւութիւնից և հաղիւ էր կարողանում գնալ հօր յետելից: Հայրը կամաց ցած գցեց մի հատ բալ: Կարապետն իսկոյն վեր թռցրեց, կերաւ: Սա մի փոքր զովացրեց նրան: Մի քանի քայլ առաջ գնալով, հայրը վայր գցեց մի ուրիշը, յետոյ երրորդը, չորրորդը... մինչեւ վերջանալը. իսկ Կարապետը շարունակ հաւաքում էր նրանց և ուտում: Երբ նա վերջին հատիկը վեր առաւ, հայրը յետ նայեց և ծիծաղելով ասաց. «Տեսնում ես, որդի, եթէ դու մի անդամ կռանայիր պայտի համար, այսքան անդամ չէիր կռանալ բալերի համար: Այս քեզ խրատ, որ միւս անդամ չծովանաս»:



75. Կ Ո Վ

**Պ**ովը ձիու չափ գեղեցիկ չէ և ոչ էլ նրա չափ ուժեղ. բայց օգտակարութեան կողմից նա ոչ մի ընտանի կենդանուց յետ չի մնալ:

Կովի գունչը լայն է, ականջները դէպի վեր չեն բարձրանում, այլ դէպի այս ու այն կողմն են ցցուած: Կովի ատամ-

ները պակաս են, այսինքն վերին ծնօտի վրայ առաջնատամ-ներ չունի. այդ պատճառով էլ կովը կծել չէ կարող, բայց դրա փոխանակ կարող է հարու տալ իւր երկու սուր եղջիւրներով: Կովի ճակատը տափակ է, վիզը բարակ, ողնաշարը դուրս ցցուած, կողքերը վիզուած, ոտները կարճիկ, կճղակները բաշ-ժանուած, պոչը վրձնած:

Կովը իւր կերակուրը երկու անգամ է ուտում. առաջ խոտը պոկում է, փոքր ինչ ծամլըմորում ու կուլ տալիս. յետոյ, երբոր բաւական պաշար է հաւաքում, կամ նստում է մի ապահով տեղ, կուլ տուածը նորից բերանն է դուրս բե-րում և հանգիստ կերպով որոճում է, այսինքն իւր տափակ-րում և հանգիստ կերպով որոճում է, այսինքն իւր տափակ-րում և հանգիստ կերպով լաւ աղում, մանրացնում է: Սեղանատամների տակ նորմէկից լաւ աղում, մանրացնում է:

Ամենայն առաւօտ և երեկոյ կովը վերագառնում է հան-դից՝ կուրծն անուշ կաթով լցրած, բառաշում է ու կանչում տանտիկնոցը.

«Արի՛, արի՛, տանտիկին,  
Նայի՛ր իմ՝ լիք ծծերին.  
Գոգնոցդ կապիր,  
Առատ կաթ կլիր:

Միայն հորթուկիս,  
Սիրուն բալիկիս  
Բաժինը թողես՝  
Լիք-լիք ծծերս  
Իսպատ չդարտկես:



76. ԿՈՐԱԺ ՀՈՐԹԸ

ին էր պալիս փաթիլ-փաթիլ,  
Հետն էլ անծրեւ կաթիլ-կաթիլ.  
Այդ միջոցին մի պառաւ կին  
Հորթ էր փնտում դաշտի միջին:

Կովը եկաւ տաւարիցը՝  
Կուրծ ու ծծեր կաթնով լիքը.  
«Հորթուկս ո՞ւր է», նա բառաչեց,  
Խեղծ պառաւին լացացրեց:

Մինչեռ այսպէս պառաւ ու կով  
Ողբում էին լաց ու կոծով,  
Յանկարծ լսուեց մի բարակ ծայն.  
Կովն իմացաւ, որ հորթն է այն:

Կովը վազեց բառաչելով,  
Պառաւն յետքից տընքտընքալով.  
Կորած հորթը մօրը գտաւ,  
Լիք ծծերը բերանն առաւ:

Ծծեց բոլոր կաթն ու տըռզեց.  
Տան-տիկնոջը բան չթողեց.  
Բայց պառաւը այս անգամին  
Սիրով ներեց շար հորթուկին:

77. ԿԹԵԼ ԵՒ ՀԱՐԵԼ

(Մարմնամարզական խաղ)

**Ա**սա՛, տեսնեմ, մեր գիտերում  
Կովերն ի՞նչպէս են կըթում:

—Ահա այսպէս են կըթում:

Հորթին կապում մօր ծընկնից,  
ծիծը խլում զաւակից,

Կովկիթն իրանց ծեռվն առնում,

Ապա կողքին կըկըզում —

Փը՛22, բը՛ժժ . . .

Փը՛22, բը՛ժժ . . .

Ահա այսպէս են կըթում,

Փոքրիկ հորթին լացացնում:

«Ո՞նց են հարում ինընցին,

Հինց էսօր էլ հարեցին»:

—Ահա այսպէս հարեցին.

Թոկը ծառից կապեցին,

Հանու խնոցին կախեցին,

Երկու օրուայ հաւաքսը

Նրա մէջը ածեցին,

Տաք ու հով չուր իսառնեցին

Եւ, ծայրերից թռնելով,

Տարան, բերին, շարժեցին —

Թը՛իկ, չը՛իկ,

Չը՛իկ, թը՛իկ . . .

Ահա այսպէս հարեցին,


Դեղին կարագ հանեցին:



78. ՈՉ ԽԱՐ

**Ս**ում են, թէ ոչխարը լիմար է. ես էլ կարծում եմ, որ այդ ճշմարիտ է։ Հզղեհի ժամանակ ոչխարներն իրանք իրանց ընկնում են կրակի մէջ, իսկ երբոր տեսնում են գայլը, փայտի պէս մնում են իրանց տեղը և յիմարաբար կճղակներով գետինը փորում են։

Բայց մեր ինչի՞ն է պէտք ոչխարի խելքը. մեզ հարկաւոր է նրա բուրդը՝ գուլպայ, շալ և մահուդ շինելու համար, նրա ճարպը՝ սապօն և մոմ շինելու, կաշին կօշիկների և մուշտակների, իսկ միսը՝ խորովելու համար։



79. ԳԱԽԸ ԳԱՅԼԻ ՄՈՐԹՈՎ

Եօր մէկ զառը, չեմ զիտում, ի՞նչ էր, խելքին ի՞նչ տեսակ քամի էր փօշել, Գօցեց իւր վրայ մի զայլի մորթի, Գլնաց, իսառնուեցաւ հետը իւր հօտի։

Բայց երբ շների աչքովն ընկաւ, Ասին՝ անտառից ահա զայլ եկաւ. Գոռում գոշումնիվ վրան վազեցին, Բերաններն առան ու զզզզեցին։


Հաւ էր, որ շուտով հովիւր տեսաւ, Փայտ ու մահակով կոյն տեղը հասաւ, Ու խեղծ զառնուկը կատղած շներին սէխ վրա Սուր առամսներից հազիւ փրկուեցաւ։ այս վիճակում առաջ եւ մեր զառը հազիւ հազ, Արիւնթաթախ ու նուազ, Թոյլ ոտները քաշ տալով, Հասաւ գոմը մի կերպով։

80. ԳԱՅԼԻ ԱՐՏԱՍՈՒՔԸ

**Գ**այլը լսեց, որ հովուի բոլոր հօտը կոտրուել է։ Նա արտասուալից աշքերով եկաւ հովուի մօտ և ասաց. «Ճաւում եմ քեզ վրայ, ովք բարի մարդ, շատ ու շատ ցաւում եմ։ Հովիւր նայեց գայլի արտասուքին և ասաց. «Ենորհակալ եմ, գայլ. բայց ովք գիտէ, թէ ինչի ես լաց լինում դու, արդեօք այն պատճառով, որ ցաւում ես վրաս, թէ նրա համար, որ ինքդ էլ այսուհետև ատթելու միջոց չես ունենալու։

81. ԽԱՐ

**Կ**ատ կեղտուա է մեր խոզը, կեղտու է և շատակեր. ամեն բան ուտում է, ամեն բան ջարդում, տիղմերի մէջ այնպէս է թաւալում, կասես թէ պարզ զրի մէջ լինի. մեծ յօժարութեամբ նա մտնում է ճահիճների մէջ և էլ չի ուզում գուրս գալ այնտեղից։



Խողի կնճիթը գեղեցիկ չէ—բութ է, քիթը գետնին է հասնում, բերանը ականջներին. իսկ ականջներն էլ կեղտաշորի պէս կախուած են: Ամեն մի ոտի վրայ չորս կճղակ ունի: Նրա պոչը ոլոր է, ողնաշարը դուրս ցցուած, ողնաշարի և պարանոցի վրայ էլ կոշտ մաղեր են դուրս եկած: Խողը երեքի չափ ուտում է, հինգի չափ հաստանում. տէրերն էլ նրան լաւ պահում և շատ ուտացնում են, որովհետեւ նրա ճարպը և մազը լաւ գին ունին:

82. ԽՈՉԸ ԿԱՂՆԻ ԺԱՌԻ ՏԱԿ

**Տ**ոզը, հաստարմատ կաղնու տակ կանգնած,  
Կերաւ կաղինը, պլուխը կախած,  
Մինչեւ կոկորդը կերաւ, լցուեցաւ.  
Ասկա կաղնու տակ հանգիստ քնեցաւ.

Յետոյ զարթելով բացաւ աչքերը,  
Եւ բութ կնճիթով սկսաւ փոքրել  
Ան կաղնի ծառի հաստ արմատները,  
Որից այդ ժամին սնունդ էր առել:

«Ճ՝ որ այդ բանը ծառին վնաս է,  
Նրան վերեւից ազոաւը կ'ասէ:  
Եթէ այդպիսով արմատը բանաս,  
Նա կը չորանայ, այս լաւ իմանաս:

— «Իսկ ինձ ի՞նչ վնաս, թէ կ'չորանայ,  
Ցածից ասում է նրան խոզն ազան.  
Ես դորա վրայ իսկի չեմ ցատում,  
Կաղինն է իմն, նա է գերացնում»:

«Ապերախտ, ասաց բարձրիցը ծառը.  
Ինչից են թափում այդ կաղինները.  
Գէթ կարենայիր մի վերեւ նայել  
Եւ կոյր աչքովը այդ բանն ստուգել»:

83. ԿԵՆԴՐԱՆԻՆԵՐԻ ՎԷՃԸ



ովը, ձին և շունը վիճում էին միմեանց հետ, թէ տանուտէրը նրանցից որին աւելի է սիրում:

«Բհարկէ նա ինձ ամնիցդ շատ է սիրում, ասում էր ձին.  
Ես նրա արօրը և ցաքանը քաշում եմ, անտառից նրա համար  
փայտ եմ բերում. նա շատ անդամ հեծնում է ինձ և քաղաք է  
գնում. նա առանց ինձ բոլորովին կորած կը լինէր:


— Ո՛չ, մեր տէրն ինձ աւելի է սիրում, ասաց կովը. քո-  
արածդ ի՞նչ է, որ մեծ-մեծ էլ խօսում ես. դորա մեծագոյն  
մասը իմ եղբայր եղն էլ կարող է կատարել. իսկ ես նրա բո-  
լոր ընտանիքը կաթնով կերակրում եմ:

«Դուք երկուսդ էլ սխալում էք, ոռնաց շունը. մեր տէրն  
ինձ ամենից աւելի է սիրում, որովհետեւ նրա բոլոր հարստու-  
թիւնը ես եմ պահպանում»:

Կենդանիների տէրը լսեց այս վէճը և ասաց նրանց. «Զուր  
տեղը միմեանց հետ մի վիճէք. դուք ամէնքդ էլ ինձ հարկա-  
ւոր էք և ձեղանից ամեն մինը լաւ է իւր տեղը»:

84. ՍԱԳԵՐ

Սագերը գնացին գետի ափը՝ կերակուր գտնելու, ճիճու-  
ներ որսալու: Իրիկնապահին պառաւը վեր առաւ ճիպոտը և  
գնաց, որ նրանց տուն բերի: Սագերը պառաւին որ տեսան,  
զուրը թափուեցան և սկսեցին լողալ: Պառաւը կանչեց նրանց-



Զո՞ւ, չո՞ւ, շատակեր,  
Սեւ ու սպիտակ իմ՝ սագեր,  
Հերիք, որչափ լողացիք,  
Կարմիր տոտիկ լուացիք,  
Հերիք, որչափ գետի մօտ  
Որդեր կերաք զուք տղղմատ.  
Գնա՞նք, զնա՞նք դէպի տուն,  
Չեզ կուտ կըտամ իրիկուն:

Բայց չար սագերը հանդարտ պատափն չուղեցան լսել.  
Ֆրկար ու բարակ վիզները ձգեցին, կարմիր թաղանթոտ ոտները շարժեցին, լայն թեսերը թափ տուփն, կտուցները բաց արին.


Չա՞ւ, դա՞ւ, զոռացին,  
Թոռդ ջուր մտնենք մենք կրկին.  
Դեռ չենք ուզում զնալ տուն,  
Մտնել աղտոտ հաւաքոն.  
Ճրի մէջը վայր ու վեր  
Փէտք է մաքրենք մեր թեսեր:

Պապաւը նստեց գետի ափի: Սագերը լողացան, լողացան, մէկ էլ յանկարծ թերը թափիթափ տուփն, միմեանց յնտեկից գորգուալով դուրս թափուեցան ջրից ու դէպի տուն վագեցին:



85. ԱշԱԽՆԻԵԵՐ

Իրուն աղանիներ, թաւոնն թոշուններ, կտրին նստելով, միմեանց նայելով, իրար սիրում են, միշտ համբուրում են և ձագուկներին մնաս բարով ասելով, դէպի դաշտն են շտավում, հատիկներ են հաւաքում, քուշերում փափկացնում, իրանց փոքրիկ ձագերին նախաճաշիկ պատրաստում: Խոկ բնի մէջ ձագերը, քնքոյշ աղանեակները, նստած են մնում, ուտել են ուզում: Մայրը տուն է յետ դառնում և պատրաստած մերնդով փոքրիկներին կերակրում:



86. ՈՒՐԻՇԻ ՎՐԱՅ ՄԻ՛ ՃԻԾԱՂԻԼ

**Ա**նդանիկը չար թակարդի մէջ ընկաւ. Խեղմը նրա մէջ թըրպըրտում էր և չարշարում. Խոկ փոքրիկ աղանին վերեկից նրան ծաղը էր անում: «Ամօթ չէ, ասում էր, որ օրը կէս օրին թակարդի մէջ ընկար: Ես համարձակ կարող եմ քեզ կէս օրին թակարդի մէջ ընկար: Ես համարձակ կարող որոհաւացնել, որ ինձ այլպէս հեշտութեամբ չէին կարող որո-

գայթի մէջ ձգելու: Սյս ասած-շասած, մին էլ տեսնես իւր ոտներն էլ խճուեցան ցանցի մէջ: Եւ արժանի էր. թող այնուհետեւ վրայ չծիծաղէր:



### 87. ԴԵՂՉԱՆԻԿՈՒՄ ԵՒ ՍՈՒՆԱԿՈՒՄ

ատուհանից կախած՝ վանդակի մէջ երգում էին գեղձանիկը և սոխակը: Հէնց որ սոխակը իւր երգն սկսում էր, փոքր որդին գնում՝ կտրում էր հօր առաջը, մատը մեկնում էր գէպի վանդակն ու ասում. «Ա՛ս, հայրիկ, տես, ինչպէս գեղեցիկ է երգում այս թռչունը»:

Մի օր էլ, երբ մանուկը ուշագրութեամբ լսում էր սոխակի երգը, հայրը ցած բերեց վանդակը, տուեց որդուն և ասաց. «Ապա իմացիր, ո՞րն է այս թռչուններից լաւ երգողը»: Մանուկը խկոյն գեղձանիկը ցոյց տուեց. «Ահա սա է լաւ երգողը, հայրիկ», ասեց:

### 88. ԵՐԳ ՊԱՆԴՈՒԽԾ ՊԱՏԱՆԵԿԻ

**Ծ**իծեռնակ, ծիծեռնակ, դու զարնան սիրուն թռչնակ, հէպի ո՞ւր, ինձ ասա՛, թռչում ես այդպէս արագ:

Ա՛ս, թռի՛ր, ծիծեռնակ, ծնած տեղս—Աշտարակ, Անդ շինիր քո բունը հայրենի կտուրի տակ:

Անդ հեռու ալեւոր հայր ունիմ սպաւոր, Որ միակ իւր որդուն սպասում է օրէցօր:

Երբ տեսնես դու նորան, ինձնից շատ ըարեւ արա՛, Ասա՛, թող նստի լայ իւր անքախտ որդու վերայ:

Դու պատմէ՛, թէ ինչպէս աստ անտէր ու ինեղծեմ ես, Միշտ լալով, ողբալով կեանքս մաշուել, եղել կէս:

Ինձ համար ցերեկը մութ է շրջում արեգը, Գիշերը թաց աչքիս քունը մօտ չի գալիս:

Ասի՛ր որ, չբացուած, թառամեցայ միացած, Ես ծաղիկ գեղեցիկ հայրենի հողից զրկուած:

Դէ՞հ, սիրուն ծիծեռնակ, հեռացի՛ր, թռի՛ր արագ Դէպի չայց աշխարհը՝ ծնած տեղս—Աշտարակ:



### 89. ԿԱՂԱՄԲԻ ԹԻԹԵՌԻ

անուկը պարտէզում բռնեց մէկ սպիտակ թիթեռ և բերեց իւր հօր մօտ: «Դա շատ վնասակար թիթեռ է, ասաց հայրը. եթէ դրանք բազմանան, մեր կաղամբը բոլորովին կ'ոչնչանայ»:

— Միթէ սա այդպէս ագահ է, հարցրեց մանուկը:

«Ոչ թէ ինքը թիթեռն է ագահ, այլ նրա թրթուրը, պատասխանեց հայրը: Այդ թիթեռն ածում է շատ մանր ձուաներ, խկանացից դուրս են սողում որդունքներ, որոնք անուանում են թրթուրներ: Թրթուրը շատ ագահ է. Նա պարիշ բան չունի, բացի ուտեն ու մեծանալը: Երբ նա միծառի բան չունի, բացի ուտեն ու մեծանալը: Երբ նա ոչ ուտում է, պատենաւորւում է: Այդ միջոցում նա ոչ ուտում է, այլ անշարժ լնկած է: Մի քանի ժամանակից յետոյ ոչ խմում, այլ անշարժ լնկած է: Մի քանի ժամանակից յետոյ նրանից թիթեռ է դուրս գալիս, ինչպէս ահա այդ բռնածոյ Վյդպէս կերպարանափոխուում են ամեն թիթեռներ: Ճուից գոյա:

Նում են թրթուրներ, թրթուրներից՝ պատեհաւորներ և պատեհաւորներից՝ թրթեռներ. Խակ թրթեռները ձու են ածում և մեռնում»:

90. ԶԱՏԻԿ

 Արդին. Նայիր, հայրիկ, ինչպիսի գեղեցիկ, կորիկ բզեզ եմ բռնել: Սրա գլուխը ու է, թերը կարմիր և թերի վրայ բժեր կան: Միթէ սա կենդանի է, հայրիկ. ամենին չի շարժում:

Հայրը. Կենդանի է, բայց մեռած է ձեանում. իր վեց ոտները ծալել, փորիցն է կացրել, բեխերը թագցրել է և սպասում է, որ գու նրան վայր գցես խոտերի մէջ: Դրա անունը զատիկ է: Չատիկը և աւելի էլ դրա թրթուրները ուտում—ոչնչացնում են շատ վնասակար կանչազոյն միջատներ, որոնք խմբովին կաչում են տերեներին և շատ վնասներ են տալիս նրանց:

Որդին. Նայիր, հայրիկ, բզեզն արթեացաւ և բարձրացաւ մատիս ծայրը: Այստեղից նա մեր կըզնայ:

Հայրը. Ա՛հա կտեսնես. մտիկ տուր, նա ինչպէս շարժում է իւր կարծր վերնաթերը, խակ նրա տակից հանում—շում է իւր խկական թերը, որոնք թեթե են և թափանցիկ:

Որդին. Ահա ժռաւ նա. Ի՞նչ խորամանկն է եղել:

91. ԹԻԹԵՐ ԵՒ ՄԱՆՈՒԿ

### Մանուկ

 Երո՞ն թիթեռ, ինձ ասա՛, մանուկ և ենո՞ թէ ինչո՞վ ես դու ապրում. Ամրող օրը իսկում ես, ի՞նչպէս է որ չես յոգնում:

ԹԻԹԵՐ

Սիրոն կանաչ դաշտերում՝  
Ես ապրում եմ՝ համարձակ,  
Ժաղկանց բուրմիւնքը անուշ  
Իմ՝ կերակուրս է միակ:

Բայց իմ կեանքն շատ կարծ է,  
Նա մի օրից չէ երկար.  
Բարի եղի՞ր, ո՞վ մանուկ,  
Խնայի՞ր ինձ, ձեռք մի՛ տար:

92. ՀՐԵՂԵԾ ՁԻ

Ա.



Ի ծեր մարդ երեք որդի ունէր՝ երկուսը խելօք, խակ երբորդը լիմար և կեղաստ: Գիշեր ու ցերեկ լիմարը տանը վայր ընկած՝ ոչինչ գործի չէր գնում:

Այս մարդը մի օրավար ցորեն էր ցանել. ցորենը գուրս էր եկել, մեծացել և գեղեցիկ հասկել բռնել. միայն վիշերէկը եկել, և ասկեր կակերը և գեղեցիկ հասկել բռնել. միայն վիշերէկը մէկը գալիս էր ու տրորում արտը: Այս բանին մի ճարները մէկը գալիս էր ու տրորում արտը: «Սիրելի որդիք, գիշերեւ համար՝ ծերը իւր որդոցն ասաց: «Սիրելի որդիք, գիշերները հերթով գնացէք, արտը պահպանեցէք և աշխատեցէք գողին բռնել:

Առաջին վիշերը մեծ որդին գնաց պահպանութիւն անելու, բայց կէս վիշերին քունը տարաւ ու քնեց: Առաւտեան լու, յետ դարձաւ տուն և ասաց. «Ամբողջ վիշերը չքնեցի, սառայ, յետ դարձաւ տուն և գնաց, վիշերը երկորդը փայտ դարձայ, բայց գող չտեսայ»: Միւս վիշերը երկորդը գնաց, ողջ վիշերը քնեց և առաւտեան մինոյն լուրը բերեց: Վիշերը գիշերը հերթը լիմարին հասաւ: Նա մէկ պարան վեր տարաւ և գնաց, արտի մօտ նստեց, գողին սպասեց: Կէս

գիշերին մօտեցած՝ նրա քունը տարաւ։ Յիմարը վեր առաւ դանակը, մատը մի փոքր կտրեց, մէջը աղ ածեց, մըմնչացրեց և այսպիսով քունը փալսցրեց։ Կէս գիշերին, մէկ էլ տեսնես, աշխարհ շարժուեցաւ, քամի վերկացաւ և երկնքիցը հրեղէն թեով մի ձի ցած իջաւ, արտի մէջ մտաւ. քթածակերից ամպ էր բարձրանում, աչքերում, կարծես, կայծակ էր փալում։ Եւ ձին սկսեց ուտել ցորեներ, ոչ անքան ուտել, ինչքան կոխսուել,

Փորսող տալով մեր յիմարը կամաց-կամաց մօտեցաւ ձիռն և յանկարծ թոկը նրա պարանոցը գցեց, բռնեց։ Զին ամենայն զօրութեամբ ձգձգեց, յետի ոտների վրայ ծառս եղաւ, բայց մեր յիմարի ձեռքից չափատուեցաւ։ Ապա կանգնեց ու սկսեց աղաչել. «Յնիհամնէս, բարեկամ, ինձ արձակիր, ես դրա փոխարքէն մեծ ծառայութիւն կ'անեմ քեզ»։

«Նատ լաւ, բայց ես քեզ յետոյ ի՞նչպէս գտնեմ», ասաց  
Յովհաննէսը:

Երբոր կամենաս ինձ կանչել, դուքս կըգաս դաշտը, երեք  
անգամ կըշվացնես և կըկանչես. «Հղեղէն ձի, հրեղէն ձի, շու-  
տով ինձ հասիր». ես այն բոպէին քո առաջը կըլինիմ: Յով-  
հաննէսն արձակեց ձին և պատուիրեց, որ միւս անգամ ար-  
տը չարորէ:

Յիմարը յետ դարձաւ տուն։ «Ի՞նչ տեսար, ի՞նչ շինեցիր», հարցրին նրան եղբայրները։ Յովհաննէսը պատասխանեց. «Ես մի հրեղէն ձի բռնեցի. նա ինձ խոստացաւ, որ էլ մեր արտը չի մտնիլ, ես էլ նրան արձակեցի»։ Մնացած բաները նա չպատմեց։ Նատ ծիծագեցան եղբայրները խեղճի վրայ, միայն, ճշմարիտ որ, այն օրից յետոյ ոչ ոք արտին վնաս չէր տալիս։

**Բ.** յս անցըից մի օր յետոյ թագաւորից ամեն գիւղեր ու քաղաքներ մունիատիկներ ուղարկուեցան, որոնք բարձր ձալ-

Նով կանչում էին և ասում. «Ո՞վ պարոններ, քաղաքացիներ,  
ազնուականներ և գիւղացիներ, մեծ թագաւորը տօն է կատա-  
րում և ձեզ ամենքիդ հրաւիրում է. երեք օր պէտք է ուրա-  
խութիւն լինի: Նաւ ձիաներդ վեր առէք. թագաւորի միակ  
և արեգակից գեղեցիկ աղջիկը բարձր բուրգի պատշպամբում  
նստած կըլինի. ով որ իւր ձիուլ կարողացաւ թոշիւ, թագա-  
ւորի աղջկան հաօնել ու նրա մատից մատանին հանել՝ թա-  
գաւորը նրան իւր աղջիկը կնութեան կըտայ»:

Յովհաննէսի եղբայրներն էլ գնացին այս հանդէսը, բայց  
ոչ թէ իրանք թռչելու, այլ ուրիշներին նպակած։ Յովհաննէսը  
խնդրեց, որ իրան էլ հետմերը տանեն։ «Գու ինչի՞ համար ես  
գալիս, յիմար, ասացին եղբայրները, մարդկանց վախեցնելու,  
ի՞նչ է. տաներ վէր ընկիր»։

Եղբայրները ձի նստեցան, գնացին: Յովհաննէսն էլ նրանց  
յետեւից ծածովկ դուրս գնաց դաշտը և իւր հրեղին ձիռն կան-  
չեց: Որտեղից որ էր՝ ձին խոկոյն վագեց, Յովհաննէսի առա-  
ջին կանգնեց: Յովհաննէսը ձիու գլխովը թռաւ, որից յետոյ  
կերպարանքն էլ փոխուեցաւ և մի այնպիսի քաջ տղամարդ  
դարձաւ, որ տեսնողն ամեննին չէր ճանաչիլ, թէ առաջուայ  
կեղտոտ Յովհաննէսն է: Յետոյ նա հեծաւ ու ձին ըշեց դէպի  
հանդէս: Գնաց - տեսաւ, որ թագաւորի տան առաջ, ընդարձակ  
հրապարակում, անհամար ժողովուրդ էր հաւաքուած, իսկ բարձր  
աշտարակի պատշգամբի վրայ թագաւորի աղջիկն էր նստած.  
ինքը գեղեցիկ լուսնի նման, մատանին փայլում էր արեգակի  
նման: Բայց ոչ ոք չէր համարձակում դէպի վեր ցատկել. նվ  
էր իւր զլիսից ձեռք վերառել: Մեր Յովհաննէսը խիեց իւր  
հրեղին ձիու կողերին: Ձին մոնչաց ու ցատկեց. միայն երեք  
աստիճան մնաց, որ համնէր թագաւորազն աղջկան: Ժողովուր-  
դը լեզուն կծեց — զարմացաւ: Իսկ Յովհաննէսը ձիու բերանը  
յետ դարձրեց ու փախաւ: Եղբայրներն ուշ ճանապարհ տուին:  
Յովհաննէսը մի լաւ մտրակեց նրանց և անյայտացաւ: Երբ որ

հասաւ նոյն դաշտը, ձիու վրայից թռաւ, իւր առաջուայ կերպարանքն ստացաւ, ձին արձակեց ու տուն գնաց: Եղբայրները երեկոյին յետ դարձան քաղաքից և դարմացած պատմեցին իրանց հօրը, ինչ որ տեսել էին: Իսկ Յովհաննէսը լսում էր և քթի տակին ծիծաղում:



Պ.

**Մ**իս օրը մեծ եղբայրները միւսերի նման կրկին գնացին հանդէս և Յովհաննէսին հետները շտարան: Յովհաննէսը

դուրս եկաւ դաշտը, ձիուն կանչեց, հեծաւ ու քշեց: Երբոր թագաւորի պալատին մօտեցաւ, առաջուանից աւելի մարդ տեսաւ. ամենքն էլ թագաւորազն աղջկան էին մտիկ տալիս, բայց ոչ ոք չէր կամենում ցատկել: Նա խփեց իւր ձիու կրղերին. ձին մոնշաց ու ցատկեց. միայն երկու աստիճան մնաց, որ աղջկան հասնէր: Ժողովուրդը լեզուն կծեց—դարմացաւ, իսկ Յովհաննէսը ձիու բերանը յետ դարձրեց ու փախաւ: Նրա եղբայրները ուշ ճանապարհ տուին: Յովհաննէսը նրանց մի լաւ մտրակեց, ճանապարհ բացեց, գէպի դաշտ վազեց, իւր ձին արձակեց ու յետ դարձաւ տուն: Եղբայրներն եկան, իրանց հօրը պատմեցին բոլորը. իսկ Յովհաննէսը լսում էր և քթի տակին ծիծաղում:

Երբորդ օրը եղբայրները նորից գնացին հանդէս: Յովհաննէսը դուրս եկաւ դաշտը և հրեղէն ձին հեծնելով՝ ինքն էլ գնաց. բայց երբոր աշտարակին մօտեցաւ, ձիուն այնպէս մտրակեց, որ նրա աղդրի կաշին պոկուեցաւ: Կենդանին մոնշաց, սաստիկ ուժով վեր ցատկեց և պատշամբին հասաւ: Յովհաննէսը շտապեց, թագուհու մատից թանկապին մատանին հանեց, ձին յետ դարձրեց և սկսեց փախչիլ: Թագաւորը, թագուհին և բոլոր ժողովուրդն սկսեցին գոռալ. «Հայ, բռնեցէք, բռնեցէք . . . Բայց որտեղ . . .

Յովհաննէսը տուն եկաւ՝ ձեռքի մէկը փալասով փաթաթած: «Այդ ինչ է եղել ձեռքը», հարցըին հարսները:

«Մորի քաղելիս քարից վայր ընկայ, ձեռքս պլոկուեցաւ, ոչինչ բան չկայ», ասաց Յովհաննէսն ու գնաց, կրակի առաջ ձգուեցաւ:

Եղբայրները յետ դարձան և մեծ դարմանքով պատմեցին իրանց հօրը բոլորը, ինչ-որ պատահել էր քաղաքում: Այդ միջոցին Յովհաննէսը կամեցաւ նայել մատանուն, փալասը բարձրցրեց թէ չէ, բոլոր խրճիթն սկսեց լուսաւորուիլ: «Յիմար, կրակի հետ չեն խաղալ, գոռացին եղբայրները. փոքր մնաց

խրճիթը կրակ տայիր. ամենեին պահելու պտուղ չես. վաղոց պէտք էր քեզ տանից դուրս անել»:

Պ.

**Ե**րեք օրից յետոյ թագաւորից մունետիկներ են գալիս և ասում են, որ բոլոր մարդիկ, որոնք ընակւում են նրա թագաւորութեան մէջ, պարտաւոր են գնալ նրա մօտ՝ խնջոյք անելու, և ով որ թագաւորի այս հրամանը չի կատարիլ, նրա գլուխը կը կտրին:

Ուրիշ հնար չկար. ծերունին իւր բոլոր ընտանիքով գնաց հրաւէրքի: Եկան, ժողովուեցան, սփռոցի շուրջ շարուեցան, կերան, խմեցին, շատ ուրախացան: Խնջոյքի վերջում թագաւորի աղջիկը իւր ձեռքով սկսեց ամենքին մեղրաջուր բաժանել: Ամենից յետոյ Յովհաննէսին մօտեցաւ: Յովհաննէսն էլ այն օրումն էր, որ թշնամիկ չվնի՝ չորերը պատառուած, մրուած, մազերը կեղտոտ, խճճուած, ձեռքի մէկն էլ մի կեղտոտ փալասով փաթաթած. իստակ զգուելի: «Ճգայ, ձեռքդ ինչի՞ է կապած, հարցրեց թագաւորի աղջիկը. բայց արա, տեսնեմ»:

Յովհաննէսը ձեռքի փաթաթանը յետ արեց և մատի վրայ փայլեցաւ թագուհու մատանին: Աղջիկը բռնեց նրա ձեռքից, տարատ իւր հօր մօտ և ասաց. «Հայրիկ, ահա իմ փեսացուն»:

Սկսեցին Յովհաննէսին բաղանիք տանել, զլուխը սանրել, մազերն օծել, չորերը փոխել, և նա այնուհետև այնպիսի գեղեցիկ տղամարդ դարձաւ, որ իւր հայրն ու եղբայրներն էլ չէին կարողանում ճանաչել: Թագաւորը եօթն օր, եօթը զիշեր հարսանիք արեց, մեծ խնջոյք տուեց և Յովհաննէսին փառքով պսակեց:



94. ԳՐԱՑԱԽՏԱԿ ԵՒ ՔԱՐԵՑԱԽՏԱԿ

**Գ**րատախտակը շինում է ատաղձագործը, իսկ ներկարարը ներկում է նրան սև գոյնով։ Գրատախտակը քառանկիմնի ձև ունի և դրուած է շարժուն ոտների վրայ կամ կախած է պատից։ Գրատախտակը միշտ դաստանն մէջն է մնում։ Նրա վրայ գրում են կաւիճով։

Քարետախտակները կտրում են քարտաշները շերտպարից, իսկ հիւսնը փայտէ շրջանակների մէջ է դնում նրանց։ Քարետախտակները դրած են աշակերտների առաջ, զրահեղանների վրայ։ Աշակերտներն իրանց քարետախտակները հետները տուն են տանում։ Քարետախտակի վրայ գրում են քարեգրչով։

Համեմատեցէք քարետախտակը գրատախտակի հետ։

95. Կ Ա Ի Ի Ծ

**Պ**ոքրիկ Նազելին վաղուց վիտէր, որ կաւիճով գրում են գրատախտակի վրայ, որ նորանով տողում են մահուգը՝ ձեռնու յամանակ, որ կաւիճով կարելի է ձեռներն ու շորերը վոշոտել, որ նա սպիտակ է ու փափուկ և կարելի է փշրել, փոշի գարձնել։ Ուրիշ ոչինչ չէր իմանում Նազելին կաւիճի մասին։ Մի անգամ նա հարցրեց իրանց աղախնին, թէ նրանց կից են ստանում կաւիճը։


«Խանութներիցն են գնում», պատասխանեց աղախնիր։

— Շատ լաւ։ իսկ խանութներում ի՞նչ տեղից է։

«Սարերից . . . այդպիսի սարեր էլ կան։»

— «Հա, ուրեմն դա հող է, մտածեց Նազելին և էլ ոչինչ չհարցրեց։

Բայց որքան զարմացաւ մեր Նազելին, երբ մի անգամ նկատեց գլքի մէջ մի այնպիսի պատկեր, որպիսին նկարած է



## ՇՐՋԱՆ ԶՈՐԻՌՈՐԴ



### 93. ԴԱՇՏ ԵՒ ՈՒՍՈՒՄՆԱՐԱՆ

արգիկ հերկում են դաշտը և հացահատիկներ են ցանում։ Մանուկները գնում են ուսումնարան և Աստուծոյ խօսքը սովորում են։

Հատիկները ծածկում են փափուկ հողի մէջ։ Աստուծոյ խօսքը մտնում է մանուկ սրտերի մէջ։

Ոնձրեկից երկերը փափկանում է, արկից տաքանում։ Խելացի խօսքերով ու քնքութեամբ հոգին եռանդ է ընկնում։

Հողի տակ, խաւարումը, չեն ննջում սերմերը։ Զէ զնջում սրտիցը բարի ուսումնարները։

Սերմերը բուսնում են կանաչ ընձիւղով։ Ուսումն աւանդում են խելօք խօսքերով։

Արտերը ծածկում են ոսկեգոյն հունձով։ Տիրոջ խօսքը պսակում է բարի գործերով։

Աստուծած, ժամանակին տնեւը անձրի, արի։ Հայր, աճեցրու մեր սրտերում բարութեան սերմերը։



× 25

այստեղ, և նրա տակը կարդաց՝  
կաւիճ: Նազելին վագեց իւր  
մօր մօտ. «Մայրիկ, սիրելի  
մայրիկ, միթէ սա կաւիճ է  
նկարած»:

—Այս, որդի, տեսնում ես, գրած է . . .

«Բայց մեր կաւիճը այդպէս չէ, մայրիկ»:


—Նա էլ այդպէս կ'երկի, եթէ խոշորացոյցի տակ դնենք:  
Խոշորացոյցը մի խողովակ է, որ առարկաները ցոյց է տալիս  
մեծ դիրքով:

Այնուհետև մայրն սկսեց պատմել, թէ ինչից և ինչպէս  
է գոյանում կաւիճը 1):

Նազելին ուշադրութեամբ լսեց մօրը: Խօսակցութիւնը վեր-  
ջանալուց յետոյ Նազելին նստած էր լուռ և մտածում էր. մտածե-  
լու էլ շատ բան կար. մօր պատմութիւնը աղախնի պատասխա-  
նի նման չէր. սրան հարկաւոր էր հասկանալ և լաւ հասկանալ:

### 1) Ուսուցիչը բացատրում է.

Կաւիճն այն մանր կենդանիների բունն է, որոնք չինում են  
կաւիճէ և կրէ լեռներ: Դրանք բնակում են ծովային ջրերում և այն-  
քան մանր են, որ հասարակ աչքով չեն տեսնուիլ: Ուսումնականներն  
այդ մանրիկներին անուանում են ինֆուզօրիա: Նրանք շատ են  
և իրանց մանր կաշուի մէջ սողում են ջրի յատակում. . . այն տեղ  
ապրում են-ապրում ու մետնում, իսկ իրանց կաշին—վահանը թո-  
ղում են ջրի յատակում: Զուրն էլ աւազի հետ քշում է նրանց իրան  
ալիքներով դէպի ծովի ափերը: Դրանք այնքան շատ են, որ չնայելով  
իրանց մանրութեան, այդ մետած մարդինները միմեանց վրայ դար-  
սուելով՝ ծովի յատակից, շատ տարիներ անցնելուց յետոյ, վեր է բար-  
ձրանում և հապատաբար փայլում է արեգակի տակ մի ամբողջ սար:  
Ահա ինչպիսի նշանաւոր կենդանիներ են այն մանրիկները. նրանք  
մինչեւ անգամ ամբողջ սարեր են չինում: Երբեմն այն սարերի վրայ  
աճում են խոտեր, թփեր, քաղաքներ, գիւղեր: Մեր պատերն սպիտա-  
կացնող կիրն էլ քիչ չունի այն ջրային մանրիկների պատեաններից:



96. ՀԱՅՆ ՌԻՑԵԼՈՎ, ԲԱՆՆ ԱՆԵԼՈՎ

շխատասէր մանուկը նստել էր լուսամուտի ա-  
ռաջ և պատրաստում էր իւր դասերը: Դուրսն  
էլ արևն այնպէս փայլում էր, որ կարծես թէ  
ասում էր մանկանը. «Բաւական չէ, ինչ կար-  
դացիր, վեր կաց, խաղերդ սկսիր»: Մանուկը պատասխանում  
է արեգակին. «Ո՛չ, պայծառ արեկի, ոչ. այժմ խաղի միջոց  
չունիմ, թնդ առաջ դասս վերջացնեմ»:

Մանուկը գրում է ու կարդում. իսկ պատուհանի տակ,  
ճղան վրայ նստած, սիրուն թուշունն է երգում և միշտ այս  
բանն է ասում. «Հերիք չէ կարդաս. մի քիչ էլ խաղան»:

Մանուկը թուշունին պատասխանում է. «Ո՛չ, սիրուն  
թուշնակս, ոչ. այժմ խաղի միջոց չունիմ, թող առաջ գործու-  
միջոցնեմ»:

Մանուկը դարձեալ նստած է՝ գիրքն առաջին և լուսա-  
մուտին էլ չէ նայում. իսկ պարտիզի կարմիր կեռասը ականջի  
տակ այս է ասում. «Բաւական չէ, ինչքան կարդացիր, դուրս  
արի գուռը, ծառը բարձրացիր, հասած պտուղներս կեր, ու-  
րախացիր»: Մանուկը կեռասին պատասխանում է. «Ո՛չ, իմ  
քաղցրատես կեռաս, ոչ. այժմ խաղի միջոց չունիմ, թնդ ա-  
ռաջ դասս վերջացնեմ»:

Մանուկը կարդաց ու գրեց, բոլոր գործը վերջացրեց,  
գլրերն արկղի մէջը զրեց, ապա դէպի այգին վագեց ու հա-  
մարձակ ձայնով կանչեց. «Այն ով էր, որ ինձ հրաւիրում էր»:  
Արեգակն այժմ նրա համար աւելի լաւ էր փայլում. փոքրիկ  
թուշնակը իւր երգը նրան էր նուիրում. իսկ կեռասենին ծի-  
ծաղելով քաղցրիկ պտուղ էր ընծայում:

97. ԱՐՑԻՏ



ոլակը, որ մի սրամիտ մանուկ էր, իւր հօր գլուխեղանի առաջ նստած, մատիտներ էր կըտրատում իրան համար և հօր համար։ Նա քանի կտրում էր, կոտրում էր։ Թէ մատիտ կտրելը դժուար չէր, բայց այսօր այդ բանը նրան չէր յաջողում։ Յոլակը մտածման մէջ էր. նա անուշափիր էր, նրա համար էլ գործը վլուխ չէր դալիս։

— Ի՞նչ ես անում, փոքրիկս, ներս մտնելով առաց հայրը. երկում է՝ խելքդ ուրիշ բանի վրայ է, նրա համար էլ գործը ձեռիցդ վայր է ընկնում։

«Հա, հայրիկ, ես ուզում եմ իմանալ, թէ ինչպէս է այս սեւ ու փալուն չափը փայտէ ճիպոտի մէջ մտել ու մատիտ դարձել։

— Ե՛ն, որդի, կուզես հարիւր մատիտ կտրատիր ու կոտրատիր, բայց էլի քո խելքովդ ոչինչ հաստատ տեղեկութեան չես հասնիլ. . . Դա արդէն շատերին յայտնի է—գրի մէջ կարդա, հարցրած. . . իսկ ինչոր ամենքն էլ վազուց դիտեն, նրա մասին հարկաւոր չէ վլուխ ցաւեցնել։

«Գրերի մէջ ես այդ բանին չեմ պատահել, իսկ իթէ գու պատմես, հայրիկ, ես շատ չեռինակալ կըլինիմ, —միայն շուտ, որովհետև պէտք է գնամ՝ դասերս պատրաստեմ»։

— Շատ լաւ. նայիր այդ կտորներին, որ դու այդտեղ թափել ես. նրանք սև են, նշանակում է՝ ի՞նչի նման են։

«Ածուխի նման են, հայրիկ»։

— Շատ լաւ. բայց նկատիր՝ ածուխն աւելի փափուկ է և, երբոր կոտրում ես, հաւասար չէ կոտրում։ իսկ երկաթը, տեսել ես, ի՞նչպէս է կոտրում. — համեմատիր. . .

«Հառկացայ. Սյստեղ խառնուած են երկաթն ու ածուխը»։  
— «Ճշմարիտ է, ասաց հայրը և համառօտ կերպով պատմեց, թէ ինչպէս է պատրաստում բնական ու արհեստական կապարագրիչը ։»



98. ԳՈՐԾԸ ԵՒ ԵԶԸ

ի գորտ դաշտում մի եղ տեսաւ մեծ ու գեր։ Զես ասիլ, որ գորտն էլ նախանձ է ունեցել. մտքից անցրեց, թէ արի մի փորձ փորձեմ, տեսնեմ՝ կարող եմ եղանը հաւասարուեմ։ Փորտը ուռչիլ սկսաւ, փքուեցաւ, տողեցաւ, դարձաւ, ընկերին ասաւ։

«Նայիր, կրկուան ընկեր, արդեօք եղան չեմ հասել։ Զէ, սանամայր, ասաց նա. դու ուր տեղ ես և նա ուր. ձեր մէջը մեծ սարեր կայ։

«Հապա հիմա, նորից նայիր, տես թէ ուրքան վքուեցայ։ Դէս, ի՞նչպէս եմ, ասիր տեսնեմ, այժմ այդ եղան կընմանեմ։

1) Ուսուցիչը բացատրում է.

Ածուխն ու երկաթը անհաւասար չափով, այսինքն մէկից շատ, միւսից քիչ, հսղի տակը խառնուել են միմեանց հետ, միացել են և դրանից առաջացել է կապար աքարը. Մարդկեկ էլ գտել են նրան, սողոցել են և անց են կացրել ճիպոտի մէջ ու մատիտը պատրաստուել է. Բայց այս էլ պէտք է իմանաս, որ սարերում գտած կապարագրաբառի չեն բաւականացել մարդկեկ. այժմ նրանք միննոյն բանը շինում են արհեստական կերպով, այսինքն՝ գործարաններում. դրա համար առանձնապէս շինած հնոցներում երկաթը հալում են, նրա հետ ածուխ չեն խառնում և կապարագար են պատրաստում. պատրաստելուց յետոյ նրան ջոկջոկում և ստանում են զանազան տեսակներ՝ փափուկ, պինդ... Փափուկ մատիտների մէջ երկաթը սակաւ է, իսկ պինդերի մէջ նա համեմատաբար աւելի է։

— Զէ, հոգի, չէ՞ մասնակի բայց անդաման է առաջաւահան և առաջաւահան է առաջաւահան:

— Տարբերութիւնն ոչինչ է. ինչոր էիր, էլ այն ես:

Բայց մեր փորտը նորից այնքան վրուեցաւ ու վրուեցաւ, որ վերջապէս շատ ուռչելուց ճաքեցաւ:

### 99. ԴԵԾԻՆ



արդիկը, որ մի փոքրիկ, աշխատասէր և խելօք մանուկ էր, մի անգամ, գրքից դասն արտագրելու ժամանակ, թառի տեղ ալ գրեց: Վարդիկը նկատեց իւր սխալը և սկսեց լաց լինել:

«Մի լաց լինիր, սիրունիկ, ասաց նրան իւր մայրը. քան թէ լաց ես լինում, վեր առ, ուղղիր»:

— Բայց այն ժամանակ կրկեղտոտուի, մայրիկ. իսկ վարժապետը պատուիրել է, որ մաքուր և անսխալ արտագրմէք: «Ե՛ս, այդ ցաւին էլ ճար կ'անուի. վեր առ ուստինը կամ գրչահատը և կամաց ու զգուշութեամբ քերիր սխալ գրած տառը. միայն զգոյշ կաց, որ թուղթը ծակես»:

— Յետոյ այդ քերած տեղը ինչպէս ո զրեմ, մայրիկ. չէ որ թանաքը կրծծի և աւելի վատ կըլինի:

«Այ ինչպէս կ'անես. զգուշութեամբ քերելուց յետոյ՝ դու նրան կըտրորես գրչահատի կոժով. լաւ տրորելուց յետոյ՝ շուտով կըդրես հարկաւոր տառը և խկայն աւաղ կածես վրան . . . էլ ոչինչ չի նկատուիր»:

Լացը դադարեց. տառը ուղղուած էր արդին և Վարդիկն սկսեց իւր մօրը հարցուիրութ անել:


— Ո՞րտեղից է, մայրիկ, այդ պատուական ուստինը, որ այդպէս զարմանափ կերպով ձգւում, մատովդ է փաթաթւում. իսկ երբոր քաց ես թողում, նորից սեղմուում, կուչ է վալիս: Իսկ այն միւսը հազցրած է փայտի մէջ և ինչ երկար է ու

մէծ . . . Ո՞րտեղից են այդ բոլոր ուստինները, մայրիկ:

«Մի տեսակ ծառ կայ, ասաց մայրը, որ աճում է տաք երկիրներում. այդ ծառից հիւթ է դուրս գալիս, իսկ այդ հիւթիցը կամ խէժիցը մարդկի պատրաստում են զանազան տեսակ ուստիններ. նրանցից մի քանիսը թանաքով գրածի համար են, միւսները մատիտով գրածի համար. Ուստինից շինում են նոյնպէս կրկնակօշիկներ, կօշիկներ, գնդակներ և ուրիշ բաներ: Մի ուրիշ անգամ էլ, երբոր ժամանակ կ'ունենամ, ես քեզ ցոյց կըտամ, թէ ինչպէս լաւ է այրում ուստինը»:

«Այժմ, մայրիկ զան, այժմ ցոյց տուր. լուցկին քսես թէ չէ, կրակը պատրաստ կըլինի:

Մայրը վառեց ուստինը և նա սկսեց այրուիլ: Վարդիկը հանգարտ և անշարժ նայում էր: Նրա աչքերն էլ, կարծես, կրակ էին ընկել և այրում էին հետաքրքրութիւնից:



### 100. ԱՌԻՒԺԸ ԵՒ ՄՈՒԿԸ

ոխծը քնած էր: Մուկը վազեց-անցաւ նրա վրայով: Մոխծը դարթեց և բանեց նրան: Մուկը խնդրեց, որ արձակէ իրան և խոստացաւ, որ դրա վոխարէն լաւութիւն կ'անէ նրան: Մոխծի ծիծաղն եկաւ, որ մուկը նրան լաւութիւն է խոստանում, բայց էլի արձակեց:

Քիչ ժամանակից յետոյ որսորդները բռնեցին առխծին և հաստ թուկով կապեցին ծառից: Մուկը լսեց առխծի մոխչոցը, մօտ վազեց, իւր սուր տատմներով կոծեց-կտրեց թուկը և յետոյ ասաց. «Միաբդ է, որ դու ծիծաղեցիր ինձ վրայ, երբ ես խոստացայ քեզ լաւութիւն անել. այժմ հաւատնամ ես, որ մինիցն էլ կարելի է լաւութիւն սպասել»:

### 101. Упражнения

**Փ**ոքրիկ Սալթինիկը՝ հեալով և հազիւ շունչ քաշելով, ներս  
վաղեց մօր սենեակը և բացականչեց. «Մայրիկ-մայրիկ,  
տես թէ ի՞նչտիսի սև մալդ է անցիենում մեր փողոցով. Նրա  
վրայ, ոտից մինչև գլուխը, կախվածած են մի տեսակ գե-  
ղեցիկ, փափլիկ բաներ, սիրուն ծակոտիներով։ Նրանցից մի-  
նին ես այն էր՝ ձեռք էի տալիս, բայց որ իմանաս, թէ նա  
ի՞նչպէս ծիծաղելի կերպով կուչ եկաւ, կ'առես թէ փախեցաւ  
ինձանցից. յակ յետոյ ինքն իրան էլլ ուղղուեցաւ։

—Հա, հասկանում եմ, ասաց մայրը. դա սպոնգ վաճառող յոյն է. գնանք, գնենք մի քանիսը. Ես վաղուց մտադիր էի գնել Յուլակի համար. Եւ բոլենիով Սաթինիկի ձեռքից, մայրը դուրս գնաց բազը, ուր ներս էր եկել սպոնգ վաճառողը:

Մինչև որ Սաթինիկի մայրը զոկում էր սպոնտներից աւելի ամուրներն ու փափուկները, աղջիկն անդադար սեղմում էր կամ մէկ կամ միւս սպոնտը. Նրան սաստիկ գրաւում էր այն բանը, թէ ի՞նչպէս են նրանք սեղմում և նորից բացւում, լայնանում. Մայրը գնեց մի քանի սպոնտներ, վճարեց նրանց արժեքը և յոյնն էլ արդէն պատրաստւում էր հեռանալու. Իսկ Սաթինիկը դեռ էլի բանում էր իւր փոքրիկ թաթիկներով չշոտ սպոնտները և հետաքրքրութեամբ նայում էր կամ յոյնին կամ մօրը:

—Գէհ, զնանք, աղջիկս, տեսնում ես ծախողը հեռանում է:

«Ա. իսր դա նրտեղից է հաւաքել այդքանը, մայլիկ»:  
— Գևանո, մենոնո, ես վեպու տանու իռասատմեմ քեզ

— Գետա կը, գետա նը. Ես յետոյ տանը կը պատառ քնդի:  
Եկան տոռմ: Աղջիկը չէր հեռանում մօրից, այլ շարու-  
նակ իմնդրում էր, որ ուղարձէ, թէ որտեղից է հաւաքել յոյնը  
այդքան սպաւնդները:

Մայրը կատարեց իւր աղջկայ ինդիրը և պատմեց, թէ  
ինչտեղից էստացւում սպունդը ։



Fig. 1. - A photograph of a portion of the floor of the Cenozoic basin of the Colorado River, showing the great thickness of the alluvium.

ի էշ, աղ բարձած, եկաւ առուակի մօտ և կամենում  
էր անցկենալ միւս կողմը, բայց անցկենալիս՝ գայթե-  
ցաւ և ընկաւ ջուրը: Երբ նա դուրս եկաւ առուից,  
սաստիկ գարմացաւ, որովհետեւ բեռլ շատ էր թեթևացել: «Սա

### 1) Ուսուցիչը՝ պատմում է

Այս երկիրը, որտեղ ապրում են յոյները, կողիներով ցըռուած է ֆոլի մէջ։ (Ծավը մի մեծատարած ջուր է, այնքան մեծ, որ երբ միանդամ նրա մէջն են մոնում, ել շուտով ցամաքի երես չեն տես-նում։) Այս ծավի ափերի մօտ յոյներից աղքատները լողարով խո-րասուզում են ջրի տակը և այնտեղից հանում են այդ սպունգները։ Քրիցը նոր հանած ժամանակը սպունգներն ամենեին նման չեն լի-նում մեր գնածներին։ Նրանք ամբողջապէս ծածկուած են լինում լոր-ձիւնով, այնպէս որ այդ խոր ծակոտիներն ամենեին չեն նշմարուում։ Եյն լորձիւնը նոյնպէս կենդանի է և ապրում է ծովի յատակում, թէև ամենեին չէ կարող իւր տեղը փոխել։ Բայց քանի որ նրան չեն պո-կել իւր ծննդեան տեղից, նա ապրում և շարժում է իւր շօշափուկ-ները։ Այդ շօշափուկներով նա ջրիցն ընդունում է իրան սնունդը։ Նրանք շատ անդամ բռնում են բաւական մեծ տարածութիւն ծովի նրանք շատ անդամ բռնում են բաւական մեծ տարածութիւն ծովի լորձում։ Ազրոր ծովի տակից հանում են նրան, ստիպուած են լի-նում երկար ժամանակ լուսալորով մաքրել այդ անշարժ կենդանու նում երկար ժամանակ մասերին, որտեղ հիմա էլ ներս են ծծում ջուրը, բայց կոտկենասոր մասերին, որտեղ հիմա էլ ներս են ծծում ջուրը, բայց հէնց աեզմուում ես թէ չէ, նորից դուրս են թողում։ Հէնց իւր այս յատ-կութեամբն է նա մեզ պատահի և օգտակար։ Ուրիմն մեր ունեցած սպունգը այն ծովային կենդանու ամբամասը՝ նրա ուկրակազմն է։

լաւ բան է, ասաց նա. զրի մէջ համ ինքդ ես հովանում, համ բեռդ է թեթևանում: Այս բանը չենք մոռանալ: Մի քանի օրից յետոյ՝ էշը կրկին անդամ պէտք է անց կենար միենոյն առուակով. բայց այս անդամ նա բեռնուած էր սպունդով: Առուակի մէջտեղը հասնելով, էշը զրումը անվրդով պառկեց, որ նորից թեթևացնէ իւր բեռը: Բայց հակառակը եղաւ: Եւ մեր էշը շատ էլ չարշարուեցաւ, այնուամենայնիւ տեղից կանդնել չկարողացաւ ու խեղդուեցաւ:

103. ՓՈՐՉԱՆՔ ՈՒ ՊԱՏՈՒՀԱՍ

**Գ**իւզային ցորեն էր տանում զրադացը: Զուալը ծակ էր և մի քանի ցորենի հատիկներ թափուեցան ճանապարհին: Ծտերը խմբովին ցած եկան և սկսեցին ուտել հատիկները, բայց պքաղաղը մօտ վաղեց և ծտերին հալածեց: Ծտերը գանդատուեցան ցինին: Ցինը իւր օրէնքով դատեց նրանց. առաջ պատառտեց պքաղաղին, իսկ յետոյ խեղդուեց ծտերին:

104. ՃՐԱԴԱՑ

**Գ**ուրը նաւից արշաւելով, կատաղաքար ծայն է հանում, եւ զրադացի յատակի տակ կարծես ամպեր են որոտում:

Անիների խիստ շարժուելուց Ամքող յատակն է ղողղողում, եւ երկանի պտղոտուելուց Փոքրիկ լեզուակն է չընչըիկում:

Նա շարժում է օրօրուելով  
Եւ լիք տաշոի քերանն շարժում,  
Որից վերին երկանի մէջ  
Մաքուր ցորեն է կաթկաթում.

Իսկ քարի տակ մանրուելով  
Ալիք դարձած ամքարն թափում  
Եւ զրադացը գեղեցկապէս  
Շըրեւ ծերուկ ալեզարդում:

105. ՀԱՆԵԼՈՒԿ

**Մ**ի տուն ունինք, տան նման չի.  
Գետի ափին, մեծ ժայռի տակ,  
Կըկըզած է մեն-միանակ.  
Գիշեր-ցերեկ չար բուի պէս  
Զայն է հանում, գրում այսակէս.  
Թըրը-իկ-չըրը-իկ.  
Վը-շտ-ծը-շտ:

Առուն բարձրից ցած է թըռչում,  
Պատը ծակում, միջովս անցնում.  
Յատակումը ղըղողոց է,  
Շըրմիոց ու թըռխոց է:

Տան մէջ երկու ուժեղ գազան,  
Մինը տակին, միւսը վրան,  
Անիծի պէս մինչում են,  
Դրար ըռեխ կըոծոտում են . . .

Սրանք մարդ չեն, ոչ արջ, ոչ զայլ,  
ինչ էլ որ տաս, քիչ է դարձեալ.  
Հարամի են իսպառ քաղցած,  
Էլ չեն լսում ոչ խօսք, ոչ լաց.  
Դուրս են միում իրանց փորից  
Կերակուրը փոշի դարձրած:

Այժմ ասէք, այդ ի՞նչ տուն է,  
Որ մինչ այսօր էլ կանգուն է:

106. ՈՒՏԵԼԻՔ ԵՒ ԽՄԵԼԻՔ

ուանց ուտելիքի մարդս քաղցից, իսկ առանց խմելիքի ծարակից կրնոնէր: Մարդը իբրև ուտելիք դործ է ածում բուաեղին, մսեղին և աղ: Նա խմում է զուր, թէյ, սուրճ, գինի, գալիքուր:

Ամենահարկաւոր ուտելիքը հացն է: ամենակարեւոր և առողջարար խմելիքը զուրն է:

107. Կ Ր Ա Կ

իմոնը գնաց դաշտը: Շատ ցուրտ էր և անձրե էր գալիս. նա դողդողում էր ամբողջ մարմնով: Սիմոնը մտաւ անտառը, չոր ցախ ժողովեց, չէրից հրահանը հանեց, գարկեց կայծաքարին և կրակ արեց: Նա տաքացաւ, շորերը ցամաքացրեց և իւր չոր հացի կտորը տաքացրեց, կերաւ:

Կրակի առաջ նստած՝ Սիմոնը մտածում էր. «Ի՞նչ լաւ բան է կրակը. առանց նրան ոչ կերակուր կարելի է եփել և ոչ տաքանալ»: Տես, որքան գործ է շինւում դարբնոցում և գոր-

ծարաններում: Եթէ կրակ չվնէր, մենք երկաթից ի՞նչպէս պիտի շինէինք պայտեր, խոփ, կացին և ուրիշ շատ բաներ: Ճշմարիտ, թէև երբեմն կրակից մենք վնաս ենք ստանում, բայց այդ էլ մեր անզգուշութիւնից, մեր յիմար անհոգութիւնից է լինում: Մենք արեգակիցն էլ ենք տաքանում. նա էլ կրակի նման այրում է երկնքում: Առանց արեգակի ոչինչ չէր ամիլ՝ ոչ դաշտերում, ոչ անտառներում և ոչ պարտէներում, և բոլոր կենդանիք ու մարդիկ կմեռնէին քաղցածութիւնից: Իսկ այժմ Աստուծոյ ողորմութեամբ ապահով ապրում ենք:

108. ԴԱՐԲԻՆ

ըրունը ծեռքին, զընդանն առաջին,  
Քիթ-երես մըրոտ, դարբնոցի միջին,  
Կաշուէ գոզնոցը առաջը կապած,  
Հըռիկ կանզնած է մեր Խաչոյ դարբին:

Փուքսը – փո՛ւհա-փո՛հ – փշում է, փշում,  
Կայծեր ու մոխիր դէս ու դէն փրում,  
Երկաթի մի շերտ հնոցը կոխած,  
Սաստիկ տաքիցը վառում, կարմըրում:

Խաչոն հանում է երկաթի շերտը,  
Զընդանի վերայ կըռանով ծեծում,  
Ծինում նրանից պայտ, միևն ու կացին  
Եւ իսկոյն ջրի տաշտակը կոխում:

Թշշո՞ւմ է երկաթն ցուրտ ջրի միջին,  
Ամակի պէս փրում տաք-տաք գոլորշին,  
Կըկին պնդանում, կըկին փափկանում:  
Մինչեւ պատրաստուած շըպրտում գետին:

Այսպէս ամբողջ օր մեր դարքին խաչո՞ն  
կրակի առաջ, այն կեղտ ու միւլում,  
Մի կտոր չոր հաց ճարելու համար  
Կուշ—ծիգ անելով իւր կեանկն է մաշում:



109. Օ Դ  
ու օդ տեսել ես:  
Նա միշտ քեզ մօտ է և դու նրան չես  
տեսնում:

—Բայց կարելի է լսել, թէ ինչպէս է  
ձայն հանում նա:

Տեսնենք:

Ո՞հա քամին զօղանջում է խողովակների մէջ և սովելով  
ներս է մտնում տան ամենայն բացուածներից. առա նա խփում  
է պատուաններին և սաստիկ փոշի է բարձրացնում ճանա-  
պարհներում:

Իսկ ի՞նչ բան է քամին:

Նա օդն է, որ շարժում է—մի տեղից միւս տեղ է փախ-  
չում: Փախչելու ժամանակ նա զարկում է որևիցէ առարկայի  
և լսում է աղաղակ, շվփոց: Երբ փշում ես փողդ, կամ սրինդ  
ես ածում, կամ մտրակդ պտտացնում ես,—ամեն անգամ ձայն  
է լսում: Փորձի համար մի թղթի պարկ շինիր և մի փոքրիկ  
ծակ թողելով փշիր, ուռցրու նրան, իսկ յետոյ բռունցըով  
խփիր այդ փշած պարկին. պարկը սաստիկ կը ճայթի և կը  
պատռուի: Սա օդն էր, որ դու լցրել էիր նրա մէջ քո բերա-  
նից: Երբոր փազում ես, զգում ես, թէ ինչպէս է խփում օդը  
քո երեսիդ: Նշանակում է՝ նա միշտ քեզ հետ է և դու նրա-  
նով ես շունչ քաշում: Առանց օդի դու մի բոպէ էլ չես կա-  
րող պարիլ: Երբոր դու, լողանալիս, զրի տակն ես անում, քո

չորս կողմդ ջուր է մինում: Բոլորովին այդպէս էլ օդն է շրջա-  
պատռում քեզ ցամաքի վրայ և դու նրան չես տեսնում այն  
պատճառով, որ նա շատ նուրբ է և թափանցիկ: Օդը մինչեւ  
անգամ քո ներսդ էլ է մտնում:

#### 110. ՎՈՒԾԻ ՄՇԱԿՈՒՄՆ

I. Փոքրիկ Հայկանուշը տեսաւ, որ իւր հայրը դաշտումը  
քռնով մանր ու փայտուն սերմեր էր ցանում և հարցրեց.  
«Հայրիկ, այդ ի՞նչ ես անում»:

—Վուշ եմ ցանում, աղջիկս, որ քեզ ու բարսեղի հա-  
մար շապիկ դուրս դայ:

Հայկանուշը մտածման մէջ ընկաւ: Նա երբէք չէր տեսած,  
որ շապիկներն աճեն դաշտումը:

Երկու շաբաթից յետոյ ցելլ ծածկուեցաւ կանաչ մետաք-  
սեայ խոտերով և Հայկանուշը մտածեց. «Ի՞նչ լաւ կը լինէր,  
եթէ ես այդպիսի շապիկ ունենայի»:

Մի քանի անգամ Հայկանուշի մայրը և քոյրերը գնացին  
արտը քաղհանելու և ամեն անգամ ասում էին նրան, թէ լաւ  
շապիկ պէտք է ունենաս: Անցաւ էլի մի բանի շաբաթ: Կա-  
նաչը բարձրացաւ, ցողունների գլուխներին կապտագոյն ծա-  
գիկներ երեսցան: «Իմ եղբայր բարսեղի աշքերի նման են  
սրանք, մտածեց Հայկանուշը. բայց այսպիսի շապիկ ես ոչ  
ոքի հագին չեմ տեսել»:

Երբոր ծաղիկները վայր թափուեցան, նրանց տեղը մը-  
նացին կանաչ և կուրք գլուխները: Երբոր գլուխները փոքր  
ինչ կարմրեցան ու չորացան, Հայկանուշի հայրը և քոյրերը  
արմատից փետեցին նրանց, խուրձելը կապեցին ու կոթերի  
վրայ կանգնեցրին, որ չորանան:

II. Վուշի խուրձերը չորացան. նրանց վլուխները կրտ-  
քեցին, կալսեցին, և պահեցին, իսկ կոթերը թրջոց դրին ա-

ոռւակի մէջ, վրան էլ քարեր դարսեցին, որ զրի երիսլ չանին։ Հայկանուշը տխուր նայում էր, թէ ինչպէս են իւր շապիկը զրումը խեղգում։ իսկ քոյրերը նրան նորից ասացին, թէ շատ գեղեցիկ շապիկ ես ունենալու։

Երկու շաբաթից յետոյ վուշը զրից հանեցին, չորացրին և սկսեցին փայտով թակել՝ առաջ կալումը, իսկ յետոյ բագումը, այնպէս որ խեղճ վուշի չոփերը բոլորը գուրս թափուեցան։ Թակելուց յետոյ սկսեցին երկաթէ աանդերքով զղել, մինչև որ նա փափկեց և դարձաւ իբրև մետաքս։ «Ի՞նչ գեղեցիկ շապիկ ես ունենալու», ասացին նորից Հայկանուշի քոյրերը։ Բայց Հայկանուշը մտածում էր։ «Այդ ինչ տեսակ շապիկ է, կ'ասես թէ մեր Բարսեղի չեկ մաղերը լինի»։

III. Չմեռուայ երկար գիշերներն եկան։ Հայկանուշի քոյրերը ճախարակները սարքեցին և սկսեցին վուշից թել մանել։ «Այս թել է, իսկ շապիկը մըն է—մտածում էր Հայկանուշը»։

Հայկանուշի հայրը տորքը սարքեց խրճիթում, նրա վրայ հինած արեց և սկսեց գործել։ Մաքուքը սատանի նման անցուգարձ էր անում թելերի միջով և Հայկանուշը տեսնում էր, թէ ինչպէս է թելերից քաթան շինում։ Երբոր քաթանը պատրաստուեցաւ, պրծաւ, նրան ցրտի տակ սառցըին և ձիւնի վրայ փռեցին, իսկ գարնանը ձգեցին կանաչ խոտերի վրայ, արևի տակը և վրան էլ ջուր ցանեցին։ Քաթանը փոքր առ փոքր սպիտակեց ինչպէս ձիւն։

Մայրը քաթանից շապիկներ ձեց և Հայկանուշի քոյրերն սկսեցին կարել, այնպէս որ զրօրնէքին նա էլ, իւր եղբայր Բարսեղն էլ հագան ձիւնի պէս սպիտակ շապիկներ։




#### 111. Ի՞նչ գուշ է ՄԱՐԴՈՒ ՄԱՆ ԳԱԼԻՍ ԵՐԿՐԻ ՎՐԱՅ

**Վ**արդս թէկ շատ կամաց չէ ման գալիս, սակայն նա իւր երկու ոտների յուսով շատ հեռու չէր կարող գնալ։ Բայց զուր տեղը չէ Աստուած մարդուն խելք տուել։ Մարդը տեսաւ, որ ձին իւր չորս ոտով իրանից արագ է ընթանում, տեսաւ և կարողացաւ նրա մէջքին նստել։ Թամբ հնարեց, բերանը սանձ գցեց և իւր կամքին սկսեց նրան վարել։ Այս բաւական չէ, յետոյ մտածեց անիւսաւոր կառքեր և կոներաւոր սահնակներ շինել։ այնուհետև նա հեշտութեամբ անցնում է օրական հարիւր վերստ և ինքն ամենեին չէ յոզնում։ Նա ձիով հերկում է հողը և բեռներ է կրում։

Բայց միայն ձիու վրայ չիշմեց մարդս։ Նա իրան հնագանդեցրեց հաստապարանոց եղանը, ուժեղ գոմչին, երկայն-

ոտնանի ու սալատաւոր ուղտին և թեթևագնաց եղնիկնն: Այս բաւական չէ նա հեծաւ ահապին փղի մէջը և, ճանձի նման նստելով նրա պարանոցին, սկսեց մուրճով ծեծել նրա զլուխն ու քշել, ուր որ կամենում է:




Մարդը նկատեց, որ ուղիղ ճանապարհով անխներն աւելի հեշտութեամբ են գլորւում, սկսեց շինել մեծամեծ սայլի ճանապարհներ և խճռուղին եր ձգեց:



#### 112. ՃԱՆԱՊԱՐՀՈՐԴՈՒԹԻՒՆ ԱՌԱՆՑ ԶԻԵՐԻ

արդը կամաց համարեց ձիով և սայլակով ճանապարհ գնալը. նա սկսեց մտածել, ուրիշ ճար գտնել և հնարինց երկաթուղին: Սարերը քանիցից, գաշտերը հաւասարեցրեց, կամուրջներ ձգեց և ոլաքի նման ուղիղ ճանապարհ շինեց, այնպէս որ կտրծես մի կտոր կտաւ էր փոած: Այս կտաւի վրայ նա ձգում է երկաթէ շաւիզներ—ը ելո՞ն եր, իսկ բելսի վրայ սարքում է երկաթէ մերենայ, որի մէջ կայ հնոց, կաթսայ և ծխաճան, ինչպէս հեշտանուը: Հնոցի մէջ նա փայտ կամ ածուխ է ածում, նրանով ջուրը եռ է զալիս և չողիների գօրութեամբ մերենան գլորւում է առանց ձիու,

բայց այնպէս չուտ-չուտ, որ մարդ ոչ մի ձիով չէ կարող նրա յետեից համնել: Մի ժամումը նա անցնում է 50 վերստ, մի օրումը 1000 վերստ: Շոգեմեքենան գլորւում է երկաթուղու վրայով, ճշում է, ծըլվում, երբէք չէ յոգնում, միայն իջևան-ներում փայտ և ջուր է վեր առնում: Նա իւր յետեից քաշ է



տալիս շատ շոգեկառքեր (վագոն). դրանցից մէկ քանիսի մէջ նստած են հարիւլաւոր մարդիկ և լուսամուտներից նայում են, իսկ միւսներում այնքան ապրանք է դարսած, որ մարդ զարմանում է:

#### 113. ԵՐԿԱԹՈՒՂԻ



ա փոած կտու է եւ ոչ թէ ուղի.  
Զին էլ չէ մի ծի, հարիւր ոտն ունի,

Որ այնպէս վազում,

Այնկան ծանրութիւն մնակ է տանում:

Ոչ թէ ծգում է, այլ ծիշդ թոշում է,


Ոչ կանգ է առնում եւ ոչ յոգնում է.

Բարձր սուլելով, ուժգին ճշալով

Մի ժամում յիսուն նա վերստ անցնում է:

114. Ի՞նչ ջղէս են ծԱնԱՊԱՐՀՈՐԴՈՒՄ ԶՐԻ ՎՐԱՅ

Լողալում մարդս շատ էլ հմուտ չէ. ինչքան որ սովորի,  
խեցկետինի պէս չէ կարող լողալ, ուր մնաց թէ ձկան պէս:  
«Այս լաւ բան չէ», մտածեց մարդը. փայտից նաւակ չինեց,  
թիակը վեր առաւ և չուղը մտաւ ու սկսեց առաջ գնալ:



Շուտով սա էլ զգուեցրեց մարդուն. «Ի՞նչ բան է, թիավարում ես, թիավարում, բայց էլի շատ հեռու չես գնում»:  
Ի՞նչ պէտք էր արած:

Մարդն սկսեց մտածել. նա տեսաւ, որ ծովի երեսին համարեա շարունակ քամի է փշում, բայց զուր է կորչում: «Ի՞նչի  
զուր կորչի, ճանապարհներում սաստիկ թող անի, ծովի ալիք-  
ները բարձրացնի, երկնքից էլ ամպեր հալածի. արի ստիպեմ,  
որ ինձ ծառայիր: Եւ մարդը վեր առաւ կտաւը, առագաստ  
չինեց, քամին էլ ուռցնելով նրան՝ առաջ քշեց թէ փոքրիկ և  
թէ մեծամեծ նաւերը: Մարդը քամուն էլ լծեց, բայց ոչ մըտ-  
րակ կար, որ նրան քշէր, ոչ սամձ կար ձեռքում, որ կանգ-  
նեցնէր, ոչ կատեր ունէր, որ կառավարէր:

115. ՔԱՄԻ ԵՒ ՆԱԽԵՐ


**Ո**վկի երեսին հանդարտիկ քամին  
ծեմում է ազատ՝ ծիծաղը դէմքին.  
Փոքր ու մեծ նաւեր՝ առազատ քացած,  
նորա ժպիտին նայում են յառած.

Քամին հնչում է յաջողակ ու մեղմ.  
Նոքա խաղում են, ծեմում քաղցրադէմ.  
Կանգում է քամին, գրժում, քորոքում.  
Տանջում են նաւերն, ողբում ու սրգում:



116. ԶՐԻ ԵՐԵՍԻՆ ԱՆԻԻՆԵՐՈՎ

աւ կրվնէր առագաստաւոր նաւով գնալ, եթէ քամին  
մեզ լսէր, բայց բանն այն է, որ դու կամե-  
նում ես դէպի հարաւ գնալ, իսկ նա դէպի  
հիւմիս է տանում քեզ. դու կամենում ես  
այսօր գնալ, իսկ նա ասում է՝ սպասիր վաղը, այսօր ես կա-  
մենում եմ քնել. դու կամենում ես ծանր գնալ, իսկ նա քո  
նաւը, ինչպէս մի տաշեղ, այս ու այն կողմն է գցում, տակն  
ու վրայ է անում:



«Ո՛չ, այս լաւ բան չէ», մտածեց մարդը. «Չողին թէկ  
քամուց աւելի ծանր է քշում, բայց հնազանդ է լինում»:  
Եւ մարդը նաւերի տակն անխմներ դրեց, շողին էլ նրանց

շարժեց և նաւերն սկսեցին զբի մէջ գնալ այնպէս, ինչպէս որ ցամաքի վրայ: Սրա համար մարդը նաւի մէջ հնոց է սարքում, նրան փառում է, զուրը կաթսայի մէջ եռացնում, ծուխը խողովակներով երկինքն ուղարկում, իսկ շոգիով անիւները շարժում և առաջ են տանում նաւը, ուր որ ինքը կամենում է:

117. ԶԱՐՄԱՆԱՀՄԾԱԿ

**Ի**նքն է անշունչ, շունի հոգի,  
Բայց գործերն են ազգի ազգի:

Անիւները մեծ ու փոքրիկ,  
Լիսեները լայն ու նեղլիկ.

Կաշուէ զօտիկ մէջքին կապած,  
Հուր ու դժոխք իւր փորն առած.  
Խմած չութը տակառներով,  
Գրձք ամ ին Արտաշնչումն ամեն է ու ծով:

Մուշնչումն է վիշապի ապէս, ինչ յանք դուռ  
ոյ ամ լայ գրքում, ճռչում, մըրթիկ կամես.  
Փուշնչոցը այնպէս ուժգին—  
Հազար գոմէշ ունի միջին:

Ինչե՞ր ասես նա չէ անում.

Յորեն կալսում, կտաւ գործում,  
Բուրդ ու քամիսկ մաքրում, մանում,  
Վլուշը զզում, հինած անում.

Երկար ու լայն մեծ տորքերին,  
Անժիւ ու թիւր մաքուքներին,  
Արագարագ գործի դնում:

Անոնազ յազաւ գերաններից մանրիկ մեխեր, յրդան դուռ  
անուն զմուր զբազմատեսակ տախտակ քաշում:

Մետաղներից սիրուն փողեր,  
Եւ երկաթից գործիք ծուլում.

Կարծր ապակիք, պղղպատիկներ  
Խաղ ու պարով տաշում, յըղկում,

Կ'ասես նրա սուր կըտրիչին  
Չեն դիմանալ՝ ինչ էլ ոիպչին:

Այս ամենը նա գործում է անխոռով.  
Ցողնել չունի, միշտ շարժում է անվրդով:

118. ՄԱՐԴԻԿ Ի՞ՆՉՎՀԵՍ ԵՆ ԹՌՉՈՒՄ ՕՂԻ ՄԷՃ

**Մ**արդու համար հեշտացաւ ճանապարհորդել թէ ծովի  
և թէ ցամաքի վրայ. յետոյ նա սկսեց նախանձիլ  
երկնքի թռչուններին: Բայց Սաստուած մարդուն թեներ չէր  
տուել. ուրիշից փոխ առնել էլ չէր կարող: Ի՞նչ անէր: Շատ  
ցանկանում էր օդի մէջ թռչիլ, աշխարհին բարձրից նայիլ. Էլ  
հարկաւոր չէր սարեր կտրատել, ճանապարհ շինել. չորս կողմղ  
լայն ճանապարհ է:

Մարդն սկսում է սովորել և մտածել: Մտածում է, մտածում և վերջապէս մի քան է հնարում—օդապարիկ. փուչիկի նման մի մեծ դաստարկ գունտ է շինում, նրա տակից մի  
նաւակ կապում, նրա մէջ նստում ու վեր բարձրանում: Իւր  
ուրի տակն են մնում ահազին անտառներ, սարեր, ու ձորեր,  
սրաթն արծիներ, անձրեստ ամպեր: Բայց ավսոս, որ մի  
քան շատ է խանդարում նրան. անսանձ քամին այստեղ էլ իւր  
շարութինը յայտնում է. օդի մէջ աւելի է նեղացնում մարդուն,  
քան թէ ծովումը. քում տանում է նրան, ուր որ կամենում է. կարծես մարդուն քանի տեղ չէ դնում, և մինչև

այսօր մարդը դեռ ևս չէ կարողանում յաղթահարել քամուն։  
Բայց հաւանական է, որ նա դրան էլ մի ճար գտնի ժամանակով։

119. ԵՐԿՈՒ ՔՈՅՑ

**Մ**եզնից շատ առաջ կար մի թագաւոր,  
Հոգով դեռ արի, պլոտվ ալեւոր。  
Մեծ ծով էր պատել նորա աշխարհը։  
Ուկի ասացին գիտունք այն դարը։

Ունէր նա երկու մատղահաս աղջիկ,  
Մինը խիստ տգեղ, միւսը գեղեցիկ։  
Մի օր տգեղը ասում է միախն։  
«Երթանք ծովի ափ, քո՛ւրիկ, միասին»։

Սիրունը գնաց առաջից տրտում,  
Տգեղը յետնից ոխ պահած սրտում։  
Հազիւ թէ ծովի ափին էր հասած,  
Դւր սիրուն քրոջ գլորեց նա ցած։

Կանչեց կիսամեռ սիրունը ջրից.  
«Քո՛ւրիկ, ի՞մ քուրիկ, փրկէ ինձ մահից։

«Ես ունիմ տանը գեղեցիկ մանեսկ,  
Առ, էն քե՛զ լինի, պարզեւէ ինձ կեսանք»։

—Էն առանց քեզ էլ կարող եմ ստանալ,  
Ինձնից փրկութիւն դու ընաւ մի՛ յուսալ։  
«Քո՛ւրիկ, թէ այդ էլ քեզ չէ բաւական,  
Կըտամ քեզ ոսկէ պսակ պատուական»։

—Էն առանց քեզ էլ կարող եմ ստանալ,  
Ինձնից փրկութիւն դու ընաւ մի՛ յուսալ։


«Քո՛ւրիկ, մի՛ թողիլ դու ինձ անտէրուն։  
«Քեզ սիրուն փեսաս կըտամ անտրտուն»։

Տգեղի սիրուը դարձել էր լեռ քար,  
Քրոջ ինուիրքը թողեց անկատար։  
Զկնորսը ծովը ծրգեց մեծ ուռկան,  
Բոնեց մարմինը սիրուն աղջրկան,  
Ճրիցը հանեց, դըրեց ափի մօտ,  
Շատ ծաղիկ ցանեց վրան ու շատ խոտ։  
Մի աշուղ անցաւ, տեսաւ աղջրկան,  
Լացեց ու առաւ, դրեց ուսի վրան,  
Տարաւ իւր տունը այդ անգին գիտը,  
Չորացուց նորա մարմնի դիփ հիւթը։  
Գեղեցիկ տափի շինեց ոսկրերից,  
Քաղցրածայն լարեր հիւթց մազերից։  
Երբոր ամեն բան պատրաստեց կարգին,  
Գնաց արքունիք՝ տափինը ծեռքին։

Երբ մնաւ դահլիճ՝ շըքեղ զարդարած,  
Տեսաւ տգեղին փեսի մօտ կանգնած.  
Բացեց բերանը, լարերին խինեց,  
Հիւթերի առաջ քաղցրածայն երգեց.

«Հնչէ՛, իմ տափի, հնչէ՛ համարձակ,  
«Հարազատ քոյրս խլեց իմ պսակ.  
«Հսէ՛, իմ ծնող, լսէ՛, սիրական,  
«Հարազատ քոյրս խլեց իմ փեսան.  
«Հսէ՛, ժողովուրդ, լսէ՛ անխռով,  
«Հարազատ քոյրս գլորեց ինձ ծով»։

Միւս օրը դահլիճը խարոյկ շինեցին,  
Մահապարտ քրոջ մէջը գլորեցին։  
Հուրը պըլածլաց, աղջիկը կանչեց.  
«Իմ մեղաց համար Աստուած ինձ պատժեց»։



## ԵՐԶԱՆ ՀԻՒԳԵՐՈՐԴ

## 120. *h'vq urbz 2UbnL*

Ո՞ւր է շշնջիւնը Սպիտակացրեց:  
Քաղցր անտառի Ալեւոր պապը  
Եւ կարկաչիւնը Խրթեւութեակը  
Մերծակայ առուի. Ամենն շղթայեց:  
Ո՞ւր են հոտաէստ Առուն էլ սառեց:  
ծաղկունքը դաշտի: Միայն ցուրտ քամին  
ծառը մերկացաւ, Կատաղութիւնով  
Էլ տերեւ չունի. Անցրիի քերանն  
Զիւնէ սփոռոցը Լցուում է ծիւնով,  
Ամենն ծածկեց, Երկինք էլ ծածկում  
Դաշտերու ճորերը Մուային մէզով:

## 121. ԱՀԵԻՈՐ ՊԱՊԻ ՀՐԱՄԱՆԵՐԸ

**Ա**րկացաւ ալեւոր ձմեռը, սաստիկ բարկացաւ և մըտքումը դրեց, որ ոչ մի կենդանի շունչ չթողնէ երկրիս երեսին։ Ամենից առաջ նա թռչուններին ձեռք առաւ. Նրանք ձանձրացրել էին նրան իրանց երգերով ու ծվլոցով։

Զմեռը վշեց սառը քամին, ծառերի տերևները վէր ածեց  
և նրանց քշեց-ցանեց ճանապարհներում։ Թռչոնների տեղը

կտրուեցաւ։ Նրանք խումբ-խումբ հաւաքուեցան, ոմիտք արին  
և սկսեցին կրկըռալով թռչել բարձր ապրերի, խոր-խոր ձորե-  
րի և կապոյտ ծովերի վրայով դէպի տաք երկիրները։ Մնա-  
ցին միայն մի քանի թռչուններ, բայց նրանք էլ մօտեցան  
մարդկանց բնակարաններին։ Առաջ ուր զգութ ուսուի յամա-  
ջմեռը տեսաւ, որ թռչունների յետնից չէ կարող հաս-  
նել, գաղաններին ձեռք առաւ։ Գինով ծածկեց դաշտերն ու  
անտառները, ծառերը զարդարեց սառցային կեղեւով և մինը  
միւսի յետնից ուղարկեց իւր սառնամանիքները։ Գալիս են  
սառնամանիքները միւսից չար, գալիս են և թռչկոտալով  
անցնում են ծառից ծառ, ամեն բան ճայթում, ճրճրացնում  
ու գաղաններին վախեցնում։ Բայց գաղանները չվախեցան։  
Նրանցից մի քանիսը հաստ քուրքի մէջ էին կոլորուած, միւս-  
ներն էլ մտան իրանց խոր որջերի մէջ, սկիւը իւր խորոշում  
ընկոյզ էր կրծում. արջը քարայրի մէջ իւր թաթն էր ծծում.  
Նապաստակը ցաթկելով էր տաքանում. իսկ ձիաները, կովերը,  
ոչխարիները շատ վազուց տաք գոմերի մէջ պատրաստի խոտը  
ծամում էին և տաք ջուրը խմում։

Սւելի սաստիկ բարկացաւ ձմեռը՝ դէպի ձկները դարձաւ։  
Սառնամանիքներ է ուզարկում մինը միւսից կատաղի։ Նրանք  
գուարթութեամբ վաղում, անյնում են գետերի և լճերի վրա-  
յից և նրանց երեսը ծածկում են թանձր սառուցով։ Գետերն  
ու լճերը սառան, բայց միայն երեսից. իսկ բոլոր ձկները ջրե-  
րի խորքը գնացին. սառցային ծածկոցի տակ նրանք աւելի  
տաք էին ապրում։

Ե՞ն, սպասիր, ասում է ձմեռը. հիմա ես իմ բոլոր բարկութիւնս մարդկանց վրայ կրթափեմ»։ Այս ասաց և միել միւսի յետևից ուղարկեց միմեանցից աւելի սաստիկ սառնամանիքներ։ Ցրտութիւնից լուսամուտների ապակիները սառուցով ծածկում են. սառը քամին խփում քաղզում է պատերին, յուսամուտներին։ Բայց մարդիկ վառում են վառարանները,

Նրանց առաջ նստում, իրանց համար իւղարկիթ են թխում, ուստում և ձմեռուայ վրայ էլ ծիծաղում, Եթէ մէկը կամենում է գնալ անտառը փայտ բերելու, հագնում է հաստ քուրք ու տաք թաթմաններ և երբ սկսում է կացինը բարձր ու ցածր անել—փայտ կտրել, դեռ քրտնում էլ է: Ճանապարհին, կարծես ծիծաղելով ձմեռուայ վրայ, կարաւանները շարւում են. Ճիաներից գոլորշի է բարձրանում, իսկ ճիապանները ոտով են դնում, ձեռները տրորում են, ուսերը թափահարում և ցուրտը գովասանում:

Ամենից աւելի ամաչեց ձմեռը, երբ տեսաւ, որ մինչև անդամ փոքրիկ մանուկները իրանից չեն վախենում. Նրանք սղզաններով սղզում են սառուցների վրայ, ճնագնտի են խաղում, ճիւնից սարեր են կանգնեցնում և նրանց վրայ զուր ցանելով՝ երգում են.

«Օրը կարծ է. արեւ ըռկայ, շատ ցուրտ է. ծերմակ ծիւնը քուլա-քուլա կըքրծէ.»

Մարդ, անասուն քուք քորանից վախեցած, Տաք-տաք տներ, իոր-իոր քներ են մոտած:

Ա-յ-օ-յ-օ-յ, — ձմեռն է,

Մեզ դուրեկան մի քեռն է:»

Ձմեռը կատաղութիւնից մէկի ականջիցն է քաշում, միւսի քթիցը բռնում. Նրանք գունատում ու կապտում են ցրտից, բայց էլլ վեր են առնում ճիւնը, տրորում, թռչկոտում, խաղում և սրանով նրանց երեսը տաքանում ու կարմրում է ինչպէս արին:

Ձմեռը տեսաւ, որ ոչ ոքի չէ կարողանում յաղթել, բարկութիւնից լաց եղաւ, Երկնքից նրա արտասուրը կաթկաթեց . . . Երկի գարունը մօտեցել էր:

122. Զ Ի Ւ Ծ

«Ա՛խ, ինչո՞ւ-ինչո՞ւ կըգայ պաղ ծիւնը, Նորից ամիսներ պիտ մընամ տանը. Տեսնելու չեմ ես կանաչ ծառ, արօտ, Հոտոտ ծաղիկին պիտ մընամ կարօտ:»

«Չիւնը որ կըգայ երկնքէն ի վար, Դմացիր մեծ բախտ է մարդուս համար. Վերմակի պէս տաք կըծածկէ գետին, Որ թոյսի արմատն դիմանայ ցրտին:»

Նա հողին կը տայ հիւթ, պարարտութիւն, Դաշտին ու արտին մեծ առատութիւն. Մի՞ տըրտընջալ, մարդ, դու բնութենէն, Թէ տաք եւ թէ ցուրտ՝ մեզ միշտ օգուտ են:»

Մանկական յիշողութիւնից:


123. ՅՈՒՆՎԱՐԻ ՄԷԿԻՆ



Բէկ երեկոյին մեր տանը շատ հիւրեր կային. Նրանք հաւաքուել էին, որ դիմաւորեն նոր տարուն: Ես մինչև տասներկու ժամն արթուն չմնացի և, առանց շորերս հանելու, քնեցայ: Այսօր ես շատ վազ գարթեցայ և գնացի իմ ծնողներիս նոր տարին չնորհաւորեցի: Համբուրելով նրանց ձեռքը, ես վազեցի բարի հօրեղբօրս սենեակը, չնորհաւորեցի նոր տարին և ցանկացայ նրան բախտաւորութիւն և առողջութիւն: Հօրեղբայրս համբուրեց և տուեց ինձ մի գեղեցիկ և պատկերազարդ գիրք: Նա ասաց՝ եթէ միշտ լաւ կաշխատես, այսպիսի ընծաներ շատ կըստանաս ինձանից: Ես չնորհակայաց պիսի ընծաներ շատ կարութեցի նրա ձեռքը: Որքան բարի է իմ հօրեղբայրս. Նա իմ փոքր քրոջս ու եղբօրս էլ շմուացաւ ուրա-

Խացնել՝ Շուշանիկին ընծայեց մի գեղեցիկ տիկին, իսկ Գարեգին մի փոքրիկ թմբուկ։ Նա ուրախութիւնից այնքան խփեց թմբուկը, որ ձեռները թուլացան։


Սյօր ամենքն էլ ուրախ են և չնորհաւորում են միմեանց նոր տարին, փոխադարձ բախտաւորութիւն ցանկանալով։ Մայրս հազցրեց մեղ նոր շորեր։ Երեկոյին մենք գնալու ենք հօրաքրոջս տուն։ Ես գիտեմ, որ այնտեղ կրխաղանք, կ'երգենք և շատ ուրախութիւններ կ'անենք։



124. ՅՈՒՆՎԱՐԻ ՀՆԴԻՆ

Սյօր երեկոյին Քրիստոսի ծննդեան և մկրասութեան ճրագալոյցն է։ Ես իմ ծնողացս հետ գնացի եկեղեցի, որ մին էր ժողովրդով։ Եկեղեցին լուսաւորուած էր հագարաւոր ճրագներով։ Թիրացտաքը և սարկաւագները քաղցր ձայնով շարականներ երգեր էին երգում, քահանան պատարագ էր։

տուցանում։ մի ուրիշը կարդում էր աւետարանը։ Իսկ բոլոր ժողովուրդը աղօթում էր։ Ես էլ աղօթում էր, Ես մտարերում էի իմ վարժապետի պատմածը, թէ ինչպէս Փրկիչը ծնուեցաւ ոչխարների այրի մէջ, ինչպէս հրեշտակը աւետիս տուեց հովիւներին, ինչպէս այդ հովիւներն եկան երկրպագութիւն տուին նորածին Մահկանը։ Երեկի այն երկիրը, ուր ծնաւ Փրկիչը, մեր երկրից տաք էր, որ հովիւները կարողանում էին գիշերները դուրս քնել։ Փակ մեղ մօտ ինչպէս ցուրտ է այժմ։ Ճշմարիտ՝ յունվարը ամենացուրտ ամիսնէ։ Երկիրը սպիտակ սաւանով ծածկուել է։ Բանչքան լաւ կըլինի, եթէ վաղը գոնէ եղանակը մեղմ լինի։



125. ՅՈՒՆՎԱՐԻ ՎԵՑԻՆ

Արդէն քանի օր է, որ գետի եղերքին Քրիստոսի մկրտութեան համար տեղ է պատրաստած։ Սյօր, կէսօրին, պատա-

բագից յետոյ, բոլոր քահանայական դասը ժողովրդի հետ մայր եկեղեցուց դիմեց դէպի Յորդանան։ Հանդէսը շատ փառաւոր էր։ Ճաշից յետոյ քահանան տիրացուի հետ եկաւ՝ մեր տունն օրհնեց։ Նա կարդաց աւետարանից, թէ ինչպէս Յիսուսն եկաւ Յորդանան գետը մկրտուելու, ինչպէս ընդունեց նրան Յովհաննէս Մկրտիչը, ինչպէս բացուեցաւ երկինքը և Աստուծոյ Հոգին աղաւնակերպ իջաւ նրա վրայ, ինչպէս լսուեցաւ երկընքից Հայր Աստուծոյ ձայնը։

Սիրտս տրորւում է, երբոր մտածում եմ, որ վաղը չէ միւս օրը պիտի գնամ ուսումնարան։ բայց իմ մայրն ասում է, որ եթէ միշտ աղատ ման զամ, տօներն էլ այսպէս ուրախալի չեն լինիլ։ Պէտք է իմացած, արդեօք շատ ժամանակ կայ մինչև բարիկենդան։

#### 126. ԱԿՆԱԼՈՒԹԻՒՆ ԳԱՐՆԱՆ

**Ջ**րմեռը դաշտում ծաղիկներ չըկան,  
Զիւն գալուց առաջ նոքա չըքացան.  
Բայց ծաղիկների քնքուշ արմատներ  
Փափուկ ծիւնի տակ հանգիստ են առել։

Կրգայ գարուն ոստոստալով,  
Սար ու դաշտին այցելելով.  
Կորի կըտայ ծիւն ու սառին.  
Վերջ կըղնի գիտ ծըմեռին։

Նոր բողոք կըտան խոտերն ու ծաղիկ,  
Գարնանաբերը կըբացուի հեզիկ.  
Մանկունք ցնծալով դաշտը կըվագեն։  
«Օրհնեալ է գալդ, գարուն, քո», կ'ասեն։

#### 127. ՊԱՍԻ ԱՌԱՋԻՆ ԵՐԿՈՒՇԱԲԹԻՆ



արթկինդաններին մենք շատ ուրախութիւններ արինք,  
խաղացինք, իւղաբլիթ կերանք։ Մենակ մենք չէինք  
ուրախանում։ Ամենայն կողմից խնդութեան ձայներ էին լը-  
ւում... Այսօր էլ մարգիկ մեծ շարժողութեան մէջ են, բայց  
յայտնի երեսում է, որ այդ շարժողութիւններն այն զուարթու-  
թիւնը չընին, ինչ-որ երէկ. ամենքն զգում են, որ այժմ  
պաս է։ Մեղմ զանգահարութիւնը օրը երեք անգամ և փառա-  
րանութիւնները եկեղեցիներում, ահա պասի միակ զարդա-  
րանքը։ Մարդիկ համեստութեամբ օրը երեք անգամ ժամ են  
գնում։ Երէկ նրանք ուրախանում էին, այսօր աղօթում և պատ-  
րաստում են հաղորդուելու։

Այժմ օրերն էլ փոխուել են։ Օդի մէջ գարնան նշաններն  
երեսում են։ Միջօրէի արեգակը բաւականին տաքացնում է։  
Կտուրներից բիւրեղեան շիթեր են կախում։ Ձնծաղիկը գեղ-  
նած խոտերի միջից իւր գլուխը բարձրացնում է։ Ի՞նչքան  
ուրախալի է մտածել, որ Զատկին երկիրը կանաչ խոտով ծած-  
կուած կըլինի։ Մենք միայն վեց շաբաթ ենք կարդալու. եօթ-  
ներորդ շաբաթն աղատ ենք։

#### 128. ԳԱՐՈՒՆ

**Վ**արօտ ենք տեսքիդ, աննման գարուն,  
Շուտ արի, մեզի քե՛ր ծաղիկ սիրուն.

Քե՛ր պայծառ արեւ, քե՛ր մեզ տաք օրեր,  
Ծըռվըռող թոշուն, քե՛ր կանաչ դաշտը։

Բա՛ց մեր դոները, բա՛ց մեր պատուան,  
Թող բացուին ծաղկին վարդ, մեխակ, շուշան։  
Փակուած սենեակից ելնենք, աղատուինք,  
Կանաչ դաշտ երթանք, խաղանք, զլորուինք։

**Ա**

129. ՄԱՆԿԱԿԱՆ ՅԻՇՈՂՈՒԹԻՒՆԻՑ  
ԺԱՂԱՂԱՋԱՐԴ ԿԻՒՐԱՀԻ

հա պասի վեց շաբաթն անցկայաւ։ Երէկ մեղ  
ուսումնալանից արձակեցին։ Երբոր տուն եկայ,  
հայրս հարցրեց, թէ երէկ ինչ տօն էր։ Ես  
այդ չգիտէի, բայց ինձ հասկացրին, որ շաբաթ օրը Վաղա-  
րոսի յարութեան տօնն էր։ իսկ այսօր Քրիստոսի հանդիսա-  
ւոր կերպով Երուսաղէմ մտնելու տօնն է։ այս հս զիտեմ։



Այսօր մեր տանըցիք բոլորը, բայց մանուկներից, շատ  
շուտ ժամ՝ գնացին։ Երբ մայրս վերապարձաւ, ձեռքին ուռ-  
ունէր։ Մենք դեռ անկողի մէջ ինք։ Մայրս ուռով մեզ կա-  
մաց խփեց և ծիծաղելով ասաց. «Անք կացէք, այսօր ով ու

շուտ վեր կենայ, չնորհքով տղայ կըլինի»։ Մենք ամենքս տեղ-  
ներիցս վեր թռանք։ Մայրս համբուրեց ամենիս և մի մի  
ուռ տուեց, ասելով՝

«Օրը տաքցաւ. ձիւնը հալուեց արեւից,  
Քըշալով ջուր է հոսում դռներից  
Սար ու ծորեր զարդարուեցան կանաչով.  
Դաշտը ծածկուեց ոչխարների հօտերով։

Հա-Հա-Հա-—զարուն է.  
Տեսէք, ինչպէս սիրուն է։

Ա՛յս, ինչ գեղեցիկ է։ Ուսի վրայ բրդոտ կոկոններ—  
գառնուլիներ կան. սա գարնան նշան է։ Երեփ շուտով ծառերի  
ծաղիկներն էլ կըրացուին։

130. ԱՀԱԳ. ՀԻՆԳՇԱԲԹԻ


**Ա**

յոօր ես խոստովանուեցայ։ Ես երկիրով մօտեցայ  
քահանային, չողեցայ նրա առաջ և խոստովանուե-  
ցայ իմ տղայական պակասութիւններս։ Քահանան խրատեց  
ինձ, և երբ ես խոնարհաբար խոստացայ, որ կ'աշխատեմ միշտ  
ջանասէր, բարի և ճշմարտախօս լինել, նա ձեռքը դրեց գլխիս  
և Քրիստոսի անունով օրնեց ինձ։

Պատարագն ոկտուեցաւ, բայց վարագոյրը գեռ ծածկած-  
ունէր սեղանը և քահանան կարգում էր այդ օրուան աղօթքը։  
Եկեղեցին վիճն էր մարդկանցով. նրանք ամենքն էլ աղօթում  
էին։ Ես էլ աղօթում էի. ես աղօթում էի, որ Աստուած ինձ  
կարողութիւն տայ կատարելու իմ խոստումներս։ Ես զիտեմ,  
որ խոստում չկատարելը մեծ պակասութիւն է։ Քահանան վեր-  
ջացրեց աղօթքը։ Յանկարծ վարագոյրը բացուեցաւ. սարկա-  
ւագները գեղեցիկ ձայնով երգել սկսեցին։ Մըրութիւնը վերա-


բերեցին ժողովրդի մէջ։ Հաղորդութեան ժամանակ սարկած ապը երգեց։ ԵԵրկիւղով և հաւատով առաջ եկէք և սրբութեամբ հաղորդուեցէք։ Ես խոնարհութեամբ և երկիւղով մօտեցայ սեղանին և հաղորդուեցայ։

Սյօր ես ամբողջ օրը չեմ վաղվել, այլ նստած էի տատիս մօտ և աղօթք էի կարդում։



Աւագ ուրբաթ գիշեր մէնք գնացինք սկին։ Քահանան կարգաց եկեղեցում, թէ ինչպէս էր աւանդում մեր Փրկիչը աշակերտներին իւր վերջին պատուէրները, և թէ ինչպէս զգում էր, որ ինքն արդէն մատնուած է և պէտք է բռնուի։ Իզուր չէր, որ ամեն մի աւետարանից յետոյ գալիքները ողբածայն երգում էին... Վերջին աւետարանը կարգացին, ուր մանրամասն զրուած էր, թէ հրէաներն ինչպէս շարչարեցին ու խաչեցին Քրիստոսին։

Սյս գիշեր տաս երկու գլուխ աւետարան կարդացին։ Իհարկէ դժուար էր կանգնել այդքան երկար, բայց ես կանգնեցայ։



### 131. ԱհաԿ ՈՒՐԲԱԹ ԵՐԵԿՈՑԻՆ

յոր Քրիստոսի թաղման օրն է և մենք գնացինք եկեղեցի։ Ժամերգութիւնը դեռ չէր սկսուել։ Ես սկսեցի պտտել եկեղեցու շուրջը։ Շատ պայծառ օր էր. արեգակը երեկոյեան վերջալուսի ճառագայթներով փայլեցնում էր եկեղեցիների գմբէթները։ Թուշուններն ուրախ-ուրախ թուշկոտում էին եկեղեցու կտուրի վրայ և երեկոյեան վերջալուսի տակ մեղմօրէն ծլվացնում էին։ Զնայելով այս բոլորին, ես կարծես տխուր էի. այսօր մեր Փրկչի թաղման օրն է. եկեղեցու մէջ դրած է Քրիստոսի դապաղը, որի չորս կողմը հանդարտ այրում են մոմերը և իրանց շուրջը կապտագոյն շառաւիղներ են արձակում. կարծես նրանք էլ տխուր են։ Միայն ուրախալի է լսել, թէ ինչպէս բարի Յովսէվը սուրբ կտաւով պատեց մեր Փրկչի մարմինը և չժողեց նրան շարագործների ձեռքը։

Ժամերգութիւնից յետոյ մենք յետ դարձանք տուն։ Ճանապարհին տեղ-տեղ դեռ ես ձիւն էր երեւմ, բայց շատ տեղերում էլ նա արդէն հալուել էր։ Հալուած տեղերը կամաչնորափթիթ խոտով ծածկուել էին։ Պարտէններում էլ հոտաւէտ փոքրիկ մանուշակն արդէն բաց էր արել իւր կապոյտ աշերը։ Ծառերի կոկոններն ուռել ու լցուել էին. իսկ նշենիներն արդէն քանի օր է զարդարում են այգիներն իրենց սպիտակ ծաղիկներով։ Ահա մերձակայ ձորում խոխոչում է ձիւնի ջրերից գոյացած առուակը։ Գեղեցիկ արե, զործիր ջանասիրութեամբ. մի մոռանար, որ երկու օրից յետոյ Զատիկ է լինելու։

**132. ԳԱՐԵՆԱՆԱՑԻՆ ԶՐԵՐ**

**Ս**արերի ծինը դեռ չէ վերկացել,  
Բայց դաշտ ու հովիտ փթթել են, բացուել-  
Չինի ջրերը ուրախ կարկաչով  
Յած են գյորտում հովիտի միջով:


Յած են պլորտում հովիտի միջով,  
Մտնում են դաշտը ուստի քռքիջով,  
Եւ ամեն մարդի, ամեն մի իրի,  
Յանկալի համբաւ, աւետիս տալի.

«Ահա կենսաբեր զարունը եկաւ,  
նոր հոգի, նոր կեանք մեր երկրին տուաւ.  
Դուք էլ, ո՞վ մանկունք, նոր եռանդ առեք,  
Գարնան ծաղկի պէս դուք էլ ճոխացէք»:

**Q**ատիկ շաբաթ. երեկոյին եկեղեցում հանդիսով տօնեցին սուրբ յարութեան ճրագալոյցը։ Մենք, երեկոյեան ժամից յետոյ, դարձանք տուն և լուծեցինք պասներս—ժաթախուեցանք։ Եօթը շաբաթ պահելուց յետոյ՝ ի՞նչքան ուրախալի էր ձեռքիդ ունենալ կարմիր ձու և նրանով ժաթախուիլ։ Սեղանի վրայ դարսած էին զանազան տեսակ կերակրեղին, բացի մսեղէնից, որովհետև այս երեկոյ նաւակատիք էր։ Հաց ուտելուց յետոյ ես շուտ քնեցի. բայց խնդրեցի մօրս, որ ինձ էլ դարթացնի առաւտեան ժամերգութեանը ներկայ գտնուելու։

Կէս զիշերից յետոյ մայր եկեղեցու զանգը որոտաց։ Ես  
Նրա ձայնից ինքս զարթեցայ։ Լուսաբացին միւս եկեղեցիների  
զանդակներն էլ ոկտեցին մեղմաբար զօղանչել։ Մենք գուշակ

Եկանք տանից։ Փողոցները դեռ ևս մութն էին, բայց եկեղեցին հազարաւոր ճրագներով փայլում էր։ Եկեղեցում այնքան ժողովուրդ կար, որ մենք հազիւ տեղաւորուեցանք։ Ճամերգութիւնն սկսուած էր։ Ես անշափ ուրախացայ, երբ սարկաւագները երգեցին քաղցր ձայնով. «Քրիստոս յարեաւ ՚ի մեռելոց,



մահուամբ զմահ կոխեաց և յարութեամբն իւրով մեզ զկեանս պարգևեաց»։ Ահա իսկապէս ամենամեծ տօնիր։

Պատարագը վերջանալուց յետոյ՝ մենք վերադարձանք տուն։ Ես շտապեցի համբուրելի իմ հօրն ու մօր ձեռքը, կրկնելով ինձ շատ սիրելի խօսքը՝ «Քը իստու յարեաւ ի մեռելոց»։

Նրանք էլ ինձ համբուրեցին։ Սպա ես մօտեցայ իմ փոքրիկ  
եղբօրս ու քրոջ և քաղցրութեամբ համբուրեցինք իրար։  
Մի քանի ժամից յետոյ եկաւ քահանան տիրացուի հետ։  
Նրանք օրհնեցին մեր տունը և երգեցին Քրիստոսի հրաշ-  
փառ յարութեան շարականը։

Ես և եզրայրս դուրս եկանք, որ գնանք մեր բարեկամ-  
ների Զատիկը չնորհաւորենք։ Այս, ինչպէս գեղեցիկ առաւոտ  
էր. փայլուն արել սփռում էր իւր արծաթագոյն ճառագայթ-  
ները։ Մեր պարտիզի բոլոր նշենիները ծաղկել էին. մանու-  
շակը խոտերի մէջ փոռուել էր ինչպէս մի կապտագոյն սփռոց  
և անուշահոտութեամբ լցնում էր աշխարհ։ Ահա միւս կողմից  
ծիրանի ծառերն էլ իրանց կիսաբաց կոկոնների տակից հա-  
մեստաբար ժապում են։ Այս, ինչքան պայծառ է օրը. բոլոր  
բնութիւնը կարծես զարդարուած լինի։ Կոռնկների երամներն  
ահա շղթայաձև լնթանում են՝ փառաբանելով գեղեցիկ գա-  
րունը. իսկ նրանցից ցած, երկրի վրայ, մանուկները, միասին  
ժողովուած, ուրախ գուարի ձուի են խաղում։ Ահա մատաղ  
գառների փոքրիկ հօտերն էլ մայելով շրջում են փողոցներում։  
Ամեն մարդ աշխատում է գառն ունենալ իւր տանը։ Սա Զատ-  
կի նշանն է։ Հայրս գնեց մեզ համար մի գեղեցիկ գառը. ես  
նրան շատ եմ սիրում և նորաբոյս կանաչ խոտով կերակրում եմ։

134. Զ Ա Տ Ի Կ

**Ը**ողմը հնչեց ի հարաւէն,  
Ազատուեցան դաշտք ծիւներէն.  
Բերկրութիւն է ամեն տղոց.  
«Քրիստոս յարեաւ ի մեռելոց»։

Առուները խոխոջացին,  
ծառերն բողբոջ արձակեցին.

Օդը լի է ձայնիւ թռչնոց.  
«Քրիստոս յարեաւ ի մեռելոց»։

Տղայ, աղջիկ ուրախ, գուարիթ  
Փթթեցան զերդ մայիսի վարդ. . .  
Ոխ, քէն շունի սիրուը մարդոց.  
«Քրիստոս յարեաւ ի մեռելոց»։

Քրիստոս յարեաւ . . . կասկած չկայ,  
Բնութիւնն համայն է մեզ վըկայ . . .  
Բայց ե՞րբ կ'ասէ լեզուն չայց.  
«Ճոյլն էլ յարեաւ ի մեռելոց»։

135. ՔՐԻՍՏՈՍ ՅԱՐԵԱՒԻ

**Պ**աշտերումը ծիւնը հալուեց,  
Կենդանարար հովը փչեց.  
Սառնամնիք, հողմ՝ ծըմեռուան,  
Կարծ միջոցում անյայտացան։

Բերկրութիւն է անհոգ մարդոց.  
«Քրիստոս յարեաւ ի մեռելոց»։

Այգիք, պարտէզք զարդարեցան,  
ծառերն ամեն կանաչեցան.  
ծիծնոնակներ, թռչուն ամեն  
Ողջունեցին նորեկ գարնան։

Ցնծութիւն է հարուստ մարդոց.  
«Քրիստոս յարեաւ ի մեռելոց»։

Բազմութիւնը մեծ ու փոքր  
Ժողովուեցան Եկեղեցին,  
Հարսն ու աղջիկ զարդարուեցան  
Որպէս ծաղկունք զարնանային:

Բերկրութիւն է շա՛տ—շա՛տ մարդոց.  
«Քրիստոս յարեա՛ւ ի մեռելոց»:

Եկեղեցում վիզը ծռոած,  
Հագուստները պատառոտած,  
Քարի վըրայ ոտարոքիկ  
Տեսէ՛ք, եղբարք, ո՞վ է կանգնած:

Սուգ ու լաց է թշուառ մարդոց,  
«Քրիստոս յարեա՛ւ ի մեռելոց»:

Որդկերանցով շրջապատուած,  
Նա աղքատ է, սոված, քաղցած.  
Նա տըկար է, անօգնական.  
Մըխիթարե՛նք, եղբարք, նորան:

Տանջանք, մահ է թշուառ մարդոց.  
«Քրիստոս յարեա՛ւ ի մեռելոց»:

#### 156. ՄԱՆԿԱԿԱՆ ՅԻՇՈՂՈՒԹԻՒՆԻՑ

Մեռելոցք.

**Պ**ատիկ երկուչարթի ծնողքս ինձ, քրոջս և եղբօրս տարան հանգստարան։ Այնտեղ, գերեզմանաքարերի տակ, հանգստանում են մեր ազգականներից շատերը։ այնտեղ է և իմ քոյր Եղիսաբէթը։ Քահանան ներկայ էր։ Հայրս օրհնել

տուեց քրոջս գերեզմանը։ Ի՞նչքան խոտեր են կանաչել նրա փոքրիկ բնակարանի վրայ։ Գերեզմանատունն էլ է նորոգուել։ Ամեն կողմում ծաղկում են գեղեցիկ ծաղիկներ։ Շատ գերեզմանների ճաղապատերի մէջ իրանց ազգականները զանազան ծառեր են տնկել։ Գարունը չէ մոռացել հանգստարանն էլ գեղեցկացնել։ ծառերը զարդարուած են կանաչ տերևով։ Ծոշուները նրանց վրայ ծոշկոտում են և ծլվում։ մինը ծոտ է տանում, միւսը փետուրներ, երևում է, որ նրանք սկսել են իրանց համար բներ շինել։ Հանգստարանի միւս կողմում գիւղացիք արդին հերկում են իրանց վարելահողերը։

#### 137. ԵՐԿՐԱԳՈՐԾԻ ԵՐԳԸ

**Ե**մ զոյզ ընկերներ, թանկագին եղներ.  
Ահա եւ զարնան քացուեցան օրեր.  
Աշնան սկզբից մեր խոփ ու ծեւիչ,  
Արօրի շղթան, մածկալի սրբիչ

Վաղուց են ընկած,  
Ժանգի կուր դարձած։

Բացուեց արշալյս, ծագեցաւ արեւ,  
Աշխարհին տուաւ ցանկալի քարեւ.  
Ամեն շնչաւոք նոր հոգի առան.  
Մենք էլ սկսենք մեր գործ—վարուցան։

Քաշենք արօրը,  
Բացում է օրը։

Զմեռը ամբողջ ես ծեզ հոգացի,  
Խոտ ու դարմանով հանգիստ պահեցի։

իմ ամենօրեայ գործը անխափան սուր ըմաս  
շնորհող Ձեր շուրջ պտտելն էք ծառայի նման։ Թիվզափ  
-քայլը տամ Այժմ ե'կ կրկին  
Գործենք միասին։

Արտը պիտ' հերկենք, սերմ պիտի ճգենք,  
Հաց-հատիկներին օրբան պատրաստենք։

Խոնաւ մայր-հողը նրանց կը պրկէ,  
Իւր առատ հիւթից սնունդ կը ճամքէ։

Ծո՛ւտ, ե'զներ, հօ՛տաղ,  
Ձեր ջանին մատաղ։

Կը բուսնին սերմերն, կը տան ընծիւլներ,  
Նրանց կատարին քստալի հասկեր  
Կ'ուռչին, կը փքուին ատօք պտուղով.  
Կը հնանմ նրանց իմ կեռ մանգաղով։

Դէ՛ն, իմ քաջ եզներ,  
Վարենք շա՛տ արտեր։

Օրը լաւ քացուի, կ'արձակեմ ես ծեզ,  
Առատ ջուր կը տամ, կուտէք հիւթեղ սէզ.  
Մածը ճեռք կառնեմ, կը վարենք արտը  
Հողին պահ կը տանք մեր յոյսն ու դարդը։

«Հայր մեր երկնատը,  
Վաստակս օրհնիր,  
Եզներիս ո՞յժ տուր,  
Գործըս յաջողիր»

138. ՄԱՅԻՍՈՒԱՅ ԱԴԱՀՈՏ

**Պ**'նչպէս թարմ և գեղեցիկ է մայիսուայ առաւօտը Գաշ-  
տերը ծածկուած են կանաչ խոտերով ու ծաղիկներով։  
Կարծես ընութիւնն օրէցօր աւելի քաղցրանում է և գալնա-  
նային մէգի միջից ժպտում է ամառը։

Երբ ես զնում եմ անտառը, այնտեղ, թփերի ստուերնե-  
րի տակ, ծաղկապատ հովիտներում, փռուած եմ տեսնում մա-  
յիսուայ որդին՝ սպիտակ և անուշահոտ շուշանը։ Ամենայն  
տեղ, ուր որ նայում ես, աչքիդ առաջ կանաչ գորգեր է սրփ-  
ուուած, որնց վրայ առաւօտեան ցողը ցանել է իւր մարգար-  
տեայ կաթիւները։ Արեի առաջին ճառագայթներն, ընկնելով  
ծառերի տերեների և ցողապատ մարգերի վրայ, փայլեցնում  
են նրանց ինչպէս աղամանդեայ ակունքները։ Թուշունները ծըլ-  
վրլում են չորս կողմդ. իսկ ահա այն կողմից, վարդի կիսա-  
բաց կոկոններով ծածկած թփերի մէջ, լսում է մի զմայլելի  
ձայն, դա սոխակն է։ Սուաւոտեան արշալոյսին նա կանգնած  
է բացուող կոկոնների վրայ, աչքերը կիսախուփ, կարծես ինքն  
իւր երգից յափշտակուած, երգում, շըլշըլքացնում և հազար  
տեսակ խաղացնում է իւր քաղցր ձայնը։ Նա երգում է, սպա-  
սելով վարդի սիրուն կոկոնների բացուելուն։

139. ԱՄԱՌԸ

**Ս**տեղծողն իւր առատ ճեռքը քաց արեց,  
Արտեր, անտառներ հարստացրեց.  
Ժառեր ու թփեր զարդով ծածկուեցան.  
Ամենայն կողմում ծաղկունք փայլեցան։

Ազատ շոշում են հօտերը դաշտում։  
Ազատ լողում են ձկները ծովում։

Այսում պտուղներն դեղնիլ սկսան.

Արտերում հարուստ ցանքերը հասան:

Դաշտում մանգաղներն սկսան փայլիլ

Եւ անտառներում թռչնակներն երգել.

«Ի՞նչքան սիրուն է այս ստուերներում.

Ե՛կ, հանգստացի՛ր, մանկիկ, հովերում,

Ականջ դի՛ո, ինչպէս մենք երգ ենք երգում,

Առատ ամառուան փառք վերընծայրում»:

— «Ոչ թէ ամառուան, ասաց, փառք տուէք՝

Ով ամառ տուեց, նորան օրննեցէք:

#### 140. ԱՄՐԱՐԱՅԻՆ ԱՌԱԽՕՏ



մառուան պարզ գիշերն անցկացաւ. առաւօտեան  
հովը տարածուեցաւ օդի մէջ. մուժ մէգերը բարձ-  
րացան ձորերից. աստղերը մինը միւսի յետեից շիջան. լուս-  
աստղն էլ թառամեցաւ և շիջանելուն մօտ էր. նա երկնակա-  
մարից նկատում էր, որ ամպերը վաղում են դէպի արևելք և,  
հանդիսակերպ արեգակին, ոսկիափայլ և արծաթագոյն շերտե-  
րով զարդարում են.

Ահա և նա երեւցաւ: Ուրախ զուարթ բարձրանում է  
երկնքում ոսկէճաճանչ արևը: Նա իւր փայլուն ճառագայթնե-  
րով արթնացնում է գետակները, դաշտերը, հովիտներն ու  
անտառները. արթնացնում է ծառերի վրայ թառ եղած թրո-  
չուններին և անտառի գաղաններին. արթնացնում է և բգէզին,  
որ մի փոքր հանգստացել էր իւր մամուապատ անկողնում: Ոս-  
կիանման արևը կարճ խօսքերով ասում է ամենին. «Հանգստա-  
ցք, բաւական է, այժմ ժամանակ է գործ շինելու»:

Գիշերն ամենքը հանգստացել են ցերեկուայ գործերից:  
Դաշտերն ու արտերը, զովարար ցողով նորոգուած, նոր ոյժ

են ստացել և ոսկիանման փայլում են առաւօտեան ճառա-  
գայթների տակ: Ծառերի տերմները, մարգերի խոտերը, ար-  
տերի հասկերը—բոլորը նորոգուեցան, զուարթացան: Թուչուն-  
ներն արթնացան և սկսեցին ուրախ երգելով իրանց նախկին-  
գործը ձեռք առնել: Ամառուայ գիշերը կարճ է, բայց կեն-  
դանարար է:

Մանուկները զարթեցան և յետ գցեցին վերմակները.  
Նրանց մատղաշ անդամները բաւական հանգստացել էին, ոտ-  
ները կամենում էին վագել, ձեռները գործ էին խնդրում, դան-  
գրապատ գլխներում նորնոր մտքեր էին ծնւռում: Աղջկերքը  
հագնուեցան, սառը ջրով երեսները լուացան, Աստուծուն ա-  
զօթք արին և գնացին ուսումնարան: Ահա վաղում են նրանք,  
ծըլվըլում են ինչպէս թուչունները դաշտերում և ուրախ զու-  
արթ սկսում են գործել: Արեգակը երկնքից նայում է աշխա-  
տասէր մանուկներին և ասում է քնչշաբար. «Թոհղ Աստուծ-  
օգնէ ձեզ»:

#### 141. ԶՈՒԿ

**Տ**աք է . . . իսկ գետումը, եղերքի ստուերների տակ,  
առոյգ ձկները խմբովին շարժուում են. նորանոր առուակ-  
ներում նրանք համարձակ կերակուր են որոնում կամ ազատո-  
րէն զրօնում են: Ահա, նայեցէք, ինչպէս ձուկը ջրի յատա-  
կում խաղում է ուրախ:

Չուկը, այ ձուկը, խաղան որքան կամենում ես, միայն  
զգուշացիր պողպատեայ կեռերից. ահա մանուկը կարթը ձեռին  
նստած է ուռենու տակ և զգուշութեամբ նայում է քո հետքից:

Չուկը չէ տեսնում մահարեր կարթը. նրա ծայրին հագ-  
ցրած է պարարտ որդը: Չուկը ագահաբար յարձակուեցաւ նրա  
վրայ և իւր փոքրիկ բերանի մէջ առնելով ցած գնաց մինչեւ  
ջրի յատակը: Մանուկը արագապէս քաշեց մաղէ քուղը...

Խեղճ ձուկը, կեանքդ կարճացաւ:

## 142. Ո Հ Ռ Ե Ն Ի

«Ունենի կանաչ, ուռենի՞ սիրուն,  
ինչ՞ դու այօթ ուրախ չես ժպտում.  
Մի՞թէ քեզ սաստիկ արեւն է այրում,  
Արե՞ւն է այրում, անձրե՞ւը ծեծում,  
Արմատիդ մօտից սառ ջուր չէ վագում».

Հայոց աշխարհից իշխաններ անցան,  
Ուրին կտրեցին—կեանքից գրկեցին.

Նրան տաշեցին, տաշտորեցին  
Եւ իրանց համար թիեր շինեցին,  
Նաւակ կազմեցին, մէջը նստեցան,  
Մէջը նստեցան ու տուն յետ դարձան  
Եւ ինձ, փոքրիկիս, հետները տարան:

## 143. ԱՄԱՌԸ ՄԱՐԴԱԳԵՑԻՆՆԵՐՈՒՄ

Մանկական յիշողութիւնից



Պայք, վաղը առաւօտեան մենք ամենքս կը  
գնանք խոտհարքի», ասաց մեր հայրը, և  
մենք այնպէս գորգուացինք ու վազգեցանք, որ  
զօրով կանգնեցրին մեզ: Ես ձու-  
կը բռնելու կարթեր էի պատրաստել, իսկ  
քոյրերս վեր առան իրանց կողովները, որ  
պատղիներ հաւաքին և առաւօտեան լուսա-  
բացին մեր բոլոր ընտանիքը, սայլերի վրայ  
նստած, ճանապարհ ընկաւ:

Մի ժամից յետոյ մենք շեղուեցանք լայն ճանապարհից և  
գնացինք նեղ շակողներով, իսկ վերջումը բոլորովին ճանա-  
պարհից դուրս եկանք և, վերջապէս, ճասանք մեր վափագելի

մարգագետիններին: Երբոր մենք տեղ հասանք, արեի ոսկէ-  
փայլ ճառագայթները դեռ նոր ծածանւում էին մեծ Մասսիի  
ձիւնապատ գագաթի վրայ, բայց հովիտն արդէն հնձողներով  
լիքն էր. Հնձողները, չուխանները հանած, շապկանց, զոյգ-զոյգ  
առաջ էին քայլում բարձր խոտերի մէջ և իրանց յետուից ձգում  
էին կանաչ խոտերի շերտերը: Նրանցից փոքր ինչ հեռու,  
միւս կողմը, նրանց ընկերները փոցխով ու եղանով հաւաքում  
էին չուլացած խոտը և փոքրիկ դէղեր կազմում: Հովտի այս  
ու այն կողմերումն էլ սարի նման բարձրանում էին մեծամեծ  
դէղեր, Մէկ մարդ կանոնած էր դէղի գլխին և վարպետու-  
թեամբ դարսում էր խոտը: Գիւղացի մանուկները փոքրիկ կոյ-  
տերը կրում էին մեծամեծ դէղերի մօտ: Ուրախութեան աղա-  
զակը տարածում էր օդի մէջ. աշխատասէր մշակները գոր-  
ծում էին զուարձութեամբ. երգեր, ծիծաղ, բարձրաձայն խօ-  
սակցութիւնն, չների հաջոցը, գերանդիների զընգընդոցը, բեռ-  
նակիր ձիաների խրխընջոցը, եղների բառաչիւնը, անիւների  
մեղմ շառաշիւնը—այս բոլորը խառնուելով քնութեան երգիների  
քաղցր դայլայիկների հետ, յափշտակում էին մարդու միտքը:

Ես շտապեցի ձուկը բռնել այն գետակի մէջ, որ հոսում  
էր այդ հովտի միջով. իսկ քոյրերս սկսեցին հատապտուղներ  
ժողովել: Յետոյ մենք շատ ուրախութիւններ արինք՝ թիթեռ-  
ներ բռնեցինք, ծաղիներ ժողովեցինք և քոյրերիս հաւաքած  
մորու գեղեցիկ կարմրախառն հատիկներից փունչեր կագմեցինք:

Փոքր առ փոքր սկսեց մութն ընկնիլ. արեգակն արդէն  
ծածկուել էր հորիզոնի յետեր: Մշակները դադարեցին իրանց  
գործերից, ցած զրին գերանդիները և խաչակրելով գոհացան  
Սստուծուց: Մի քանի բոպէից յետոյ բանուտըները, գերան-  
դիներն ուսերին, ուրախ-ուրախ ճանապարհ ընկան դէպի գիւղը:  
Փոքր տղաները, խումբեր կազմած, գնում էին առաջից. նրան-  
ցից մի քանիսը որինդ էին ածում, միւսները պարելով հետե-  
ւում էին նրանց և երգում:

Սաստիկ շոգ է. ցորեն, զարի հասել են.

Հնծողները խոտը քաղել, դիզել են.

Բոլոր ծառեր ծածկը թւշ են տերեւով.

Պտուղները «ծի՛թ» են անում ժպտալով.

Հօ՛-հօ՛-հօ՛, — ամառ է,

Արեւը խիստ կռվառէ».

Ես ու քոյլերս էլ խառնուեցանք այդ երգող դասի հետ  
և ամեննեին շիմացանք, թէ ինչպէս տուն հասանք:



#### 144. ԱՄԱՆԸ ԴԱՇՏՈՒՄ

Կրախ և ապատ է լինում մարդ ընդարձակ դաշտում: Մինչև հեռաւոր անտառի կապոյտ եղերագիծը, բլրակների վրայից օրօրուելով, տարածում են գոյնզգոյն արտերը: Ուկէզոյն հաճարը ծածանում է, ներս ծծելով կենսատու օղը: Կապտում է դեռահաս գարին, սպիտակում է ծաղկած սիմինդը (եղիպտացորեն), զարդարուած կարմիր ցողունով և վարդակարմիր մեղրաբեր ծաղիկներով: Ճանապարհից փոքր ինչ հեռու, կարծես, թաք է կացել գանդրաւոր սիսեւը: Նրա միւս կողմը տարածուած է բաց կանաչ վուշի արտը իւր կլորիկ գլուխներով և կապուտակ աշիկներով: Բայց ահա ճանապարհի միւս կողմը տարածուած են ցորենի ճոխ արտերը և բարեկամաբար ողջունում են, իրանց միւս եղբայրներին:

Արտուտը գայլայում է, արտերի վրայ բարձրանալով, իսկ սրաթե արծիւը իւր հեռանկատ աչքերով նայում է երկնքից: Նա տեմնում է շատախօս լորին խիտ արտերի մէջ և դաշտային մկանը, որ կրում է հասած հասկերից թափած հատիկները:

Ամեն կողմից հազարաւոր զմայլելի ձայներ են լաւում:

Իսկ մեծ ճանապարհի վրայ, երկու ջուխտ եղը լծած, ճրճուալով առաջ է գնում չոր խոտը բարձած սայլը և օդը լցնում է անուշ բուրմունքով:

#### 145. ԱՄԱՆԸ ԱՆՑԱՌՈՒՄ



Նտառում այն ընդարձակութիւնը չկայ, ինչոր դաշտումը. բայց ամառուայ շոդ օրերին անտառը շատ հաճելի է: Եւ ինչ չկայ անտառում: Բարձր կարմրագոյն մայրիները կախել են իրանց վշտ գագաթները: Լայնատերև և հսկայակազմ սոսիները իրանց կոկոծների ու թաթաձեւ տերմների սոսափիւնով անցնողի ուշքը գրաւում են: Մոխրագոյն բարտի ծառը շարժում է իւր վինջածն գագաթը: Իսկ հաստարմատ կաղնին իւր վրանածն ճղները տարածում է շուրջը: Չորս կողմդ բարձրանում են շատ հասարակ ծառեր՝ հացի, բոխի, թխլի, հաճարի: Այս չէ բոլորը: Շատ փոքրիկ, բայց պտղատու ծառեր էլ կան անտառում: ահա հոնը կարմրին է տալիս հեռուից, նոյնպէս վայրենի տանձ ու խնձորը զարդարում են ծառերը: Խոտերի միջից մորու սպիտակ ծաղիկն է փայլում, իսկ նրա մօտ արդէն կարմրել է գեղիցիկ համեղ պտուղը: Անտառային շուշանի սպիտակ գինտերը օրօրուում են երկար ու հարժ տերմեների միջից: Միւս կողմից կարծրակտուց փայտփորը կտկում է ծառերը. սև սարեակները թնդացնում են օդը իրանց երգերով, իսկ անտուն կկուն համարում է իւր կեանքի օրերը: Մոխրագոյն նապաստակն ահա թփի տակը մտաւ. իսկ խորամանկ աղուէսը նայում է նրան իւր որջի դըռնից: Ահա անտառի խորքում մինը ծառերի ճղները ջարդում — փշրում է. սա թաթեղ արջն է, որ իւր համար պտուղներ է պուճոկում: Անտառներում պակաս չեն նաև կխտարը, եղինիկն ու եղջերուն, այժն ու քօշը, վայրենի կինճն ու մէրունը:



146. ԱՐՁԱԳԱՆՔ

Ե զագանն է անտառի մէջ մինչում,  
Թէ եղջերուն—կամ ամպերը որոտում,  
Թէ այս կամ այն կողմերից երգեն երգում  
—Ամեն ձայնի  
Իւր արձագանքը ընդարձակ օդում  
Կըպատասխանի:

147. ՇԻՆԱԿԱՆՆԵՐԻ ԱՌԱՀՈՏԵԱՆ ԵՐԳԸ

**Ա**յ մարդ, այսօր շատ քընեցար, ննջեցիր, տակաւ  
Առաւոտեան հով ժամանակն անցուցիր.  
Արեգակը ծովի ծայրէն ծագեցաւ.  
Զերմութիւնը ծորն ու դաշտը փորւեցաւ:  
Հնկերներդ վաղ արտերը գնացին,  
Ցորեն, զարի գերանդիով հնձեցին,  
Խուրծ կապեցին, բարդ բարդեցին դաշտում,  
Նըստան հանգչել կաղնիների հովումը:

Այ մարդ, վե՛ր կաց, սառը ջրով լուսումի՛ր,  
Գոտիդ կապէ, գերանդիդ ա՛ն, դաշտ հասի՛ր.  
Քանի հով է հունձդ արա՛ արտումըդ,  
Հունձդ հնձէ, մի՛ ծուլանար գործումըդ:

Հունձդ կապէ՛, բարդըդ բարդէ՛, տուն արի,  
Հանգատացիր, երբ քո հունձդ կատարի.  
Բե՛ր գերանդիդ, կախէ պատէն քո տանը,  
Ես իրիկուան կըպատրաստեմ սեղանը:

Այ մարդ, հերիք, ինչոր այսօր քննեցար,  
Աչքդ մէկ քա՛ց, տե՛ս թէ որշափ ուշացար.  
Մեր դրացին վաղ անց-կացաւ կամուրջէն,  
Վաղ լըոել է մեր գգիրը ճայնելէն:

Ի՞նչ ես պառկել, ի՞նչ ես քընել, սիրեկան,  
Արեգական շողը հասաւ մեր ողողան.  
Մի ծուլանար, ժամանակը իսընայէ,  
Այն պիտի մեզ քոլոր ծմեռ կերակըէ:

148. ԹԱԺԱՑ ՀԱՑ



Եւրակէի արել ծածկուեցաւ անտառի յետել: Միւս  
առաւոտ գիւղացին իւր որդոց հետ գուրս գնաց գաշ-  
տը և ուրախ-ուրախ նայեց մարգագետիններին ու արտերին:  
Մարգագետիններում կանգնած էին մեծամեծ խոտի գէզեր.  
Խսկ արտերում դեռ տատանւում էին հասած ցորենի հասկերը:  
Գիւղացին խաչակնեց և ասաց. «Օրհնենք Աստուծուն, որդիս,  
այս տարի մեր տաւարը խոտ կ'ունենայ և մենք էլ հացա: Գիւ-  
ղացին պոկեց մէկ հասկ, տրոլեց իւր ափի մէջ, նայեց և  
տեսաւ, որ հատիկները մգացել են, յետոյ ատամի տակ փոր-  
ձեց և տեսաւ որ տրաքում է: «Մրգիք, ժամանակ է հնձելու.  
Ճեր մայրը երէկ ամբարի վերջին ալիւրը մաղեց»:

Միւս օրը, թէ մեծ և թէ փոքր, բոլորը գուրս թափուե-  
ցան գէպի արտերը: Խուրձերը արագութեամբ շարուեցան մի-  
մեանց յետելց. Խսկ երեկոյին արդէն բարձր տասնեակներ և  
երեսնեակներ կարգով կանգնած էին արտումը:

Գեռ հունձը չէր վերցացել, որ կամն սկսեց պտտել կալի  
վրայ: Հայրը մի բեռը ցորեն տարաւ ջրաղացը և այնտեղից  
ճերմակ ալիւր բերեց: Մայրը խաշ ճարեց, խմոր հունցեց,

իսկ միւս օրը մանուկներն արդէն ուտում էին նոր ցորենից  
պատրաստած թափայ հացը:

149. ՀՈՒԽՉ

**Ա**հա քանորդներն շարէշար կանգնած,  
Մանգաղը ծեռքին, զոգնոցը կապած,  
Մինչեւ գոտկատեղ բարձրացող արտում,  
Ժպիտն երևսին, ցորեն են հոգում:

Հնդարձակ դաշտը, որ ամիսուկէս  
Մեղմ քամու դիմաց կապոյտ ծովի պէս  
ծըկում թեքում էր ու հէրանց գնում,  
Այժմ նորից յետ դառնում, իւր տեղն էր քըռնում,  
Տիրոջ օրնութեամք հասկնութ լցուած,  
Արեւի դիմաց փայլում է, խաղում, այսուցում  
Ամքողջ հովիտը հուզ ու ծով շինում:  
Դաշտը քոնած է, կասես, օրն ի բռն:

Ահա քանորդներն շարէշար կանգնած,  
Մանգաղը ծեռքին, զոգնոցը կապած,  
Հընառում են ցորեն ու խուրձներ կապում,  
Կապած խուրձներից տասնեակներ կազմում:

150. ԶՈՒՄԱԳԱՐՀՈՐԴՈՒԹԻՒՆԸՑ

1. **Պ**ուրը ում ասես, որ հարկաւոր չըլինի: Բոյերին,  
գազաններին, թռչուններին և մարդկանց հարկաւոր է նա: Ահա թէ ինչի Ստուած ծովերը և ովկիանուները  
լցրեց զրերով:

Բայց ծովի ջուրն աղի է և դառն: Այդ վնաս չունի,  
որովհետև ամենքը ծովի մօտ չեն բնակւում: Բայց ինչպէս  
մաքրենք ջուրը, ինչպէս տանենք մենք նրան ծովերից հազարաւոր  
մզոն հեռու, ինչպէս բարձրացնենք նրան սարերի դուխը, ինչպէս  
անենք, որ նա յաւանայ, խմելու ջուր դառնայ:

Ստուած այս գործը յանձնել է աշխատասէր արեին:  
Իւր տաք ճառագայթներով արել ջուրը թեթև գոլորշիների է  
դարձնում. զրի գոլորշիներն իրանց միջի աղային մասերը թողում  
են ծովերում, իրանք բարձրանում են և, թանձրանալով,  
երեսում են արծաթափայլ ամպի կերպարանքով կապոյտ երկ-  
նակամարի վրայ:

2. Գոլորշիները բարձրանալով թանձրանում և ամպ են  
դառնում, բայց նրանք չեն կանգնում ուղղակի ծովի վրայ:  
Սյատեղ քամին սկսում է իւր գործը և անագին ամպերը թեթև  
փետուրի նման քշում է դէպի լոյս աշխարհի ամեն կողմերը:  
Ամեն մէկ ամպի մէջ այնքան ջուր կայ, որ եթէ նա միանգա-  
մից ցած թափուէր, կրծածէր քաղաքներ, գիւղեր, մարդկանց  
և կենդանիներին: Բայց Ստուած գործը ուրիշ տեսակ է  
կարգադրել. ամպերից կաթկաթում են անձրկի փոքրիկ կա-  
թիլները, ինչպէս ալիւրը մաղի միջից, կամ սառչում ու թափ-  
ում են ինչպէս ձիւն:

3. Ջուրը թարմացնում է հովիտներն ու արտերը և հողը  
նրան իւր ներսն է ծծում: Հողի տակ աւելորդ կաթիլները  
միմեանց յետեից հաւաքւում և կազմում են ստորերկեայ փոք-  
րիկ կոհակներ. մի քանի կոհակներ խառնում են միմեանց

հետ և, մի ճանապարհ գտնելով, դուքս են բղխում երկրի երեսը սառն աղբիւրի ձևով։ Աղբիւրը բղխում է և առուակ կազմելով առաջ է խաղում։ Առուակն իրան համար ճանապարհ է պատրաստում։ Փոքր առ փոքր հողը քանդում է և սկսում է քարերի վրայ խոխոչալով առաջ գնալ։ Պատահում է, որ նա ճանապարհին հանդիպում է մի իւր նման շատախօսի և նրա հետ եղայրանալով, ձայն ձայնի տուած, առաջ են խաղում։ Նրանք միմեանց հետ առաջ են գնում։ իսկ նրանց պատահում են ճանապարհին երրորդ, չորրորդ և հինգերորդ առուակներ... Նրանք ամենքը խառնում են միմեանց հետ և բարեկամաբար առաջ են հոսում։ Նայում տեսնում ես, որ ահա այս եղայրական միութիւնից մի կանոնաւոր գետակ է կազմուել։ Այս գետակը ջուր է տալիս մարդկանց, կենդանիներին, թարմացնում ու զովացնում է դաշտերի ծարաւ բոյսերը, պտրտացնում է ջրազացների երկանները, կրում է իւր վրայ լաստեր և թեթև նաւակներ։ իսկ նրա սառն կոհակների մէջ խաղում են ուրախ ձկները՝ փայլեցնելով իրանց արծաթագոյն թեփուկները։

4. Գետակը վազում խառնում է ուրիշ գետակի հետ և  
միասին առաջ են գնում։ Ճանապարհին նրանց հետ խառնը-  
ում են ուրիշները և այսպիսով կազմում են մի ահազին գետ,  
որ ունենում է բաղմաթիւ վտակներ և անցնում է մի թագա-  
լորութիւնից միւս թագալորութիւն։ Երբեմն միննոյն գետն  
անցնում է շատ մանր տէրութիւններով և նրանց ամենին էլ  
բաշխում է իւր առատ ջրից։ Լողում են գետերի վրայ ծանր  
նաւեր, որոնք բարձած են լինում զանազան ապրանքներով։  
Անցնում են նրանց վրայով առագաստաւոր նաւեր, իսկ եղերք-  
ների մօտ շինուում են արուեստագործական գիւղեր և առևտրա-  
կան քաղաքներ՝ մինը միւսից հարուստ։ Գետը մեծամեծ հա-  
րստութիւններ է տանում մի երկրից միւսը կամ դէպի հեռա-  
ւոր ծովեր և իւր լայն բերանով ոչ ժէ փոքրիկ նաւակներ,

այլ մեծամեծ նաւեր, թևանման առագաստներով զարդարուած, ծովին է մտցնում:

Գետերից շատ զուր է թափւում ծովերի մէջ. բայց արեգակն էլ հանդարտ չէ մնում. նա առատ գոլորշիներ է բարձրացնում, ամպեր է կազմում և ամբողջ աշխարհին անձրև է բաժանում:

Գետերը դարերով թափւում են ծովերի մէջ և նրանց  
երբէք չեն լցնում. արմն էլ յալիտեան գոլորշի է բարձրա-  
ցնում ծովերից, բայց երբէք նրանց չէ ցամաքեցնում: Այսպէս  
ամենիմաստ կերպով է կարգադրել Աստուած այս բանը:

### 151. ՄԱՆԿԱԿԱՆ ՑԻՇՈՂՈՒԹԻՒՆԻՑ

Նույսանի հայոցը պղի առ զօրի պղմ՝  
-իս և Խամբաշչի պղոք դու պարտնու **Օգոստոս**




**Ա**ստ ժամանակ է՝ ես իմ յիշատակարանումս ոչինչ չեմ գրել. ամբողջ ամառ ես դրա համար միջոց չ'ունէի:  
Սյսմ մենք էլ այնքան չենք խաղում, որովհետև շուտ-շուտ անձրեւում և աշնան հոտ է գալիք:

Սյսօր, Աստուածածնի վերափոխման տօնին, մեծ ուրախութեամբ եկեղեցի են տանում այդիների և արտերի պատուղները։ Աստուածածնին պատուղներն օրէնում են։ Գիւղական փոքրիկ եկեղեցին լիքն է մարդկանցով։ Բարի գիւղացին ջերմեանդութեամբ վեր առաւ մի փոքրիկ խաղողի ճիռ և մի բուռը ցորեն։ Խաղողը նա կերաւ, պասը լուծեց, իսկ ցորենը տարաւ, իւր սերմացուի հետ խառնեց։ Հայրս և մայրս այսօրից սկսեցին պատուղներ ուտել. իսկ մենք վազուց լուծել էինք պատղապատաւ։

Դաշտերում արդէն շարուած են ցորենի տամնեակները՝ շուտով գիւղացին կըքերէ նրանց իւր կալը, որ անձրևների տակը չմնան։ Ահա աշխատասէր գիւղացին ջանասիրութեամբ

կալում է. իսկ նրա փոքր որդին խուրձն է կրում հնձատեղերից:

Խուրձը կրելոց յետոյ նա պարապ չէ մշալու. արեգակի տարութիւնը պակասում է. երկինքը շուտ-շուտ ամպում և անձրևներ է գալիս. գիւղացու ցելերը փափկացել են. շուտով ցաքը կ'սկսուի. ծանձերն էլ սկսել են զգալի կերպով կծել. երեսում է, որ ամառը վերջանում է:



152. ԱՇՆԱՆ ԿՇԱՆՆԵՐԸ

շունը գալիս է թէ չէ, ծառերի կանաչ տերևները փոքր առ փոքր գեղնում, թառամում են, մանգաղը իւր գործը վերջացնում է ոսկէնման արտերում. հովիտների երեսն կանաչ գործերը կարմրում, չորանում են. ծառերի պտուղները լցում, հասունանում են:

Աշնան նշաններն ամեն կողմից մարդու աշքին են դիպչում. այնտեղ, արևի տակ փայլերով, տատանւում է սարդի ոստայնը. այստեղ, արտերի տեղը, երեսում են մերկ ծղուներ, իսկ այգիներում որթի ոստերի վրայ կախուել են, տես, սպիտակ և կարմրախառն ողկոյզներ: Կալերում հնձած հացարոյսերը կալերում են. առաւօտները մէզը սպիտակ քալժանի նման ծածկում է կապոյտ լճակը:

Ամբողջ օրը սայլերը ճռնչում են. նրանք դաշտերից խուրձ են կրում կալը: Կալերում կամների շըխշըխկոցը հեռուից լուսում է. կոտոնկների խումբերը շղթայաձև թոշում են բարձրից, զարդարելով բնութիւնը իրանց ներդաշնակ կրկոցով և, կարծես, ասում են մեզ.

«Շոգերն անցան. պտուղները քաղեցին,  
Հացով, միզով ամբարները լցրեցին.  
Երկինքն ամպեց, քարակ անձրեւ է մարում,  
Մերկ դաշտերը եւ ծառերը ողողում:

Է՛յ-է՛յ-է՛յ,—աշուն է,

Տեսէք ինչպէս նախշուն է»:

153. ՀԱՏԻԿ

**Լ**ոյսը բացում է, շուտ արտը գնամ,  
Պատուեմ սուր խոփով եւ կուրծքը հողի.  
Իմ սիրուն հատիկ, քեզ նորան պահ տամ,  
Մինչեւ օրերը ամբան արեւի:

Թաղեմ քեզ, հատիկ, եւ դարդը քեզ հետ.  
Թէ Աստուած ուզեց, դու կանաչեցիր,  
Թող դարդը մեռնի գետնի տակ անհետ.  
Դու ինձ միկիթար կրկին տուն դարձիր:

Եւ ջերմ աղօթքով Ծիրամօր առջեւ  
Ես մոմ կը վառեմ, ես խունկ կը ծխեմ,  
Որ քեզ պարզեւ մի առատ անձրեւ,  
Որ քեզ միշտ սիրով նայէ ինդառէմ:

Բայց թէ այդ շնորհին, մեղքերիս համար,  
Արժանի ըըլինիմ, ծով կը դարձնեմ  
Ես տաք քրտինքը ծակտիս արեւա,  
Որ քեզ, ի՞մ հատիկ, ծարաւ ըթողնեմ:

Ժլիր, կանաչի ոսկէ սաւանով,  
Ժածկի իմ արտը ողջ ալէծածան,  
Նոր այն ժամանակ անուշ շըշիւնով  
Տուր ջարդուած սրտիս մի քոն հանգստեան:

154. ԱՇՈՒԵ

**Ե**րեկոյեան վերջալրախի  
ծիծեռնակները չըքացան.  
Սարեակները խումբեր կազմած  
Մեր կողմերիցը հեռացան:

Ամեն քան հանդարտ քնած է.  
Դուրսը խաւար է տիրում.  
Չոր տերեւը խշխում է  
եւ քամին դրուը ծեծում:

155. ԶՀՆՉԱԾ ԱՐՑ

**Ա**շունն սկսուեց, ծիծառն թռաւ.  
Անտառն է դատարկ, դաշտը մերկացաւ.  
Միայն դաշտումը անհունձ մնացած  
Ժխուը ու տրտում մի արտ կայ կանգնած:

Կարծես հասկերը ատում են միմեանց.  
Ի՞նչպէս մրսում ենք մննք այս ցըտի տակ.  
Շատ տիրալի է գետին խոնարհել  
եւ ատօք պսուղդ հողում թաթախել:

«Ամենայն գիշեր մեզ մօտ իշնում են  
Անցնող թռչուններն ու մեզ ուտում են.  
Գազաններն տրորում, քամին մեզ ծեծում.  
Ո՞ւր է մեր տէրը, ի՞նչ է սպասում»:

Քամին տալիս է նրանց վատ համբաւ.  
«Մահը ճեր տիրոջ երկրից վեր առաւ»:

156. ՉՈՐՍ ԵՂԲԱՐՔ



որս եղբարք են. ամեն տարի  
երկրիս վրայ ման են զալի.  
Չորսն էլ ջոկ-ջոկ ունին հասակ,  
Պարզեւներն են հազար տեսակ:

Առաջինն է պատանի,  
Բողոքոջ, տերեւ, սաղարթ ունի.  
Փայծառ տերեւ, կանաչ արօտ,  
Որոնց տղայքն են միշտ կարօտ.

Երկրորդ եղբայրն երիտասարդ,  
Տալիս է մեզ անձրեւ առատ.  
Ժաղկունք ցանում է ամեն դի,  
Յոյս է տալիս առատ հընձի:

Երրորդ եղբայրն այն չափահաս,  
Մրգերով լի ունի մի թաս.  
Բաժանում է տղոց իւր գանձ —  
Ճիրան, խնձոր, խաղող ու տանձ...

Չորրորդ եղբայրն է ծերունի,  
Ցուրտ ու խաւար շալկած ունի,  
Այզի, անտառ ամայացած,  
Դաշտ եւ արօտ ճիւնով լցուած:

ՎԵՐԱ



# F U N C T I O N

**Առաջին շրջանից —իբրև նմուշ ուսուցիչների համար**

**Արթ—արթուն.** բառի արմատը.  
**Բաղ—այգի.**  
**Զառ—արծաթաթել** (գործուածք).  
**Քառ—թոշունների** գիշերելք և գիշերելու տեղը.  
**Քաս—գաւաթ,** բաժակ.  
**Համբ—անլեզու,** լալիկ.  
**Հօտաղ—լուծը** քշող տղայ.  
**Զաւար—կորկոս** (ցորենի ու հաճարի).  
**Ճահ—յարմար,** պատշաճ. կարդ.  
**Ճաղ—սայլի** կամ անիւի մատաձե տախտակ. տախտակիայ դըռնակ (կալիտկա). գուլպայ գործելու մետաղէ կամ փայտէ չոփեր.  
**Ճիւտ—պարանոց,** վիզ.  
**Ճուտ—ձագ.**  
**Յամբ—դանդաղ,** ծանր.  
**Յօդ—անդամների** կապը, խաղը.  
**Յօտ—որթի** կտրած ճիւղը, մատը.  
**Որդ—ճիճու.**  
**Որթ—վազ,** խաղողի թուփ. հորթ.  
**Հաղ—գեր,** պարարտ.  
**Հանգ—մէզ,** մառախուղ.  
**Հանչ—չանչ** անել—բաց թաթի շարժմամբ անիծել.  
**Հոչ—չոչ** անել—ձեռն ու ոտի վրայ ման գալ.  
**Հութ—փոքրիկ** արօր միալուծ.  
**Պաղ—սառը,** հով.  
**Պող—եղջիւր.**  
**Պուտ—վայրի** ծաղիկ (վայրի խաշխաշ).  
**Ճահ—մոմակալ.** բոցավառ լոյս (մաշալա).  
**Ճինջ—իստակ.** մաքուր. պարզ.  
**Ճող—աւագ.** մեծ. դիխաւոր.  
**Սլէչ—գէնք.** միջատների խայթոցը, ժանիքը.

## ՀԱՆԵԼՈՒԿՆԵՐԻ ԲԱՑԱՏՐՈՒԹԻՒՆԸ

(Երկրորդ շրջանում)

§ 17.—ա. Օձ. բ. կրիայ.  
§ 19.—ա. Սուր և պատեան կտմ հրացան և գնդակ. բ. Կաչաղակ.  
գ. Մոլ (մոլ), որ սպիտակ ծաղկում է, կանաչ պտուղ  
բռնում, յետոյ կարմրում և ապա սեանում.

## § 21.—Մեղմահաց.

§ 28.—ա. Արև և լուսին. բ. Երկինք և աստղեր

### § 30.—Մարդ

### § 32.—Մարդու լեզու

1000 \* 1000 \* 1000 \* 1000 \* 1000 \* 1000 \* 1000 \* 1000 \* 1000

卷之三

www.bible.com

1960-61  
1961-62  
1962-63

1481-1482

the following

*Journal of the American Statistical Association*

## ԲՈՎԱՆԴԵԿՈՒԹԵԸՆ ՑԱՆԿԸ

ՆԱԽԱԿՐԹԱԿԱՆ ՎԱՐԺՈՒԹԻՒՆՆԵՐ

Հայերէն այբուբենը	4.
Նման հնչիւններ	5.
ս. դ. բառի վերջում	6.
ս. զ. շ. բաղաձայնների հետ կ.	6.

### ՇՐՋԱՆ ԱՌԱՋԻՆ (ԵՐԵՍ 8—28).

- 1, Ուսումնարանում. 2, Այբբենարան. 3, Կարդալ և գրել. 4, Մըջիւնը և աղաւնին. 5, Ճնճղուկներ \* ժողովր. բանաստ. 6, Պառաւն ու հաւը. 7, Աքաղաղն ու հաւը \* ժողովր. բանաստ. 8, Ագռաւն ու աղաւնին. Կոռունկներ \* ժողովր. բանաստ. 9, Իմ ուսումնարան գնալը. 10, Տիսուր երեխայ, \* Գ.-Քաթիպա. 11, Աղօթը և աշխատանք. 12, Հզօր ճար, \* Գ.-Քաթիպա. 13, Առաւոտեան ճառագայթները. 14, Հրաւէր. \* 15, Ամեն բան իրան տեղը. 16, Օձի գլուխը և պոչը. 17, Հանելուկներ. 18, Վարդենին ու փուշը. Մելք. 19, Հանելուկներ. 20, Մեղու. 21, Հանելուկ. 22, Լաւ ընկեր. 23, Մանուշակ. \* Գ.-Քաթիպա. 24, Ո՞վ է քիթը ցից պահում. 25, Արեին. \* 26, Ստախու. 27, Լուսինը և արեւը \* ժող. բանաս. 28, Հանելուկներ. 29, Նապաստակը և ողնին. 30, Հանելուկ. 31, Փիդ. 32, Հանելուկ. 33, Առիւծը, արջը և աղուէսը. 34, Հրաւէր գարնան. \* Գ.-Քաթիպա. 35, Առիւծը և զորտը. 36, Գարուն \* Ընծայեցի. 37, Ոյժն իրաւոնք չէ. 38, Սուրբ Կարապետ \* ժող. բանաստ. 39, Մանկական խաղ \*.

### ՇՐՋԱՆ ԵՐԿՐՈՐԴ (ԵՐԵՍ 29—48).

- 40, Պապը. 41, Մեր ընտանիքը. 42, Զաւակների միսիթարանքը. 43, Որքի օրը սկ է. 44, Օրօրոցի երգ \* Գ.-Քաթիպա. 45, Հինգերորդ պատուիրանք. 46, Հրաշալի խոտ. 47, Պարնան Կարապետ (Ծիծեռնակ). 48, Ծիծեռնակ. 49, Մեր տունը. 50, Ի՞նչպէս են լինում տները. 51, Խընիթ. 52, Պարտէզ. \* 53, Այգի. 54, Երկրագործը և

ծաղիկը. 55, Վարդ. 56, Կակաչ. 57, Մորի և կակաչ. 58, Ծաղիկների երգը \*. 59, Բոյսերի տեսակները. 60, Գարնանային առաւօտ. 61, Երաշտ. 62, Բոյսերի կերակուրը. 63, Ընկոյդ և դդում. 64, Ծառերի վէճը. 65, Ուրիշին հոր փորողն ինքը մէջը կընկնի:

### ՇՐՋԱՆ ԵՐՐՈՐԴ (ԵՐԵՍ 49—75).

66, Ծնիկ. 67, Որս. 68, Կատու. 69, Մկան համար կատուն էլ գաղան է. 70, Ինչ կըբրդես, այն կ'ուտես. 71, Թոշնակ \*. 72, Զի. 73, Տիսուր ձի. 74, Պայտ. 75, Կով 76, Կորած հորթ \* և. Աղայեանց. 77, Իթել ու հարել \* և. Արարատական. 78, Ոչսար. 79, Գառը գայի մորթով \*. 80, Գայի արտաստոքը. 81, Խող. 82, Խողը կաղնի ծառի տակ. \* 83, Կենդանիների վէճը. 84, Սազեր. 85, Աղաւնիներ. 86, Ուրիշի վրայ մի ծիծաղիլ. 87, Դեղձանիկը և Սոխակը. 88, Երգ Պանդուխտ պատանեկի \*. 89, Կաղամբի թիթեռ. 90, Զատիկ. 91, Թիթեռ և մանուկ. \* 92, Հրեղէն ձի.

### ՇՐՋԱՆ ՉՈՐՐՈՐԴ (ԵՐԵՍ 76—101).

93, Դաշտ և ուսումնարան. 94, Գրատախտակ և քարետախտակ. 95, Կափճ. 96, Հացն ուտելով, բանն անելով. 97, Մատիտ. 98, Գորառը և եղը. 99, Մետին. 100, Առիւծը և մուկը. 101, Սպունդ. 102, Աղ և սպունդ. 103, Փորձանք ու պատուհաս. 104, Հրաղաց \* 105, Հանելուկ \* և. Արարատական. 106, Ուտելիք և խմելիք. 107, Կրակ. 108, Դարբին \* և. Կ. Մելիք-Շահն. 109, Օդ. 110, Վուշի մշակումն. 111, Ի՞նչպէս է մարդս ման գալիս երկրիս վրայ. 112, Ճանապարհորդութիւն առանց ձիերի. 113, Երկաթուղի \* 114, Ի՞նչպէս են ճանապարհորդում ջրի վրայ. 115, Քամի և նաւեր \* 116, Հրիերեսին անիւներով. 117, Զարմանակ մշակ. \* 118, Մարդիկ ինչպէս են թռչում սդի մէջ. 119, Երկու քոյր \* Գ.-Քաթիպա:

### ՇՐՋԱՆ ՀԻՆԳԵՐՈՐԴ (ԵՐԵՍ 102—137).

120, Ի՞նչ արեց ձմեռը. 121, Ալեոր պասի հրամանները. 122, Զիւն \* Գ.-Քաթիպա. 123, Յունվարի մէկին. 124, Յուն-

վարի հնգին. 125, Յունվարի վեցին. 126, Ակնկալութիւն  
դարնան \* 127, Պասի առաջին երկուշաբթին. 128, Գարուն. \*  
129, Մանկական յիշողութիւնից (ծաղկազարդ կեր). 130, Աւագ  
հինգշաբթի. 131, Աւագ ուրբաթ երեկոյին. 132, Գարնանային ջրեր.\*  
133, Սուրբ Յարութիւն. 134, Զատիկ. \* 135, Քրիստոս յարեաւ \*  
Գ.-Քաթիպա. 136, Մանկական յիշողութիւնից (մեռելոցք). 137, Եր-  
կրագործի երգը \*. 138, Մայիսուայ առաւօտ. 139, Ամառ. \*  
140, Ամարային առաւօտ. 141, Զուկը. 142, Ուռենի. \* 143, Ամառը  
յարգագետիններում. 144, Ամառը դաշտում. 145, Ամառը ան-  
տառում. 146, Արձագանք \*. 147, Շինականների առաւօտեան  
երգը. 148, Թաժայ հայ. 149, Հունձ. 150, Զըի ճանապարհորդու-  
թիւնը. 151, Մանկական յիշողութիւնից (օգոստոս). 152, Աշնան  
նշանները. 153, Հատիկ \* Յ. Յովհաննիսեան. 154, Աշուն.  
155, Հանձած արտ. \* 156, Հորս եղբարք \* Գ.-Քաթիպա:

### Գրքի մէջ գրած են, ի միջի այլոց, հետե- ւեալ պատկերները՝

1, Գրքի սկզբում՝ Յիսուսն օրհնում է մանուկներին:

2, Երես 28. Մի պատկեր ընտանեկան կեանքից. մա-  
նումները զջապատում են վշտացած մօրը և աշխատում ու  
յաջողում են վարատել նրա վիշտը:

3, Երես 72. Հրեղէն ձիու գաղափարական պատկերը:

4, Երես 75. Յովհաննէս Մկրտիչը և Աստուծոյ գառը:

5, Երես 106. Քրիստոսի ծննդեան պատկերը:

6, Երես 107. Քրիստոսի մկրտութեան պատկերը:


7, Երես 110. Քրիստոսի Երուսալէմ մտնելը:

8, Երես 112. Քրիստոսը խաչի վերայ:

9, Երես 115. Քրիստոսի Յարութեան պատկերը

\*.) Աստղաներ ունեցողները չափաբերական գըուածքներ են:

\*\*) 114 և 115 §-ները կրկնուած են Երկու անգամ:



2006-01-01 19:02:01 - 00:00:00:00.000000000

Frontal commissal T. crassus (Wolff)

3. 11/1949, 10/1949, 11/1949

БИБЛИОТЕКА  
ИНСТИТУТА  
ВОСТОЧНЫХ ЯЗЫКОВ  
Академии Наук

ՆԻԿՈՂԱՅՈՍ ՏԵՐ-ՂԵՒԹԻՒՆԴԵԱՆԻ ՀՐԱՄԱՆԿՈՒԹԻՒՆԵՐԸ

1.	Աղայիանց՝ Աւագումն Մայրենի Լեզուի, ա. տարի . . .	25 կ.
2.	, Աւագումն Մայրենի Լեզուի, թ. տարի . . .	40 կ.
3.	, Աւագումն Մայրենի Լեզուի, դ. տարի . . .	55 կ.
4.	Գէորգիկեան՝ Փողովածու թուր. խնդիրների՝ Ա.մք. թուեր 40 կ.	
5.	, , , , կոսորտակ թուեր 50 կ.	
6.	Թումանեանց՝ Նաчальная Книга Русского Языка.	25 կ.
7.	Մանդինեան՝ Նահապետական Աշխարհ . . .	60 կ.
8.	, Բնտանեկան Աշխարհ . . .	25 կ.
9.	, Գիւցազնական Աշխարհ . . .	30 կ.
10.	Հենչելի՝ բանաւոր և զրաւոր հաշուելու . . .	
	, խնդիրներ, առաջին և երկրորդ տարի . . .	40 կ.
11.	Բանաւոր և զրաւոր հաշուելու խնդ. գ. տարի 50 կ.	
12.	Տէր-Ղենդիեան՝ Մայրենի Լեզու, առաջին տարի . . .	35 կ.
13.	, Մայրենի Լեզու, երկրորդ տարի . . .	40 կ.
14.	, Մայրենի Լեզու, երրորդ տարի . . .	50 կ.
15.	, Մայրենի Լեզու, չորրորդ տարի . . .	65 կ.
16.	Մայր. լեզուի բաց. ձեռնարկը, ա. տարսուայ ձրի . . .	
	Մայրենի Լեզուի քերականութ. տարերքը,	
17.	մասն առաջին. . . . .	30 կ.
18.	Մայրենի լեզուի քերականութեան տարերքը, . . . . .	
	մասն երկրորդ. . . . .	40 կ.
19.	, Հայորդի՝ Սրբազան պատմ. Հին Կտակ. . .	50 կ.
20.	, Սրբազան պատմութիւն Նոր Կտակարանի . . .	50 կ.

Գրքերի վաճառամքը կանխիկ է: Ապաս իկ սօսքի գերք չե՞նք ուղարկում, բայց ցանկացողների համար զրքերի արժէքը կարող է նք վերադիր անել, որ նորա վճարեն այն փոստային վարչութեանը կամ կանագործութեանը, որի վջացով պետք ստանան լրեւե՛ ծրաբը կամ սնդուկը:

Դիմել Նիկոլայ Տեր-Գևոնդյան. Տիֆլիս.

Հասցէս փոստատանի յայսի է:

*Հայ*

2013

4579

ՀՀ Ազգային գրադարան



NL0062829

